ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ Ղ.

ՅՈՒՐԱՅԻՆ-ՕՏԱՐ. ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱԶԱՐ ԱԼԲԵՐՏԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՅՈՒՐԱՅԻՆ-ՕՏԱՐ. ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 316.7
ԳՄԴ 60.56
Ա 791

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի գիտական խորհուրդը:

Գրախոսներ՝
փ. գ. դ., պրոֆ. **Է. Ա. Հարությունյան**
փ. գ. թ., դոց. **Ա. Լ. Ղարագուլյան**

Ավետիսյան Ղազար Ալբերտի
Ա 791 Յուրային-օտար. սոցիոմշակութային համատեքստ/
Ղ. Ա. Ավետիսյան: - Եր., ԵՊՀ հրատ., 2019, 194 էջ:

Մենագրությունը նվիրված է սոցիոմշակութային իրականության և ինքնության կառուցարկման, ինչպես նաև համաշխարհայնացման համատեքստում միջմշակութային հաղորդակցման, երկխոսության և բազմամշակութային հասարակության ձևավորման գործընթացներում յուրայինի և օտարի փոխհարաբերության և գործառական նշանակության վերլուծությանն ու պարզաբանմանը:

Մենագրությունը հասցեագրված է հասարակական գիտություններիր մասնագետներին և բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են ժամանակակից գլոբալ սոցիոմշակութային փոխակերպումներում մարդկության միասնականացման և տարբաժանման հիմնախնդիրներով:

ՀՏԴ 316.7
ԳՄԴ 60.56

ISBN 978-5-8084-2363-3

© ԵՊՀ հրատ., 2019
© Ավետիսյան Ղ. Ա., 2019

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գլոբալ գործընթացները որակական նոր մակարդակի են հասցրել միջմշակութային փոխհարաբերություններն ու փոխներթափանցումները՝ հարուցելով սոցիոմշակութային, քաղաքական ու քաղաքակրթական մի շարք մարտահրավերներ: Այս համատեքստում տեսական ու գործնական նոր հնչեղություն է ստացել «յուրայինի» և «օտարի» փոխհարաբերության հիմնահարցը:

«Յուրայինի» և «օտարի» փոխհարաբերությունը սոցիալական համակարգի տարանջատման պատմականորեն հնագույն այն ձևն է, որը ծառայում է որպես ծանոթի և անծանոթի, սովորականի և անսովորի, բարեկամականի և թշնամականի, հեռավորի և մերձավորի տարբաժանման հիմք: Համաշխարհային պատմության փորձը ցույց է տալիս, որ «յուրային-օտար» տարանջատումը նույնքան հին է, որքան մարդկության պատմությունը, ինչն արտահայտվել է պատերազմների, բախումների, նվաճողական արշավների, միսիոներության, միգրացիոն տեղաշարժերի և այլ ձևերով: Այս փոխհարաբերությունն ի սկզբանե ունեցել է խորը առասպելաբանական արմատներ: «Յուրայինի» և «օտարի» հիմքի վրա սոցիալական աշխարհի տարբաժանումը կատարվում է ոչ միայն տարածական հարաբերություններում, այլև սոցիալական, այսինքն՝ սահմանազատումը տեղի է ունենում ըստ ընտանեկան կապերի, ազգակցականության, ազգային և կրոնական պատկանելիության, բարոյական կողմնորոշիչների, համոզմունքների, կուսակցական դիրքորոշումների և այլն:

«Յուրայինի» սահմանները որոշվում են «օտարի» սահմանների գիտակցման միջոցով՝ և հակառակը: Այս առումով նույնականացման գործընթացում «յուրային-օտար» երկվության դերը շարունակում է պահանջված լինել ժամանակակից աշխարհում, առավել ևս, որ արդի հասարակություններում գնալով սրվում է մարդու ինքնորոշման խնդիրը:

Դիտարկվող փոխհարաբերության սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունը հատկապես կարևորվում է տարբեր գիտությունների (պատմություն, բանասիրություն, քաղաքագիտություն, սոցիոլոգիա, մշակութաբանություն) շրջանակում կուտակված նյութի ընդհանրացման և իմաստավորման համատեքստում: Այս առնչությամբ անհրաժեշտություն է առաջացել նորովի մեկնաբանել «յուրային-օտար» փոխհարաբերության էթնոմշակութային, մարդաբանական և քաղաքակրթական տեսանկյունները:

Համաշխարհայնացման, ինտեգրման, բազմամշակութային աշխարհի, բազմակարծության միտումները գնալով աճում են, և ծագում է «յուրային-օտար» փոխհարաբերության դրսևորումների ուսումնասիրության անհրաժեշտություն: Ինտեգրման և համաշխարհայնացման գործընթացները վաղուց ներթափանցել են մարդկային կենսագործունեության տարբեր ոլորտներ, ինչի հետևանքով աստիճանաբար անհետանում են նաև «յուրայինի» և «օտարի» միջև ավանդական սահմանները՝ հարուցելով ազգային մշակույթի և ավանդույթների պահպանման ու փոխակերպման խնդիրներ:

«Յուրային-օտար» տարբաժանումն առանձնահատուկ կերպով դրսևորվում է նաև աշխարհում ընթացող զանգվածային միգրացիոն տեղաշարժերում, որոնց արդյունքում սրվում են

բնիկների (յուրային) և ներգաղթյալների (օտար) միջև փոխհարաբերությունները: Դրանք երբեմն դրսևորվում են բախումներով ու այլատյացությամբ՝ ձևավորելով «պետություններ պետությունների ներսում», հսկայական անկլավներ, որտեղ ապրում են ոչ տեղացիներ կամ բնիկներ, ինչը կասկածի տակ է դնում բազմամշակութային հասարակություն ստեղծելու նախագծի իրականացման հնարավորությունը:

«Յուրայինի» և «օտարի» փոխհարաբերության տեսական իմաստավորման հարցն առանձնահատուկ կարևորություն է ստանում նաև քաղաքացիական պատերազմների, քաղաքական կոնֆլիկտների, էթնոսոցիալական լարված փոխհարաբերությունների, կրոնական բախումների համատեքստում: Այս իրողությունը վկայում է, որ ժամանակակից աշխարհում «յուրայինի» և «օտարի» հակադրման և համագործակցության յուրահատկությունների բացահայտումն անհնար է հանդուրժողականության համատեքստից դուրս: Արդի փոխակերպումների պայմաններում հանդուրժողականությունը և՛ արժեքային կողմնորոշիչ է, և՛ միջմշակութային փոխհարաբերությունների նորմ, և՛ քաղաքական անհրաժեշտություն: Այլ կերպ ասած՝ հանդուրժողականությունը ժամանակակից մշակույթի անբաժան մասն է, որի միջոցով հնարավոր են դառնում «յուրայինի» և «օտարի» փոխհարաբերություններում կոնֆլիկտների հաղթահարումը և համակեցության հաստատումը:

ԳԼՈՒԽ 1
«ՅՈՒՐԱՅԻՆԸ» ԵՎ «ՕՏԱՐԸ» ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1.1. «ՅՈՒՐԱՅԻՆԻ» ԵՎ «ՕՏԱՐԻ» ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ապրելու և նպատակադիր գործունեություն ծավալելու համար մարդը պարտավոր է մշտապես ճանաչել սոցիոմշակութային այն իրականությունը, որը երբեմն անվանում են կենսաշխարհ: Ամեն անգամ անհայտ, անհասկանալի և օտար երևույթների բախվելիս մարդը փորձում է ճանաչել և գնահատել այդ ամենը՝ դրանք անցկացնելով «յուրայինի և օտարի» մասին արդեն ունեցած ոսպնյակի միջով: Ընդ որում՝ աշխարհում մարդու կողմնորոշման ելակետը ոչ այնքան ինքն է, որքան ուրիշը, օտարը[1]: Ավելին՝ ամեն մի մշակույթ աշխարհը բաժանում է ներքին տարածության (մեր) և արտաքին տարածության (նրանց), ինչը վկայում է, որ աշխարհի տարածական մոդելի հիմքում ընկած է «յուրայինի» և «օտարի» երկվությունը, ու նրանց միջև ընկած սահմանը կատարում է «յուրայինի» և «օտարի» ինքնությունների տարբերակման մեխանիզմի դեր[2]:

Մարդու կողմից աշխարհի յուրացումը սկսվում է իրեն անմիջապես շրջապատող միջավայրից: Յուրացման ընթացքում կենսաշխարհը ձեռք է բերում արժեքային իմաստ ու նշանակու-

---

[1] Տե՛ս **Цивьян Т. В.,** Взгляд на себя через посредника: «Себя, как в зеркале я вижу.»:// Семиотические путешествия, СПб, «Иван Лимбах», 2001, էջ 12:

2 Տե՛ս **Лотман Ю. М.,** Внутри мыслящих миров. Человек-текст-семиосфера-история, М., «Языки русской культуры», 1996, էջ 175-176:

թյուն: Այն ամենը, ինչն արժեքավոր է ու իմաստալից, հարազատ է և յուրային, իսկ մնացածը՝ թշնամի և օտար: Այս իմաստով իրականության յուրացման և իմաստավորման հարցում «յուրային» և «օտար» հասկացություններն առանձնահատուկ տեղ են գրավում և ինչ-որ առումով ժամանակակից սոցիոմշակութային քաղաքականության աշխարհայացքային միջուկն են. առավել ևս, որ սոցիալական համակարգերի (ազգային, քաղաքական, քաղաքացիական և այլն) ներքին համախմբման համար շատ կարևոր է «թշնամու» կերպարը: Ժամանակակից աշխարհում «թշնամու» սոցիոմշակութային կերպարը երբեմն ավելի ազդեցիկ գործոն է, քան համոզմունքն ու աշխարհայացքային կողմնորոշումը, քանի որ այն ունի վառ արտահայտված բարոյական և սոցիալ-հոգեբանական երանգավորում: Բավական է նկատել, որ «յուրայինի» և «օտարի» բաժանված աշխարհում խորը գիտելիքներ ու համոզմունքներ պետք չեն բարու և չարի, անցյալի և ներկայի, սերունդների փոխհարաբերության, բարեկամի և թշնամու սահմանումները որոշելու համար: Ամեն ինչ պարզ է ու ակնհայտ. «յուրայինն» ու «օտարը» դարձել են «լավն» ու «վատը» տարբերակելու մարդաբանական հաստատուններ և իրենցով կանխորոշում են գոյատևման, ինքնության ու հոգեկերտվածքի սոցիոմշակութային սահմանները[3]:

«Յուրային» և «օտար» հասկացություններն իրենց կիրառելիության տեսանկյունից և մեթոդաբանական նշանակությամբ համընդհանուր են: Այսինքն՝ այն, ինչը վերաբերում է մարդուն, մարդկային, խմբային, ազգային, ընկերային և նման փոխհարաբերություններին, միշտ կարելի է դիտարկել որպես յուրային–

[3] Տե՛ս **Хоружий С. С.,** Человек и его три дольных удела. Новая антропология на базе древнего опыта// Вопросы философии, М., «Наука», 2003, № 1, էջ 39:

օտար փոխհարաբերություն: Վերջինս հիմք է թե՛ մշակույթների մերձեցման, թե՛ դրանց սահմանազատման համար: Մշակույթի համակարգն ընդգրկում է մարդկային և հասարակական գործունեության բոլոր ոլորտները, ուստի «յուրային» և «օտար» կատեգորիաները նպատակահարմար է դիտարկել այդ ոլորտներում առանձին–առանձին:

Անդրադարձը «յուրայինի» և «օտարի» ձևավորման արմատներին թույլ է տալիս հասկանալ դրանց նախնական պարզագույն ձևերի առանձնահատկությունները: Համակեցության և համատեղ գործունեության արդյունքում զարգանում են սեփական հանրույթի զգացումն ու գիտակցումը: Ցանկացած ազգացեղային, ընկերային հանրույթ սկսում է գիտակցել իր սահմաններն այլ հանրույթներին հակադրվելու ճանապարհով: Դժվար է պատկերացնել մարդկային այնպիսի հանրույթ, որն իր գոյության ընթացքում որևէ կերպ չի առնչվում իր նման կամ իրենից լիովին տարբեր մեկ այլ հանրույթի հետ: Քաղաքակրթությունը զարգացել է միջմշակութային, միջհանրութային շփումների շնորհիվ, որոնց ընթացքում հանդիպել են «յուրայինը» և «օտարը» (կամ «ուրիշը»): Հնագույն հանրույթներն էնդոգամ հարաբերությունները փորձում էին փոխարինել էկզոգամ հարաբերություններով, իսկ «օտար» խմբի բացակայության պարագայում՝ դուալ էկզոգամ հարաբերություններով[4]:

Պատկերացնենք երկու նախնադարյան ցեղ. եթե նրանք երբեք միմյանց չհանդիպեին, խմբի անդամը երբեք չէր զգա, որ պատկանում է որևէ հանրույթի: Սուբյեկտիվ «յուրայինի» ի հայտ գալու նախապայմանը որևէ «օտարի» հետ հանդիպումն ու նրա-

---

[4] Տե՛ս **Семенов Ю. И.,** На заре человеческой истории, М., «Мысль», 1989, էջ 43-44:

նից զատումն էր: Այլ կերպ ասած՝ հարցը սուբյեկտիվ հոգեբանական հարթությունում դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ «օտարի» գիտակցումը նախորդում է «յուրայինի» գիտակցմանը: Այսինքն՝ ինքնագիտակցության ձևավորման հիմքում ուրիշին գիտակցելն է: Սոցիալական հոգեբանության առաջին ակտը պետք է համարել մարդու գլխում օտարների մասին պատկերացումների առաջ գալը: Սա վերաբերում է ոչ միայն նախնադարյան հասարակությանը, այլև պատմության տարբեր դարաշրջաններին: Հնարավոր է, որ «յուրայինի» շատ թույլ գիտակցման և նույնիսկ դրա բացակայության պայմաններում, միևնույն ժամանակ, գոյություն ունենա «օտարի» մասին հստակ արտահայտված գիտակցություն: «Օտարները» ոչ թե «յուրային» չեն, այլ, ընդհակառակը, «յուրայինը» «ոչ օտարն» է: Օտարի գոյության զգացումն ինքնորոշվելու, նրանցից սահմանազատվելու, որպես «յուրային» առանձնանալու ցանկություն է առաջացնում[5]:

Շփման և փոխհարաբերությունների արդյունքում ծանրության կենտրոնն «օտարներից» սկսում է տեղաշարժվել «յուրայինների» կողմը: Այստեղ «յուրայինը» դառնում է մարդկային ցանկացած հանրույթի ընկալման համընդհանուր հոգեբանական ձև:

Մարդկային առաջին կոլեկտիվների գիտակցության մեջ ամեն ինչ բաժանվում է յուրայինի և օտարի: Բարոյական գիտակցության նախապատմությունը կապված է մենքի և ոչ–մենքի, յուրայինի և օտարի միջև գտնվող հակասության գիտակցման հետ: Դա կարելի է տեսնել մի շարք լեզուների ստուգաբանական վերլուծություններում. օրինակ՝ որոշ հնդեվրոպական լե-

---

[5] Տե՛ս **Поршнев Б. Ф.**, Социальная психология и история. М., «Наука», 1966, էջ 81:

զուներում «su» արմատը, որը նշանակում է «բարիք», նույնական է «su»-ի՝ լատինական «մեր»–ի հետ[6]:

Նախնադարյան խմբերում «յուրայինը» և «օտարը» հակադրվում են, և տվյալ խմբի կողմից յուրայինը դիտարկվում է որպես բարիք, իսկ օտարը՝ չարիք: Պատահական չէ, որ մարդկային հանրույթների ձևավորման վաղ շրջանում ցեղի կամ խմբի անդամին հասցված վիրավորանքն ընկալվում էր որպես ողջ ցեղին հասցված վիրավորանք և դիտարկվում որպես օտարի՝ չարի գործողություն: Ընդ որում՝ չարը կարող էր լինել ոչ միայն մարդը կամ նրանց խումբը, այլև այս կամ այն դիցաբանական կերպարը, բնական երևույթները, բնության տարերքը, որոնց վերագրվում էր մի ինչ-որ չար նախասկզբի կամ աստվածության պատկանելությունը: Բ. Պորշնևը նշում է. «Հետաքրքրքրական է, որ նախնադարյան հասարակությունում «յուրայիններ-ը» բառի բուն իմաստով միշտ հասկացվում էին «մարդիկ», այսինքն՝ մարդիկ ընդհանրապես, այն դեպքում, երբ «օտարները» հասկացվում էին ոչ այնքան մարդիկ: Բազմաթիվ ցեղերի ու ժողովուրդների ինքնանվանումը թարգմանաբար նշանակում է ուղղակի «մարդիկ»»[7]: Այսպիսով՝ նախնադարյան հասարակարգում յուրայինը նույնացվում է բարու, իսկ օտարը՝ չարի հետ[8]:

Դիտարկելով նախորդ դարերում տեղի ունեցած բռնությունների, պատերազմների, մարդկանց զանգվածային ոչնչացման բազմաթիվ օրինակներ՝ կարելի է համոզվել ոչ միայն նրանում, որ արդի քաղաքակրթությունը շատ հեռու է բարոյական կատարելությունից, այլ նաև նրանում, որ այն չի էլ փորձում դուրս գալ

---

[6] Տե՛ս **Вичев В.,** Мораль и социальная психика. М., «Прогресс», 1978, էջ 107:

[7] **Поршнев Б. Ф.**, նշվ. աշխ., էջ 82:

[8] Տե՛ս **Леви-Строс К.,** Первобытное мышление, «Республика», 1994, էջ 244:

այդ «դժոխքից»: Համաշխարհային պատերազմները, ցեղասպանությունների սարսափները, որոնց ականատեսը դարձավ 20-րդ դարը, զորեղ փաստարկներ տվեցին նոր շրջանից ներշնչված ռացիոնալիստական համոզմունքների հակառակորդներին: Իսկ սպառնացող բնական աղետներն ու աշխարհաքաղաքական գործընթացները, որոնք կարծես թե հիմնվում էին բնագիտական ու հասարակագիտական տեսական ձեռքբերումների վրա, էլ ավելի կասկածելի դարձրեցին մարդկության բարոյական առաջընթացի հարցը: Եվ ինչպես նշում է Ա. Նազարեթյանը, «Համընդհանուր դրույթ դարձավ այն դատողությունը, որ «խելքը» և «բարիքը» միմյանցից անկախ երևույթներ են, ավելին, երբեմն՝ նույնիսկ իրար օտար են ու հակադիր»[9]:

Բարոյականության հիմնական և գլխավոր խնդիրներից է «օտարի» (ուրիշի) հանդեպ վերաբերմունքի հարցը: Ավելին՝ «օտարի» բացակայության դեպքում կբացակայի նաև բարոյականությունը: Ու. Էկոն նշում է, որ «Բարոյական (էթիկական) մոտեցումն առաջ է գալիս, երբ բեմ է դուրս գալիս «օտարը»: Ցանկացած օրենք, ինչպես բարոյական, այնպես էլ իրավական, միշտ կարգավորում է միջանձնային հարաբերությունները»[10]: Այստեղ շատ կարևոր է «ուրիշի», «օտարի», «ոչ յուրայինի» ընկալման հարցը:

Ընդհանրապես «օտարին» տրվում են ամենատարբեր բնորոշումներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- «օտարը»՝ որպես ոչ տեղացի, հարազատ մշակույթի սահմաններից դուրս գտնվող,

---

[9] **Назаретян А. П.,** Историческая эволюция морали: прогресс или регресс? // Вопросы философии, М., «Наука» 1992. N 3, с. 82.

[10] **Эко У.,** Пять эссе на тему этики. С-П., «Симпозиум», 2005, с. 14.

- «օտարը»՝ որպես տարօրինակ, անսովոր, սովորական միջավայրին հակադրվող,
- «օտարը»՝ որպես անծանոթ, անհայտ և ճանաչողությանն անհասանելի,
- «օտարը»՝ որպես գերբնական, ամենակարող, որի նկատմամբ մարդն անզոր է,
- «օտարը»՝ որպես կյանքին սպառնացող, չարագործ[11]:

«Օտարի» այս վերջին բնորոշումն առավել տարածված է և ընկած է ցանկացած կոնֆլիկտի գաղափարական ձևակերպման հիմքում: Այստեղ օտարը նույնացվում է չարիքի, թշնամու հետ, արժանանում է, մեղմ ասած, ոչ դրական գնահատականի՝ ստանալով հնարավոր բոլոր բացասական բնութագրումները: Գոյություն ունեն մարդաբանական ու սոցիոմշակութային մի շարք գործոններ, որոնք հիմք են «յուրայինների» ու «օտարների» փոխհարաբերության ագրեսիվ ու ապակառուցողական ձևի առաջացման համար:

Մարդկային գործունեությունն ապահովող ինտելեկտն իր գենեզիսով ու հիմնական գործառույթներից մեկով մարդկային ագրեսիայի և ապակառուցողական գործունեության գործիք է: Այս դատողության հիմնավորումը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. կենդանի օրգանիզմն իրենից ներկայացնում է մի համակարգ, որն աշխարհի հետ գտնվում է կայուն անհավասարակշռության մեջ, այսինքն՝ այն իր գոյությունը պահպանելու համար անընդհատ կատարում է միջավայրի ճնշմանը հակադրվող աշխատանք: Այլ կերպ ասած՝ արտաքին միջավայրի և կենդանի օրգանիզմի կայուն պայքարը վերջինիս գոյության նա-

---

[11] Տե՛ս **Садохин А. П.,** Межкультурная коммуникация, М., «Альфа М», «ИНФРА-М», 2008, էջ 61-62:

խապայմանն է: Այդ աշխատանքն էլ հենց անվանվում է կենսագործունեության գործընթաց: Միաժամանակ ֆիզիկայում անդարձելիության հիմնական օրենքը վկայում է, որ համակարգում հակաէնթրոպիական գործընթացները հնարավոր են միայն այլ համակարգում էնթրոպիայի աճի հաշվին: Հետևաբար՝ օրգանիզմի ինքնաստեղծագործական աշխատանքը պահանջում է էներգիայի օգտագործում, որը ստացվում է այլ համակարգերի կործանումից: Կոպիտ ասած՝ ապրել նշանակում է կործանել:

Բույսերի մակարդակում այլ համակարգերից էներգիայի ստացումն անվանվում է ֆոտոսինթեզ, որի ընթացքում արևի էներգիան կլանվում և վերածվում է տվյալ համակարգի կենսագործունեության համար անհրաժեշտ էներգիայի:

Առավել բարդ կենդանի օրգանիզմներն այսպիսի հնարավորությունից զուրկ են և հակաէնթրոպիական աշխատանքի համար վերցնում են ուրիշ օրգանիզմների էներգիան: Վերլուծությունները ցույց են տալիս, որ անհավասարակշիռ գործընթացը կայուն է այն դեպքում, երբ այն անհրաժեշտ բարդությամբ է կապված առարկայական կառուցվածքին: Որքան ավելի բարդ է միջավայրը, իսկ դրան համապատասխան՝ ազատ էներգիայի համար խնդիրներն ու մրցակցության պայմանները, այնքան ավելի դինամիկ աշխարհի մոդել է հարկավոր՝ որպես վարքի ղեկավարման միջոց[12]: Այս իմաստով ինտելեկտը հակաէնթրոպիական ակտիվության կարգավորող գործիք է, որի նշանակությունը մի օրգանիզմից ստացվող էներգիայի ազատ ու հուսալի հոսքի ապահովումն է դեպի մեկ այլ օրգանիզմ: Դրա համար այն կողմնորոշված է դեպի ագրեսիվ գործողություններ ու, դրանով իսկ, ինքնապաշտպանություն: Այստեղից կարելի է եզրա-

[12] Տե՛ս **Назаретян А. П.,** նշվ. աշխ., էջ 83-85:

կացնել, որ ինտելեկտն ինչ-որ չափով գենետիկորեն կողմնորոշված է դեպի ագրեսիա և կործանիչ գործունեության իրականացում:

Մարդկային ապակառուցողական վարքի հիմքում ընկած են ոչ միայն բնական-կենսաբանական, այլև սոցիալական գործոններ: Ի տարբերություն կենդանիների՝ մարդը ձևավորվել է ոչ միայն կենսաբանական, այլև սոցիոմշակութային էվոլյուցիոն գործընթացների արդյունքում: Մշակութային էվոլյուցիան մարդու առանձնահատուկ հատկությունն է, որը մարդուն առանձնացնում է մնացած կենդանի էակներից[13]: Սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչները նման են կենսաբանորեն, սակայն տարբերվում են միմյանցից մշակութային հարաբերություններում: Այդ տարբերությունը հաճախ դառնում է մշակութային այլ բովանդակության կրողի՝ «օտարի» դեմ ուղղված կործանարար վարքի պատճառ: Այլ կերպ ասած՝ մարդու ապակառուցողական գործունեության հիմքում տարբեր մշակույթների անհամապատասխանություններն են:

Տարբեր մշակույթներ ունեցող խմբերն առանձնանում էին դեռևս նախնադարյան հասարակարգում: Վաղ ժամանակներից սկսած նկատելի է «մենք-նրանք» հակադրությունը, որտեղ «մենքը» յուրայինների մի ինչ-որ հանրույթ է՝ օժտված մարդկային բարձր հատկություններով ու որակներով, իսկ «նրանք»՝ ոչ-մարդ «օտարներ»:

Մարդկության զարգացման վաղ շրջանում, երբ մարդիկ ապրում էին ցեղախմբերով, ագրեսիվությունն ուղղվում էր ոչ միայն բնական, այլև սոցիալական երևույթների դեմ: Ագրեսիային և ապակառուցողական գործունեությանը հակադրվում էր ներ-

---

[13] Տե՛ս **Кууси П.**, Этот человеческий мир. М., «Прогресс», 1988, էջ 56:

ցեղային համերաշխությունը: «Օտարների»՝ այլ ցեղերի ներկայացուցիչների հանդեպ էմոցիոնալ մակարդակում դրսևորվող թշնամանքն ու ատելությունը ցեղի ներսում փոխարինվում են «յուրայինների» նկատմամբ համակրանքով և հոգատարությամբ: Համերաշխությունը բնորոշ էր միայն ներցեղային հարաբերություններին, իսկ միջցեղային հարաբերություններում գերակշռում էր չարամիտ, թշնամական մթնոլորտը: «Օտարներն» ընկալվում էին որպես կենսաբանական այլ տեսակի ներկայացուցիչներ և համարվում էին վտանգի աղբյուր (բոլոր հնարավոր վտանգներից ամենավտանգավորը)՝ ենթարկվելով ոչնչացման, ինչի արդյունքում երբեմն ծառայում էին որպես սնունդ: Հատկանշական է, որ անընդունելի էր համարվում «օտարի» նկատմամբ խղճահարություն արտահայտող վերաբերմունքի ցանկացած դրսևորում[14]: «Յուրայինի» (որպես ճշմարիտ մարդու) և «օտարի» (որպես ոչ մարդու) մասին պատկերացումները հետագայում դարձան «յուրայինների» ընտրյալ լինելու հայեցակարգի ձևավորման նախադրյալ, ըստ որի՝ տվյալ ցեղը և նրա ներկայացուցիչներն Աստծո կամ աստվածների ընտրյալներն են և, հետևաբար, առավելություն ունեն «օտարների» նկատմամբ: Այս հայեցակարգն իր դրսևորումը ստացավ, օրինակ, զրադաշտականության և յահվեականության մեջ:

Այսպես՝ հնում մարդիկ համոզված էին, որ «օտարներն» իրենց համար ի սկզբանե և անփոփոխ թշնամիներ են, այդ իսկ պատճառով «օտարների» դեմ իրականացվում էր ապակառուցողական ու կործանիչ գործունեություն: «Նկարագրելով ավստրալական ցեղերին՝ ճանապարհորդ Կյոռը նշում է, որ նրանց մոտ ցեղակցի մահվան ցանկացած դեպք, անկախ այն հանգաման-

[14] Տե՛ս **Назаретян А. П.,** նշվ. աշխ., էջ 87:

քից, թե դա հիվանդության հետևանք էր, թե դժբախտ պատահարի արդյունք, վերագրվում էր այլ ցեղախմբի կողմից իրագործված կախարդության: Մահացածի հուղարկավորությունից հետո արյան ծարավից չարացած մարդկանց մի խումբ շարժվում էր օտար և անծանոթ բնակավայրերի ուղղությամբ՝ հայտնաբերելու թշնամի ցեղերին: Այնուհետև գիշերով ծածուկ իրականացնում էր այդ ցեղախմբի քնած տղամարդկանց և երեխաների սպանություն»[15]:

Նմանատիպ բազմաթիվ օրինակների հիման վրա կարելի է եզրակացնել, որ արդեն նախնադարում ձևավորվում է «յուրայինների» և «օտարների» փոխհարաբերության այնպիսի տեսակ, որում «օտարները» դիտարկվում են որպես թշնամի, դժբախտությունների, ցավերի ու չարիքի աղբյուր և այդ իսկ պատճառով ենթակա են «յուրայինների» կողմից անխնա ոչնչացման: Այս իմաստով հազարավոր տարիներ մրցակցող հանրույթների հարաբերության արդյունքում ցեղասպանությունը համարվել է նորմալ և ընդունելի, ինչի հետևանքով ոչնչացվել են բազմաթիվ ցեղեր, հետագայում նաև ազգեր: Որպես բնական աղետների ու բնապահպանական ճգնաժամերի հետևանք, որոնց ընթացքում ոչնչացան սննդի աղբյուր համարվող բույսերի և կենդանիների տարբեր պոպուլյացիաներ, սրվեցին միջհանրութային փոխհարաբերությունները, մրցակցությունը դարձավ ավելի դաժան՝ խորացնելով «յուրային-օտար» հակամարտությունը:

Մարդկային ապակառուցողական և ագրեսիվ գործունեության վառ և ծայրահեղ օրինակներից է հնում լայն տարածում ունեցող կանիբալիզմը: Այս սովորույթը հաստատվում է բազմա-

---

[15] **Поршнев Б. Ф.**, Социальная психология и история. М., «Наука», 1966, с. 96.

թիվ էթնոլոգիական վկայություններում: Օրինակ՝ ավստրալական աբորիգեններից «Ուայթ-բեյ շրջանի ցեղերն ուտում են ոչ միայն կռվում ընկած թշնամիներին, այլև յուրայիններին, եթե միայն դիակները գտնվում են լավ վիճակում: Նախապես նրանք մաշկում են դիակը և պահածոյացնում՝ վրան քսելով յուղ և փայտի ածուխ»[16]: Միկլուխո-Մակլայը հաղորդում էր Ադմիրալտեյտության կղզիներում բնակվող բնիկների բարքերի մասին. «Մարդակերությունն այստեղ հազվադեպ երևույթ չէ: Բնիկները գերադասում են մարդու միսը խոզի մսից»[17]: Կանիբալիզմի դրսևորումներ, որպես սովորական երևույթ, էթնոլոգների ու մարդաբանների կողմից բացահայտվել են Աֆրիկայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում և աշխարհի այլ մասերում: Ինչո՞վ է պայմանավորված մարդկանց մոտ այդ երևույթի առաջ գալը: Ա. Պ. Սկրիպնիկի կարծիքով, կանիբալիզմը առաջ է եկել երկու իրարից անկախ գործոնների ազդեցությամբ.

- հաղթված թշնամու նկատմամբ իշխանության հաստատում և անհագուրդ վրեժի ծարավ,
- պարբերական սով, որը ստիպում է ուտել դիակներ և սպանել առավել թույլ ցեղակիցներին:

Թե՛ առաջին, թե՛ երկրորդ դեպքում սուբյեկտը գտնվում է ծայրահեղ իրավիճակում. կամ ուրիշների նկատմամբ ունի անսահման իշխանություն, կամ կանգնած է սովամահության եզրին[18]: Մարդաբաններն առանձնացնում են կանիբալիզմի երկու դրսևորում. էնդոկանիբալիզմ՝ երբ ուտում են համացեղակիցնե-

---

[16] **Лысак И. В.,** Человек – разрушитель: деструктивная деятельность человека как социокультурный феномен. Таганрог, «ТРТУ», 1999, с. 19.

[17] **Миклухо-Маклай Н. Н.**, Собр. соч. в 5 т. М., «Л »., 1950, Т. 2, с. 522–523.

[18] Տե՛ս **Скрипник А. П.,** Моральное зло в истории этики и культуры, М., «политиздат», 1992, էջ 38:

ին, և էկզոկանիբալիզմ՝ երբ մարդակերության օբյեկտ է դառնում օտար, հաճախ թշնամական ցեղի ներկայացուցիչը: Այս թեմայի շրջանակում մեզ հետաքրքրում է էկզոկանիբալիզմը, որը երևի թե կարելի է հասկանալ մշակույթների տարբերության համատեքստում: Լ. Կանևսկին նշում է, որ աֆրիկյան գանավարի, ռուկուբա և կալերի ցեղերի ներկայացուցիչներն ուտում էին իրենց կողմից սպանված թշնամիների դիակները: Աֆրիկյան մի քանի գաղտնի հանրույթներում, օրինակ՝ «ընձառյուծի հանրույթում», սպանությունն ու կանիբալիզմն իրենցից ներկայացնում են «օտարի» նկատմամբ ու նրա հաշվին ակտիվորեն ինքնահաստատվելու միջոց: Այն կործանիչ գործողություն է, որն ուղղված է սոցիոմշակութային այլ հանրույթին պատկանող մարդկանց դեմ[19]:

Անցյալում, կանիբալիզմից բացի, գոյություն ուներ մեկ այլ դաժան երևույթ՝ արյան վրեժը, որը ևս ուղղված էր «օտարների» դեմ: Արյան վրեժը ենթադրում էր «օտար» ցեղախմբի արական սեռի բոլոր ներկայացուցիչների, անգամ ծծկեր երեխաների ոչնչացում: «Արյան վրեժը, ինչպես նաև ոչ պակաս սարսափելի «գանգերի որսը» ընդգրկված էին սոցիալական մեխանիզմների աստիճանակարգում: Գործում էր «արյուն՝ արյան դիմաց» սկզբունքը, և նա, ով, այդ սկզբունքին համապատասխան, չէր սպանել «օտարին»՝ ի նշան իր հասունության և լիարժեքության, արժանի չէր ո՛չ կնոջ սիրուն, ո՛չ էլ ցեղակիցների հարգանքին»[20]:

Մշակույթների տարբերությունների վրա հիմնված կանիբալիզմն ու արյան վրեժը երևույթներ են, որոնք տարածված էին վաղ անցյալում և բնորոշ էին զարգացման ցածր մակարդակում

---

[19] Տե՛ս **Каневский Л.**, Каннибализм. М., «крон-пресс», 1998, էջ 189-190:
[20] **Лысак И. В.,** նշվ. աշխ., էջ 20-21:

գտնվող ժողովուրդներին: Սակայն մարդկության զարգացման հետագա փուլերում մարդկային ագրեսիվ ու ապակառուցողական գործունեությունը ոչ միայն չավարտվեց, այլև ստացավ առավել լայն տարածում: Մարդկության պատմության մեջ կարելի է գտնել բազում օրինակներ, երբ մարդիկ ոչնչացնում էին այլ մարդկանց միայն այն բանի համար, որ վերջիններս տարբերվում էին իրենցից մշակութային հարաբերություններում, կրում էին այլ մշակութային նորմեր, արժեքներ, կանոններ և այլն: Այսպես՝ աշխարհագրական մեծ հայտնագործությունների ժամանակներում եվրոպացիները, գրավելով գաղութներ, թալանում ու կործանում էին տեղաբնիկների բնակավայրերը, ոչնչացնում էին արվեստի գործերը, իսկ բնիկներին սպանում էին: Օրինակ՝ եթե 1495 թ. Հայիթիում ապրում էին մոտ երկու հարյուր հիսուն հազար հնդկացի-առավակներ, ապա 1550 թ. մնացել էր մոտ հինգ հարյուր մարդ, իսկ 1650 թ. բոլոր առավակները ոչնչացվեցին: Ոչնչացման, դաժանությունների, սպանությունների ու կործանման մասին են վկայում մի շարք հետազոտողներ, որոնք մասնակից են եղել Կոլումբոսի, Էռնանդո Կորտեսի (Մեքսիկայի ացտեկների ոչնչացում), Ֆրանսիսկո Պիսարոյի (Պերուի ինկերի ոչնչացում) ճանապարհորդություններին[21]:

Օտար մշակույթի ներկայացուցիչների նկատմամբ կործանիչ ապակառուցողական գործունեության օրինակ են նաև խաչակրաց արշավանքները, որոնք հիմնված էին կրոնական տարբերությունների վրա: Ոչնչացվում էին ոչ քրիստոնյա, օտար կրոն դավանող այն բոլոր մարդիկ, որոնք չէին հրաժարվում իրենց հավատքից և չէին ընդունում քրիստոնեություն: Կրոնական ան-

[21] Տե՛ս **Zinn H.**, A Peoples History of the United States. 1492 Present. NewYork, 1995, էջ 4-5:

հանդուրժողականությունը, իհարկե, իրագործվել է ոչ միայն քրիստոնյաների կողմից: Այն դրսևորվել է և այժմ էլ դրսևորումներ ունի տարբեր կրոնների ներկայացուցիչների տարաբնույթ ահաբեկչական գործողություններում, ինչի վառ օրինակն է այսօր գոյություն ունեցող «Իսլամական պետություն» կազմակերպության գործունեությունը: Այսինքն՝ նորից ականատես ենք լինում մշակութային, կրոնական տարբերության վրա հիմնված «յուրային-օտար» փոխհարաբերության ծայրահեղ թշնամական ու կործանիչ դրսևորման: Խաչակրաց արշավանքներ, կրոնական պատերազմներ, ինկվիզիցիա, ցեղասպանություններ... այս շարքը կարելի է շարունակել: Եվրոպական ինկվիզիցիայի ծայրահեղ դրսևորումների տարիներին հերետիկոսության և եկեղեցու դեմ կատարած այլ «հանցագործությունների» պատրվակով տասնյակ հազարավոր տղամարդիկ, կանայք ու երեխաներ են կենդանի այրվել խարույկների վրա: Հայտնի է, որ «Իսպանիայի առաջին գլխավոր ինկվիզիտոր Թոմաս դե Թորքվեմեդան իր ինկվիզիցիոն ծառայության տասնութ տարիներին տասը հազար երկու հարյուր քսան մարդ է ողջ-ողջ այրել»[22]:

Ժողովուրդների մշակութային տարբերությունների վրա հիմնված կործանիչ և ագրեսիվ գործունեության ու վարքի օրինակներ, ցավոք, կարելի է գտնել նաև մարդկության պատմության նորագույն շրջանում: Ժամանակակից հասարակությունում «յուրային-օտար» տարբաժանումն իր արտահայտությունն է գտնում տարբեր գաղափարախոսություններում: Կ. Ս. Հաջիևը նշում է. «Գաղափարախոսության կոնսոլիդացիայի համար արտաքին թշնամու առկայությունը նույնիսկ ավելի կարևոր է, քան

[22] **Льоренте Х. А.,** Критическая история испанской инквизиции. В 2-х т., М., «Соцэкгиз», 1936 Т. 1, с. 200.

դրա կրողների միասնականությունը: Դա հատկապես վառ դրսևորվում է արմատական գաղափարախոսություններում, նրանց բուն բովանդակությունն արտահայտվում է թշնամու կերպարի օգնությամբ»[23]:

Նացիստական գաղափարախոսությունն իրենից ներկայացնում է «մեր ընտրյալության» հայեցակարգը, որտեղ այդ ընտրյալներն արիական ցեղի ներկայացուցիչներ են, և որոնք պետք է ստեղծեն «նոր աշխարհակարգ»: Սակայն, պետք է նշել, որ էթնոկենտրոնությունն ու ազգայնամոլությունը վերջին դարերի հայտնագործություններ չեն[24]: Հիտլերը, իշխանության գալով, պնդում էր, որ Գերմանիայի բոլոր սոցիալ-տնտեսական խնդիրները կլուծվեն, եթե երկրում ոչնչացվեն բոլոր «օտարները»՝ կոմունիստները, դեմոկրատները, գնչուները, հրեաները և այլն: Ֆաշիզմի հիմքում ընկած է այլատյացությունը՝ «օտարներին» չընդունելը:

«Յուրայինի» և «օտարի» միջև պայքարի վառ օրինակներ են ազգամիջյան կոնֆլիկտները, որոնք ժամանակակից աշխարհում բավականին տարածված են և, ըստ էության, քիչ են տարբերվում նախնադարում տեղի ունեցած միջցեղային կոնֆլիկտներից:

Այսպիսով՝ օտարների նկատմամբ թշնամական և ապակառուցողական վերաբերմունքն ունի մի շարք պատճառներ, այդ թվում նաև՝ բնական: Լինելով կենդանական աշխարհի ներկայացուցիչ և միևնույն ժամանակ մշակութային արարած՝ մարդը ենթարկվում է բնական օրինաչափություններին: Ցանկացած

---

[23] **Гаджиев К. С.,** Политическая идеология: концептуальный аспект. // Вопросы философии. М., «Наука», 1998. № 12, с. 5.

[24] Տե՛ս **Бромлей Ю., Подольный Р.,** Человечество-это народы. М., «Мысль», 1990, էջ 384-385:

համակարգի կենսագործունեության համար անհրաժեշտ էներգիան կլանվում է արտաքին աշխարհի այլ համակարգերի ոչնչացման միջոցով, և այս առումով արտաքին աշխարհի տարբեր համակարգեր կարող են լինել սեփական գոյության սպառնալիք: Այդ սպառնալիքը կարող է լինել ոչ միայն օտար մարդը կամ հանրությունը, այլև բնության այս կամ այն երևույթը: Սրա հետ մեկտեղ, ի տարբերություն կենդանիների, մարդիկ ձևավորվել են ոչ միայն կենսաբանական, այլև սոցիոմշակութային էվոլյուցիայի արդյունքում: Վերջինս հանգեցրել է նրան, որ տարբեր հանրույթների ներկայացուցիչները, միմյանցից չտարբերվելով կենսաբանորեն, բավականաչափ տարբերվում են իրենց կուտակած մշակութային «իրականությամբ»: Հենց այդ տարբերություններն են դառնում «յուրայինների» և «օտարների» տարբաժանման հիմքը, ինչի արդյունքում էլ «օտարները» դիտարկվում են որպես ոչնչացման ենթակա թշնամիներ:

Կործանիչ պատերազմների և մարդկային խմբերի ոչնչացման տարբեր դրսևորումների հետ մեկտեղ մարդկության ինտելեկտուալ զարգացման ընթացքում առաջ են եկել միջցեղային, հետագայում նաև միջպետական ու ազգամիջյան հարաբերությունների կարգավորման այլ հրամայականներ: Օտար խմբերի ու էթնոսների միջև հնարավոր են դառնում փոխանակման հարաբերությունները: Այս հարաբերություններն իրենց արտահայտություններն են գտնում բարոյական հարթությունում, որտեղ փորձ է արվում ձևակերպել հարաբերությունների հիմնական սկզբունքները: Իհարկե, առաջ քաշված բազմաթիվ բարոյական համակարգերը տարբեր են և դիտարկվում են «յուրայինների» ընտրյալության համատեքստում, սակայն այստեղ կարևորն այն է, որ մարդկության կողմից աշխարհի ամենատարբեր վայրե-

րում առաջ են քաշվում փոխհարաբերությունների սկզբունքներ: Այս ենթատեքստում հետաքրքրական են պատմության մի շարք բեկումնային ժամանակաշրջաններ: Օրինակ՝ առաջին հազարամյակի կեսերը նշանավորվում են նրանով, որ գրեթե միաժամանակ Պարսկաստանում, Հունաստանում, Չինաստանում, Հնդկաստանում հասունացան համամարդկային միասնականության, հակաբռնության, գթասրտության, թշնամու նկատմամբ կարեկցանքի աննախադեպ գաղափարներ:

Ցանկացած իրավիճակում մարդը ձգտում է արդյունավետ վարք դրսևորել: Իհարկե, չի բացառվում, որ իր կատարած որոշ գործողություններ նա կարող է որակել որպես ոչ ճիշտ, սխալ, ինչը կապված է համապատասխան գործողություններից հետո ակնկալվող արդյունքի չարդարացվածության կամ կյանքի կողմնորոշիչների փոփոխման հետ: Սակայն գործելիս մարդը կարծում է, որ ճիշտ է վարվում, ծայրահեղ դեպքում ընտրում է չարյաց փոքրագույնը: Դա նրա՝ գործողի գնահատականն է, և այն դրական է իր բարոյականության շրջանակում, այն բարոյականության, որը գործառում է իր հանրույթում, խմբում, ցեղում կամ ազգում, որը ինքն է ընտրել: Հայտնի է, որ ինքնանույնականացման ժամանակ մարդն ընտրում է նաև բարոյական նորմերն ու համակարգը: Իսկ այդ համակարգերը բազմազան ու բազմաթիվ են (քրիստոնեական, իսլամական, աթեիստական, սնոբիստական, նիհիլիստական և այլն): Սակայն բոլորի մոտ բարոյական հրամայականը բովանդակում է հաճախ թաքնված մի պայման՝ «որևէ հանրույթի պատկանելու դեպքում մարդը պարտավորվում է կատարել (կամ չկատարել) որոշ արարքներ»: Ընտրելով այս կամ այն բարոյական համակարգը՝ մարդն իրեն նույնականացնում է որոշակի խմբի հետ: Չկա մարդ, որը չհամարի իրեն ինչ-

որ հանրույթի անդամ, մի ինչ-որ «մենքի» պատկանող: Ինքնանույնականացումն արտահայտվում է նրանում, որ խմբի անդամը գիտակցում է իր պատկանելությունն այդ խմբին և գիտակցաբար տարբաժանում է «իր» խումբը «նրանցից»: Այստեղ հանրույթի սոցիալ–հոգեբանական ապրումներն արտացոլվում են «յուրայինների» և «օտարների» մասին պատկերացումներում: Քանի որ մարդն իր արարքները, վարքը, գործողությունները համարում է ճիշտ, բարի, ապա բնական է, որ հակառակ գործողությունները համարում է ոչ ճիշտ, չար, թշնամական[25]:

«Թշնամի» հասկացությունը թույլ է տալիս անձնավորել չարը, ինչպես «բարեկամը»՝ բարին: «Թշնամի–բարեկամ» մասնավոր տարբաժանումից կարելի է անցնել ավելի ընդհանուր՝ «յուրային–օտար» տարբաժանմանը: Փիլիսոփայական այս ընդդիմության գոյությունն ընդունելով հանդերձ՝ մարդն այնուամենայնիվ չի կարողանում տեսական մակարդակում սահմանել, թե որն է յուրայինը, և որը՝ օտարը: Իսկ ամենօրյա կյանքում մենք սեփականը, յուրայինը տարբերում ենք օտարից, բարին՝ չարից, երբեմն նույնիսկ բոլորովին անսպասելի կերպով, ինչպես, օրինակ, այն դեպքերում, երբ յուրային կարող է դառնալ մի ինչ–որ պատահական մարդ, իսկ օտար՝ հարազատ հայրը: Այս կապակցությամբ Կ. Ի. Յակիմեցը նկատում է. ««Յուրայինը» նա է, ով ինքնանույնականացման որևէ ձևի շրջանակում թույլ է տալիս սուբյեկտին ինքնապահպանվել և պահանջում է պաշտպանություն: Այսինքն՝ «յուրայինը» և «լավը» համարժեք մեծություններ են: Օտարը նա է, ումից նույն այդ ինքնանույնականացման շրջանակում պետք է խուսափել, այսինքն՝ օտարը համարժեք է

[25] Տե՛ս **Хотинец В. Ю.,** О содержании и соотношении понятий этническая самоидентификация и этническое самосознание. Социологические Исследования. «Импакт-фактор», М., 1999, № 9, էջ 70:

վատին»[26]: Ցանկացած իրավիճակում մարդը հանդես է գալիս որպես ակտիվ կողմ. նա ինչ-որ կերպ գործում է, և իր այդ գործողությամբ ընտրում է այն, ինչն իրենն է, յուրային է կամ իր բարոյականության շրջանակում բարի է:

Հասարակական կյանքում յուրայինն ու օտարը կարող են տարանջատվել ամենատարբեր հիմքերով ու գործոններով: Նման գործոններից մեկը մասնագիտությունն է: Հաճախ մարդիկ յուրային են համարում նույն մասնագիտության տեր կամ նույն աշխատանքով զբաղվող մարդկանց: Այսպիսի «յուրայիններ» են, օրինակ, արհմիությունները, որոնք կոչված են պաշտպանելու որոշակի աշխատանքով զբաղվող մարդկանց շահերը: Սա մարդկանց ըստ մասնագիտության տարբեր խմբերի բաժանելու պաշտոնական կամ իրավաբանական ձևն է, որը հաճախ կրում է զուտ ձևական բնույթ: Սակայն առօրյա կյանքում մենք կարող ենք հանդիպել այնպիսի իրադրությունների, երբ հավաքվում են տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ, որոնք իրենց մասնագիտության շնորհիվ միմյանց հետ շփման ընդհանուր եզր են գտնում՝ միավորվելով որպես յուրայիններ: Այսինքն՝ յուրայինների խմբի առաջ գալու գործոն կարող է լինել մասնագիտությունը:

Յուրայինների խմբի ձևավորման մեկ այլ գործոն է տարիքը: Յուրայիններ կարող են համարվել սերնդակիցները: Որպես կանոն, մարդն ավելի հեշտ է հարաբերվում իր սերնդակցի, քան իրենից մեծի կամ փոքրի հետ: Այսպես առաջ են գալիս երիտասարդների, տարեցների և այլ խմբեր, որոնք կարող են փոխհարաբերվել որպես յուրայիններ և օտարներ:

---

[26] **Якимец К. И.,** Свое и Чужое. Вопросы Философии. М., «Наука», 2003, № 11, с. 39.

«Յուրայինի» և «օտարի» տարանջատման մեկ այլ հիմք է սոցիալական անհավասարությունը: Այս հիմքի վրա տեղի է ունենում սոցիալական շերտավորում (հարուստներ–աղքատներ): Ընդ որում՝ եթե վերը նշված խմբերում օտարն ընկալվում է որպես ուղղակի յուրայիններից տարբերվող, ապա այստեղ օտարի նկատմամբ կա խիստ թշնամական, հակակրելի վերաբերմունք, և յուրային ու օտար փոխհարաբերությունում շեշտադրված է օտարի վերաբերյալ բացասական գնահատականը: Այսինքն՝ հստակ գիտենք, թե ովքեր են օտարները, մինչդեռ յուրայինների սահմաններն անորոշ են:

Հաճախ մարդիկ սահմանազատում են յուրայիններին ըստ համայնքի կամ բնակավայրի, ինչպես, օրինակ, երևանցի, ապարանցի, գյուղացի, քաղաքացի և այլն: Այս դեպքում խմբերի միավորման հիմքը բնակության վայրն է: «Յուրային» ու «օտար» կարող են լինել ինչպես միևնույն գյուղի կամ քաղաքի տարբեր թաղամասերի բնակիչները, այնպես էլ տարբեր քաղաքների, մարզերի, աշխարհագրական վայրերի (օրինակ՝ կովկասցի), մայրցամաքների, (ֆանտաստիկ գրքերում ու ֆիլմերում՝ մոլորակների) բնակիչները:

Սահմանազատման այս հիմքերը կարելի է անվերջ շարունակել՝ ընտանիք, հոբբի, այս կամ այն սպորտային ակումբի երկրպագուներ, տարաբնույթ ակումբների անդամներ և այլն: Ի տարբերություն յուրայինի և օտարի նախնական ընկալման՝ այս խմբերից շատերում ինքնանույնականացումը տեղի է ունենում ոչ թե օտարին պարտադիր հակադրվելու ճանապարհով, այլ պարզապես որոշակիորեն սահմանազատվելով:

Կարևոր են նաև քաղաքական և տնտեսական ոլորտները, որոնցում «յուրայինն» ու «օտարը» սահմանվում են այս ոլորտնե-

րին հատուկ գործոններով: Քաղաքական դաշտում յուրային է համարվում գաղափարակիցը, կուսակիցը, համախոհը, իսկ օտար՝ հակառակորդը, որը «մեզ դեմ է», ընդ որում՝ այստեղ կարևոր չեն բնակության վայրը, սոցիալական դիրքը կամ վերը նշված գործոններից որևէ մեկը: Այս տեսանկյունից նկատելի է, որ զարգացած և ժողովրդավարական ավանդույթներ ունեցող երկրներում մարդիկ հիմնականում համախմբվում են կուսակցական ու գաղափարական շահերով: Իսկ զարգացող կամ անցումային փուլում գտնվող երկրներում, ինչպիսին է Հայաստանը, միավորումը տեղի է ունենում անձի կամ այլ գործոնների շուրջ, ինչի արդյունքում ազգակցական, խնամիական և շահադիտական նպատակներով օգտագործվող կապերը սատարում են բացառապես «յուրայիններին», իսկ «օտարներին» շրջափակում, դեն են նետում՝ ի չիք դարձնելով քաղաքական առողջ մրցակցության հնարավորությունը[27]:

Տնտեսական դաշտում բաժանման չափանիշը տնտեսական շահն է: Այստեղ «յուրային» է գործընկերը, իսկ «օտար»՝ մրցակիցը: Նույն այս «օտարը» այլ ոլորտում կարող է լինել «յուրային», իսկ «յուրայինը»՝ «օտար»: Այլ կերպ ասած՝ ընկերային (հասարակական), քաղաքական ու տնտեսական ոլորտներում «յուրայինն» ու «օտարը» սահմանազատվում են ամենատարբեր հիմքերով: Մարդու մոտ «մենքի» զգացումն առաջ է գալիս այն մարդկանց նկատմամբ, որոնց հետ, ըստ որոշակի իրադրային չափորոշիչների և արժեքային չափանիշների, նա զգում է նույ-

[27] Տե՛ս **Հարությունյան Մ. Ա.,** Իշխանության լեգիտիմության ժամանակակից տեսություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., «Նաիրի», 2016, էջ 9:

նություն[28], շահերի ու հետաքրքրությունների համապատասխանություն, համակրանք և այլն:

«Յուրայինի» և «օտարի» բաժանման հիմք է նաև ազգային պատկանելիությունը: Ցանկացած մարդ իրեն համարում է այս կամ այն ազգի ներկայացուցիչ: Այստեղ չենք քննարկի ազգային ինքնանույնականացումը, այլ ցույց կտանք, թե ինչպես է «յուրայինը»՝ տվյալ ազգը, ինքնորոշվում «օտարի» նկատմամբ հենց այդ նույն «օտարի» միջոցով: Միջխմբային ցանկացած կոնֆլիկտ ունի հետևյալ սխեման. «յուրայինները» (մերոնք) նկարագրվում են որպես մշակույթի և մարդկային արժեքների կրողներ, իսկ «օտարները»՝ որպես բարբարոսներ, վայրենիներ, գազանատիպ ոչ-մարդիկ: Ընդհանրապես «յուրայինը» միշտ հաստատվում է ի հակակշիռ «օտարի»՝ «ոչ-մարդու»: Եվ այս ինքնահաստատումը կամ ինքնորոշումը տեղի է ունենում մի քանի եղանակով: Օրինակ՝ ինքնորոշման տարածված մեխանիզմ է, երբ «օտարին» վերագրվում են այնպիսի հատկություններ ու բնութագրիչներ, որոնք չեն բովանդակում արժեքային ոչինչ. նրանք վայրենի են, այլանդակ են, սխալ են, չար են և այլն: Նրանք մշակույթ և արվեստ չեն կարող ունենալ, քանի որ վերջիններս հնարավոր չեն առանց գեղեցկության, բարիքի և այլն: Այս բնորոշումներից հետո գալիս է ինքնահաստատման հաջորդ փուլը, որտեղ «յուրայինին» վերագրվում են բարին, գեղեցիկը, ճշմարիտը և այլն: Սա ինքնահաստատման մի ձև է, որտեղ, ինչպես նշվեց, ցույց է տրվում ոչ-մենքի, «օտարի» ոչ-մարդ լինելը, որից հետո միայն՝ «յուրայինների» մարդկայնությունը:

---

[28] Տե՛ս **Климова С. Г.**, Критерии определения групп «мы» и «они»//Социологические Исследования. М., 2002, № 11, էջ 84:

Տարբեր մշակույթներում հաճախ օգտագործվում են հրապարակային ինքնաժխտումը, սեփական թուլության, չկայացածության ճանաչումը: Սա ինքնահաստատման ու ինքնորոշման մեկ այլ ձև է: Այս դեպքում շեշտադրվում է «յուրայինների» մի որևէ բացասական կողմ, որն ընդունելու միջոցով տվյալ խումբը կամ ազգը ձեռք է բերում առավելություն: Այս ձևը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. սկզբում ձևակերպվում է մոտավորապես այսպիսի դրույթ՝ մենք ահավոր ենք, գազան ու վայրենի ենք, այնուհետև այս դրույթից պարադոքսալ կերպով հետևություն է արվում տվյալ «մենքի» մի ինչ-որ հատուկ նշանակության ու կարևորության մասին: Նման օրինակներ կարելի է տեսնել տարբեր ժողովուրդների մոտ՝ բանահյուսությունում, առօրեական խոսքում, անեկդոտներում և այլն, երբ առաջ են քաշվում ու շեշտադրում են տվյալ ժողովրդի բացասական այնպիսի հատկություններ, ինչպիսիք են ծուլությունը, հարբեցողությունը, վայրենությունը, խաբեբայությունը և այլն, իսկ հետո այս ամենը ներկայացվում է որպես առավելություն: Կարելի է օրինակ բերել գերմանական իրականությունից. Երկրորդ համաշխարհայինից հետո ողջ Գերմանիան՝ բոլոր գերմանացիները, ճանաչեցին իրենց մեղքը և ընդունեցին, թե որքան ահավոր ու բարբարոս են եղել: Եվ հենց այդ մեղքի ընդունմամբ գերմանացիներն իրենց առավել են զգում մյուս ազգերի նկատմամբ, ու դա նրանց տալիս է «կոլեկտիվ մեղավորության» զգացումը, նրանք իրենց զգում են որպես ընտրյալ ազգ: Այսպիսի օրինակների կարելի է հանդիպել ամենուր՝ մարդկային տարբեր հանրույթներ դիտարկելիս: Ինքնահաստատման այս եղանակը կարելի է բնորոշել հետևյալ արտահայտությամբ. «մենք ոչնչություն ենք, բայց բարձրագույն իմաստով»:

Այսպիսի տրամաբանությամբ կառուցվում է արժեքների շրջված կամ ռևերսիվ համակարգը: Այստեղ սուբյեկտը շեշտադրում է իր սխալ, անպետք և օտար լինելը, բայց այդտեղ գործում է ռևերսիվ տրամաբանությունը: Հայտարարվում է այն միտքը, որ բոլոր մարդկանց մեջ մենք վատագույնն ենք, թույլ ենք, միամիտ, վայրենի, մոլորյալ, լավագույններից հետ ենք մնացել, շեղվել ենք ճշմարիտ ուղուց, չգիտես, թե ինչ ենք՝ բնության սխալ, արարչի անհեթեթություն և այլն: Այսպիսին է արժեքների շուռ տրված բուրգը: Բայց հենց այդ շրջվածությունն է կոչված ապացուցելու տվյալ Յուրայինների հատուկ արժանիքը: Իրականում ասվում է, որ Մենք՝ յուրայիններս, բոլորից արժանավոր ու լավն ենք: Ինքնահաստատման և ինքնորոշման այս մեխանիզմը գործում է ավելի արդյունավետ, քան այն պարզունակ մոտեցումը, որը ձևակերպվում է (և որի մասին վերը նշեցինք) հետևյալ կերպ. «մենք ամենալավն ենք»:

Գոյություն ունի անուղղակի ինքնահաստատման մեկ այլ ձև ևս, ըստ որի՝ «օտարներն առավելություն չունեն յուրայինների նկատմամբ»: «Օտարն» այնպիսին է, ինչպիսին «յուրայինը»: Այս մոտեցումն առկա է ժամանակակից քաղաքական, մշակութային և լրագրողական հրապարակումներում: Ի՞նչ է սա նշանակում. «օտարը» նո՞ւյնպես «յուրային» է: Ինչ եղավ «օտարի» հետ, նա դարձավ լավը, պարտադիր չէ, որ «օտարը» լինի մեր թշնամին, հնարավոր է՝ «օտարն» ունի իր ճիշտը: Այս և նմանատիպ այլ դատողությունների հոսքը ստիպում է կատարել մի հետևություն, որ ահասարսուռ «օտարները» կարծես անհետացան, ինչ-որ տեղ թաքնվեցին: «Օտարներն այլևս չկան, կամ այլ խոսքով՝

ըստ էության մենք նույնպես օտար ենք»[29]: Ահա այսպիսին է նույնականացման մասին Արևմուտքի նոր բանաձևը: Սրանով Արևմուտքը փորձում է համոզել, որ զարգացած, առաջընթաց ապրած մարդը հրաժարվել է հին բանաձևից, ըստ որի՝ «մենք» մարդ ենք, իսկ «նրանք»՝ ոչ-մարդ: Հիմա արդեն «օտարը» վտանգավոր չէ, նա մեր մշակույթի թշնամին չէ: Այսպես օրինականացվեցին նախկինում ոչ նորմալ, հակաբարոյական համարվող բազմաթիվ այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հոմոսեքսուալիզմը, ֆեմինիզմը և այլն: «Օտարին» բարի հարևան դարձնելու այս մոտեցումը կարելի է բացատրել հետևյալ կերպ. վախն ու զզվանքը ոչ մի տեղ էլ չկորան: Այս առումով բավական է հիշել 1996 թ. լույս տեսած Ս. Հանթինգտոնի «Քաղաքակրթությունների բախումը» գիրքը՝ գնահատելու համար այն լարված վիճակը, որը կա արևմուտքի և մնացած աշխարհի միջև: Ակնհայտ է, որ Արևմուտքի համբերատարությունն ու հանդուրժողականությունը չեն տարածվում բոլոր «օտարների» վրա: Դատելով արևմտյան ԶԼՄ-ների հայտարարություններից՝ պաղեստինցիները վտանգավոր են, սոմալիական պարտիզաններն ու աֆղան թալիբները՝ սարսափելի, Սադամ Հուսեյնը և Քադաֆին հրեշներ են, իսկ Ուսամա Բեն Լադենի նկատմամբ անգամ ինքը՝ Սատանան, փառք է: Սրանք բոլորն այն «օտարները» չեն, որոնց կարելի է նայել բարեսրտորեն ու հանդուրժողաբար, սրանք «ոչ-մարդիկ» են:

Բարեհոգությունն ու հանդուրժողականությունը ցուցաբերվում են օրինական ներգաղթյալների նկատմամբ, որոնք ապրում են Արևմուտքում և հետևաբար համեմատաբար հեշտ կառավա-

---

[29] **Якимович А. К.**, «Свой-чужой» в системах культуры// Вопросы Философии. М., «Наука», 2003, № 4, с. 58.

ռելի են իշխանական համակարգերի կողմից: Արևմտյան երկրներում ապրող աֆրիկացիներ, ասիացիներ, նախկին կոմունիստներ, ահա թե ովքեր են այն «օտարները», որոնցից կարելի է չվախենալ ու չխուսափել, այսինքն՝ մարդիկ, որոնք վտանգ չեն ներկայացնում իրենցից: Սրանով Արևմուտքը ոչ թե ընդունում է «օտարներին» ու նրանց մշակույթը, այլ հաստատում է իր գերազանցությունը նրանց նկատմամբ՝ մնալով տիրոջ կարգավիճակում: Այն դրույթը, որ պնդում է Արևմուտքը, թե «օտարը» ոչ թե թշնամի է և ոչ-մարդ, այլ հակառակը, նա մոտ է Մեզ և նույնպիսի մարդ է, ինչպիսին մենք ենք, պարզապես ռազմավարություն է: Չէ՞ որ արևմտյան մարդը չի փորձում ասել, թե ինքը նույնքան լավն է, որքան էսկիմոսը, և նրա աշխարհընկալումը նույնքան արժեքավոր է, որքան աֆրիկացունը, մուսուլմանինը կամ նախկին կոմունիստինը: Արևմտյան մարդն ավելի շուտ նկատի ունի այն, որ աֆրիկացու, մուսուլմանի, նախկին կոմունիստի և այլ ոչ-մարդկանց պատկերացումներն աշխարհի մասին պետք չէ կործանել, և դրանք իրավունք ունեն գոյություն ունենալ իրենցի կողքին՝ տիրոջ կողքին: Սրանով նա «օտարին» մարդ լինելու արտոնագիր է տալիս, թույլ է տալիս մարդ լինել՝ ակնկալելով, որ նրանք երախտագիտության խորը զգացումով կգնահատեն իր մեծահոգությունը: Նա անկեղծորեն չի հասկանում և բարկանում է, երբ դրա փոխարեն ստանում է այլ՝ բացասական վերաբերմունք կամ հանդիպում է դիմադրության:

«Յուրային-օտար» հարաբերության այս ձևը, անշուշտ, չի վերաբերում միայն արևմտյան աշխարհին: Սա «օտարի» նկատմամբ և «օտարի» միջոցով ինքնահաստատման և ինքնորոշման գործողություն է, ինչի արդյունքում հաստատվում է «Տիրոջ» կարգավիճակը:

Այսպիսով՝ կարելի է առանձնացնել յուրային-օտար փոխհարաբերությամբ ինքնորոշվելու և ինքնահաստատվելու հետևյալ կարևոր դրույթները.

1. Մշակույթները լեգիտիմացնում են սեփական քաղաքակրթական դիրքորոշումները ոչ միայն ճակատային փաստարկների միջոցով, այլև հակառակ փաստարկներով, որոնք ելնում են օտարից, ոչ-նմանից, ոչ-մարդուց:

2. Սեփական քաղաքակրթական գերազանցությունը ենթադրում է օտարի դիմակի և «մարդու» կամ յուրայինի դիմակի խորհրդանշական կրման գործողություններ:

3. Երբ «ոչ-մարդու»՝ օտարի դիմակը հագնում ենք մենք, գործում է «մենք վատն ենք, մենք ոչինչ ենք, բայց բարձրագույն իմաստով» բանաձևը:

4. «Մարդու»՝ յուրայինի դիմակը հագցվում է օտարին, և «յուրայինը» «թույլ է տալիս» օտարին նույնպես լինել մարդ և դրանով բոլորին հասկացնում է, որ այնուհանդերձ մշակութայինն ու քաղաքակիրթն ինքն է, չափանիշը մենք ենք:

1.2. «ՅՈՒՐԱՅԻՆ-ՕՏԱՐ» ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Յուրաքանչյուր հասարակություն ունի իրեն հատուկ սոցիոմշակութային արժեքների համակարգ, որն էլ անհատի և առանձին սոցիալական խմբերի վարքի գլխավոր կարգավորիչն է: Սոցիոմշակութային արժեհամակարգն ապահովում է հասարակության սոցիալ-հոգեբանական կայունությունն ու որոշակիությունը, և յուրաքանչյուր անհատ նույնացնում է իրեն այս կամ այն խմբի սոցիոմշակույթի հետ՝ ձեռք բերելով որոշակի ինքնություն: Ինքնությունը՝ որպես նույնականության ու շարունակականության ներքին որոշակիություն, ունի ձևավորման ու գոյացման տարբեր ակունքներ: Այդ իսկ պատճառով կարելի է խոսել որոշակի ազգային, տարածաշրջանային, սոցիալական, դասակարգային, մշակութային, համայնքային, սեռային և նմանատիպ այլ ինքնությունների մասին: Ինքնությունն ու նրա տարատեսակներն իրենց բազմազանության մեջ սուբյեկտի տեսանկյունից բացահայտում են արտաքին և ներքին՝ օտար և յուրային աշխարհների միջև ինքնատիպ փոխազդեցությունների ողջ բազմազանությունը: Այն ձևավորվում է սոցիալականացման, համեմատության, նույնականացման և ինքնանույնականացման գործընթացներում[30]:

Ազգային ինքնության գործառական առանձնահատկությունների վերլուծության համատեքստում առավել արդիական և

---

[30] Տե՛ս **Մկրտչյան Ն. Ժ.,** Ինքնության արդիականացման հիմնահարցը ինքնության կոնֆլիկտների համատեքստում// Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ (հոդվածների ժողովածու), Պրակ III, Երևան, «Ասողիկ», 2007, էջ 49-50:

գիտական հետաքրքրություն ներկայացնող հիմնախնդիրներից մեկը «կոլեկտիվ ինքնության» խնդիրն է: Պատահական չէ, որ կոլեկտիվ ինքնությունը դիտարկվում է որպես ազգի գոյության գլխավոր նախապայմաններից մեկը[31]: Մարդկության զարգացման ներկա փուլի առանձնահատկություններից մեկն էթնոազգային վերածնունդն է: Այս կապակցությամբ Է. Սմիթը նկատում է, որ «վերջին տասնամյակում էթնիկ ազգայնականությունը ոչ միայն նվազման միտում չի ունեցել, այլև Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող ողջ շրջանի համեմատ աննախադեպ տարածում է գտել»[32]: Ազգային ինքնության հիմքում ընկած են մի շարք հանգամանքներ:

Առաջին՝ հոգեբանական մակարդակում մարդիկ նույնականության կարիք ունեն: Որոշակի ավանդույթների, հավատի, մշակույթի ու դերային-գործառնական հարաբերությունների հիմքերի վրա ձևավորված նույնականությունը կյանքի հուսալիության, կանխատեսելիության և, վերջապես, հասկանալի դառնալու «սոցիոմշակութային ապաստարան» է[33]: Ազգային հանրույթին պատկանելիությունն օգնում է լցնել էկզիստենցիալ վակուումը, տալիս է կյանքի ամուր ուղենիշներ և կողմնորոշիչներ, այն ավելին է, քան անհատը, քանի որ մարդուն ուղեկցում է անհիշելի անցյալից դեպի անվերջանալի ապագա[34]:

---

[31] Տե՛ս **Тишков В. А.**, Очерки теории и политики этничности в России. М., «Русский мир», 1997, էջ 221:

[32] **Смит Э. Д.**, Национализм и модернизм: критический обзор современных теорий нации и национализма, М., «Праксис», 2004, с. 15.

[33] Տե՛ս **Հարությունյան Է. Ա.,** Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Եր., «Մակմիլան-Արմենիա», 2004, էջ 46:

[34] Տե՛ս **Андерсон Б.**, Воображаемые сообщества. Размышления об истоках и распространении национализма, М., «Канон-пресс-Ц», 2001, էջ 33:

Երկրորդ՝ ազգային ինքնությունն ընկալվում է որպես բնականից տրված որակ, ինչի շնորհիվ համակարգը ձեռք է բերում բնական հիմունքներ[35]: Ազգը հանրույթ է, որի շահերին և արժանապատվությանը հասցված վիրավորանքն ապրվում է որպես սեփական:

Երրորդ՝ ազգային ինքնությունը հիմնված է սերնդեսերունդ կայուն գործող հանրույթի վրա, «որից դուրս մնալ հնարավոր չէ, քանի որ անցյալն անփոփոխ է»[36]: Հարկ է նշել, սակայն, որ այս պնդումն այնքան էլ միանշանակ չէ, քանի որ քաղաքակրթության զարգացման արդի փուլում անցյալը «փոխելու», այսինքն՝ արտագաղթի և ներգաղթի ակտիվացող միտումները հենց վկայում են ազգային հանրույթից դուրս գալու հնարավորության մասին:

Ազգային ինքնության վերլուծության ժամանակ հաճախ կիրառվում է մեկ այլ սկզբունք (հարաբերականության), որից օգտվում են կոնստրուկտիվիստները: Նրանք կարծում են, որ էթնիկ հանրույթի գոյությունը նախևառաջ հարաբերությունների և ոչ թե օբյեկտիվ նշանների հավաքածուի իրողություն է[37], ինչը նշանակում է, որ ազգային ինքնությունը դինամիկ որակ է ու ձևավորվում է «յուրայինների» և «օտարների» միջև սոցիալական փոխգործակցության արդյունքում: Այդ հասկացությունն, իր ամենատարերային բնութագրումով կարելի է բնորոշել իբրև այլության հակաբևեռ[38]: Ի դեպ, ազգային ինքնության և նրա ձևա-

---

[35] Տե՛ս **Вердери К.,** Куда идут «нация» и «национализм»?//Нации и национализм. М., «Праксис» 2002, էջ 297:

[36] **Хобсбаум Э. Дж.,** Принцип этнической принадлежности и национализм в современной Европе // Нации и национализм. М., «Праксис» 2002, с. 345.

[37] Տե՛ս **Тишков В. А.**, նշվ. աշխ., էջ 62:

[38] Տե՛ս **Զէքիեան Պ. Լ.,** Հայ ինքնութիւն. Ինքնության հարցեր: Տարեգիրք, Եր., «Զանգակ-97», 2002, էջ 33:

վորման հարցում վճռորոշ նշանակություն ունի «յուրայինի» և «օտարի» փոխհարաբերության, ավելի ճիշտ՝ նրանց սահմանային տարբերության հարցը: Բանն այն է, որ «յուրայինների» ու «օտարների» առանձնահատկությունների հակադրությունը մշտապես ուղեկցում է ազգային ինքնությանը[39]: Ավելին՝ ինքնության ձևավորման համար անհրաժեշտ է ոչ միայն «օտարի», այլև այլատյացության առկայությունը[40]: Ամեն դեպքում «յուրայինի» և «օտարի» սահմանազատումն իրականացվում է սոցիալական փոխգործակցության և նախորդում ազգային ինքնության ձևավորման գործընթացում: Սահմանազատման կարևորությունը բացատրվում է նրանով, որ «յուրային-օտար» հակադրությունը հնարավոր է միայն սահմանազատումից հետո, ինչին հաջորդում է ազգային ինքնության ձևավորումը: Սահմանազատումը նախորդում է կատեգորիզացման գործընթացին, որի արդյունքում սահմանվում են «յուրայինի» և «օտարի» բովանդակությունն ու չափորոշիչները: Ազգային նույնականացման ռազմավարության համար հիմնական չափորոշիչն ազգությունն է, որի հիման վրա էլ տեղի է ունենում «յուրայինների» և «օտարների» միջև խորհրդանշական սահմանի հստակեցումը:

Ազգային ինքնությունն օժտված է կոլեկտիվ ինքնությանը հատուկ բոլոր հատկանիշներով: Դրանցից է, օրինակ, ազգի ռեֆերենտությունը, որի գոյության համար անհրաժեշտ է ռեֆերենտ խումբ, այսինքն՝ պարտադիր է ազգային **ՄԵՆՔ**-ի և այլազգի համարվող **ՆՐԱՆՔ**-ի համեմատումը: Փոխգործակցության ընթացքում ազգերի կողմից փոխադարձ ճանաչումն է, նրանց իրական գոյի հիմքը և ոչ թե նրանց առաջացումն ու էթ-

---

[39] Տե՛ս **Бауэр О.**, Национальный вопрос и социал-демократия Нации и национализм. М., «Праксис», 2002, էջ 53:

[40] Տե՛ս **Хобсбаум Э. Дж.,** նշվ. աշխ., էջ 345:

նիկ գենեզիսն ինքնին: Ամեն ազգ ունի իր ազգային հանրույթի շրջանակը, որի հետ անընդհատ համադրվում է: Այսինքն՝ ազգային ինքնությունը միաժամանակ և՛ հաստատական է (մենք մենք ենք), և՛ համեմատական (մենք մենք ենք, որովհետև մենք նրանք չենք): Ազգային ինքնությունը գործում է միայն «յուրային-օտար» փոխհարաբերությունների գործընթացում և յուրայինին օտարից տարբերելու ու համեմատելու շնորհիվ:

Ազգային ինքնությունը հետերոգեն է: Հայտնի է, որ ազգային խորհրդանիշները (հերոսները) հասարակության վրա ազդելու արդյունավետ միջոցներ են: «Յուրայինների» ներսում ուղեցույց համարվող չափորոշիչների առանձնացումը նպաստում է սոցիալական կառավարման արդյունավետությանը: Այդ չափորոշիչները դառնում են սոցիալական կարգի իմպերատիվ և սահմանում արժեքների աստիճանակարգը: Ընդ որում՝ «յուրայիններին» և «օտարներին» տարբերակելու նպատակով օգտագործվում են դիսկուրսի տարբեր ձևեր՝ քաղաքական, կրոնական, գենդերային և այլն[41]: Օրինակ՝ իսկական իսպանացին պետք է կաթոլիկ լինի (ազգային և կրոնական դիսկուրս), իսկական ամերիկացին կամ դեմոկրատ է, կամ հանրապետական (քաղաքական և ազգային դիսկուրս) և այլն: Թե՛ «յուրայինը», թե՛ «օտարը» ենթակա են աստիճանավորման, օրինակ՝ քրիստոնյա մյուս ժողովուրդները հայերի համար պակաս «օտար» են, քան մուսուլմանները: «Օտար» կարող են լինել ոչ միայն առաձին վերցրած ազգերը, այլև որոշակի քաղաքակրթական հիմքով խմբերը: Ազգային ինքնության համար հատկանշական է «յուրայիններին» որպես հետերոգեն, իսկ «օտարներին» որպես

[41] Տե՛ս **Пивоев В. М.,** «Свое» и «чужое» в этнической и национальной культуре//«Свое» и «чужое» в культуре, Петрозаводск, «ПетрГУ», 1998, էջ 6:

հոմոգեն միատեսակ հանրույթ ընկալելու միտումը: Օրինակ՝ մեզ համար բոլոր հնդիկները միատեսակ են, այն դեպքում, երբ հնդիկներն իրենք իրենց մեջ հազարավոր տարբերակումներ ունեն:

Լինելով առաջնային, հետևաբար և կայուն՝ ազգային ինքնությունը այնուհանդերձ ենթակա է փոփոխության: Նրա շարժունակությունն ու համատեքստայնությունը կախված են «յուրայինի» և «օտարի» փոխակերպումներից, թե ինչպես են փոփոխվում «յուրայինի» և «օտարի» միջև անցկացված սահմանները, տարբերակման չափորոշիչները, իրավիճակային վերարժևորումները և այլն: Օրինակ՝ Ռուսաստանի համար մերձբալթյան հանրապետությունները «յուրայինից» կամ «ներքին օտարից» վերածվեցին «արտաքին օտարի»: Ազգային ինքնության գործընթացային բնույթով պայմանավորված՝ նրա առանձին տարրերի արդիականությունը փոփոխվում է. չէ՞ որ բոլոր տարրերը կոլեկտիվ ազգային ինքնության էվոլյուցիայի արդյունք են: «Յուրային-օտար» տարանջատումը, լինելով ազգային ինքնության հիմք, այդ ինքնության կառուցվածք է ներմուծում տարրեր, որոնց նկատմամբ նույնպես կիրառելի է նույն հակասությունը: Այսինքն՝ ազգային ինքնության կառուցվածքային տարրերի համար նույնպես կիրառելի է «յուրային-օտար» բաժանումը: Դիտարկենք դրանք առանձին-առանձին:

1. *Ազգային շահ(եր):* Ինքնությունը ձևավորվում է նույնականացման գործընթացում: Իսկ նույնականացումն այն «Ես»-ն է, որը գտել է իր «Մենք»-ը և միահյուսվել նրան: Այն, ըստ էության, վերքաղաքական երևույթ է, որն արտահայտում է ոչ միայն և ոչ այնքան այն, թե ինչով է մարդն ապրում, որն է նրա շահերի ու հետաքրքրությունների ոլորտը, որքան այն, թե հանուն ինչի է

մարդն ապրում, որոնք են նրա կյանքի ու մշակույթի գլխավոր արժեքներն ու իմաստները[42]: Ազգային շահի մասին չկա համընդհանուր պատկերացում: Մի շարք հեղինակներ պաշտպանում են այն տեսակետը, ըստ որի՝ ազգային շահն ունի օբյեկտիվ բնույթ՝ դիտարկելով դրանք որպես գոյության կամ կեցության պայմանների նկատմամբ ազգի վերաբերմունք: Կան հեղինակներ, որոնք ազգային շահը համարում են ֆիկցիա[43]: Դիտարկելով ազգային շահը տվյալ հանրույթում «յուրայինների» և արտաքին ու ներքին «օտարների» փոխհարաբերությունների, այդ թվում առաջին հերթին՝ պետության հետ կապի համատեքստում՝ ազգի ծագումը կարելի է կապել քաղաքական և տնտեսական անհավասարության առաջացման հետ: Ագրարայինից արդյունաբերական հասարակության անցման ընթացքում տիտղոսակիր բնակչությունը կլանում էր այլ էթնոսներին՝ ելնելով զուտ տնտեսական շահից: Այսպիսով՝ որոշակի ազգին պատկանելիությունը նշանակում էր անհավասարություն սոցիալական ռեսուրսներից օգտվելու հարցում, իսկ ազգային ինքնությունը խմբային ռազմավարություն էր, որը կոչված էր ապահովելու ռեսուրսների հասանելիությունը «յուրայինների» և անհասանելիությունը՝ «օտարների» համար: Ազգային շահերը երկու բաղադրիչների՝ հանրային շահերի (ազգային անվտանգության, անկախության, տարածքային ամբողջականության, այլ երկրների կողմից ներքին գործերին միջամտության անթույլատրելիու-

---

[42] Տե՛ս **Սողոմոնյան Գ.,** Ազգային ինքնություն և սոցիոմշակութային անվտանգություն, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2013, թիվ 141(4), էջ 18:

[43] Տե՛ս **Рябов О. В.,** Национальная идентичность: гендерный аспект, М., «Макет», 2000, էջ 74-75:

թյան) և պետական շահերի հարաբերակցության արդյունք են[44]: Շահերի այս երկու խմբերը կարող են հակասել միմյանց, ինչը նպաստում է ներքին թշնամու ձևավորմանը: Ազգային շահերի իրագործումը ենթադրում է «օտարի» հետ համագործակցություն կամ մրցակցություն, ինչպես նաև խոչընդոտների հաղթահարում, որոնց աղբյուրը հենց օտար-թշնամիներն են: Ընդհանուր առմամբ, ազգային շահերի պաշտպանությունը հիմնավորում է ներքին և արտաքին պատերազմների նախաձեռնումը:

2. *Ազգային արժեքներ և նորմեր:* Ազգային արժեքներն ու նորմերը, որպես կանոն տարբերվում, իսկ երբեմն էլ հակադրվում են օտար արժեքներին, որոնք դիտարկվում են որպես ավելի անարժեք, ցածր կամ «բարբարոսական»: Դրանցով պայմանավորված՝ օտարների նկատմամբ վերաբերմունքի նորմերն ու կանխատրամադրվածությունները շատ տարբեր են և հաճախ հակասական, քանի որ խառնվում են նմանակելու և տարբերվելու ցանկությունները: Սոցիալական միջավայրի արժեքները և միջխմբային հարաբերությունների բնույթն անմիջականորեն ազդում են ազգային ինքնության վրա:

3. *Ազգային տարածական-ժամանակային տարրեր:* Ինչպես արդեն նշվեց, «օտարի» հետ փոխհարաբերվելու գործընթացի արդյունքում «յուրայինի» տարբերակումն ու առանձնացումը հանգեցնում են սահմանի առաջացմանը: Այս բարդ գործընթացում սահմանը երբեմն դառնում է վճռորոշ գործոն[45]: Ներկա-

---

[44] Տե՛ս **Межуев Б. В.**, Понятие «национальный интерес» в российской общественно-политической мысли// Политическая наука в России: интелектуальный поиск и реальность. Хрестоматия, М., «Полис», 2000, էջ 441, 447:

[45] Տե՛ս **Никифорова Е.,** Граница как фактор формирования этнической общности // Кочующие границы / Под ред. О. Бредниковой, В. Воронкова, СПб., «ЦНСИ», 1999, вып. 7, էջ 44:

յումս ազգային ինքնությունը խստորեն կապված է տարածքայնության հետ: Նախկինում սահմանային գոտիների հողերի կորուստը կամ փոխանակումն առանձնակի վնաս չէր պատճառում ազգային ինքնությանը, իսկ արդի ժամանակներում այն դարձել է ինքնության կարևորագույն հիմնասյուն:

Սեփական տարածքի, սրբացված սահմանի մասին պատկերացումը, որը «յուրայինին» անջատում և պաշտպանում է «օտարից», կարող է միավորել և մոբիլիզացնել աննախադեպ մեծ հանրույթներ: Պատահական չէ, որ սեփական լեգիտիմությունը պահելու նպատակով իշխանությունները երբեմն աջակցում և նպաստում են «օտարի» կերպարի ձևավորմանը: Ազգային ինքնության ու նրանում անցյալի դերակատարման մասին հետազոտությունները ցույց են տալիս, որ անցյալի իրական և խորհրդանշական իրադարձությունները ազգային ինքնության միջուկն են: Ազգային պատմությունն անհրաժեշտ է պետություն-ազգ միությանը լեգիտիմություն հաղորդելու համար: Պատմությունը վերանայվում և կրկին գրվում է ներկա նպատակներին ծառայեցվելու համար: Անցյալի պահանջարկը աճում է հատկապես վտանգի սրման պայմաններում, և դժվար պահերին միշտ սկսում է աշխատել «կորուսյալ դրախտի» գաղափարը: Բայց անգնահատելի է նաև ներկայի դերը, որից ելնելով՝ մեկնաբանվում կամ ստեղծվում են անցյալը և ապագան, որոնց շուրջ մոբիլիզացվում և կազմավորվում են «յուրայինները»:

4. *Սոցիալական աշխարհում տեղի և գործառույթների պատկերացումներ:* Սեփական ազգի դերի և տեղի մասին օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատականները միշտ չէ, որ համընկնում են, բայց դրանք ևս նպաստում են ազգային ինքնության ձևավորմանն ու որոշակիացմանը: Հայ ժողովրդի ազգային դիսկուր-

սում, օրինակ, տարածված է «աստվածընտրյալության» և «հատուկ առաքելության» գաղափարը, ինչը նպաստում է «յուրայինների» կարգավիճակի բարձրացմանը: Մի շարք հեղինակներ կարծում են, որ ազգային ինքնության ձևավորման ու պահպանման մեխանիզմներում առանձնահատուկ դերակատարում ունի առասպելաբանական բաղադրիչը: Ավելին՝ ազգային հանրույթ ընդգրկվելու համար պարտադիր պայման է ազգային առասպելների յուրացումը: «Քանի որ առասպելները, էպիկական պատումները, լեգենդներն ու ավանդազրույցները գալիս են դարերի խորքից ու իրենց վրա կրում են այդ դարերի կենսակերպի ու մտածելակերպի հետքերը, ապա դրանք լավագույնս արտացոլում են Աստծո, բնության, հասարակության, մարդու, կյանքի, ազգի, հայրենիքի, պետության և այլ արժեքների ու երևույթների վերաբերյալ տվյալ ժողովրդի ինչպես արքետիպային պատկերացումները, այնպես էլ դրանց փոխակերպումները»[46]: Սեփական էթնիկ հանրույթի դիցաբանական ընկալումը հատկապես հատուկ է անցումային շրջաններին, քանի որ դիցաբանական մտածողության յուրահատկություններից մեկը իրականն իդեալականից չտարբերակելն է, ինչը նպաստում է ներազգային կապերի հոգեբանական կայունությանն ու զգայական համախմբմանը: Որպես կանոն, տարբեր ազգերի ինքնության հիմքում ընկած առասպելները պարբերաբար կրկնվում են: Ազգային առասպելաբանության հիմնական բաղադրիչներ կարող են համարվել.

- սեփական մշակույթի ու լեզվի հինավուրց և բնիկ լինելու գաղափարը,

---

[46] **Զաքարյան Ս.,** Հայկական էպոսի հերոսների վարքագիծը ազգային ինքնության համատեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2015, թիվ 2(17), էջ 3:

- ազգի բնօրրանի սահմանների ընդլայնման և բնակեցվածության տարածքի ընդլայնման (ծովից ծով Հայաստան) գաղափարը,
- սեփական ազգային տարածքում այլ խմբերի ձևավորման գաղափարը, ինչն այդ ազգին տալիս է «ավագ եղբոր» կարգավիճակ,
- նախնիների մշակութային և քաղաքական նվաճումների նկատմամբ «հեղինակային իրավունք» ունենալու համոզմունքը,
- հնում «յուրայինների» միասնականության մասին չափազանցված պատկերացումները,
- այլերկրացի թշնամիների գաղափարը, ինչը նպաստում է «յուրայինների» համախմբմանը,
- ապագա վերածննդի համոզմունքը և այլն[47]:

Ազգային խորհրդանշական միջավայրն անչափ հարուստ է: Խորհրդանիշների միջոցով տեղի է ունենում ազգային ինքնության ցուցադրությունը: Ծեսերն ու արարողությունները, արտաքին տեսքը, ազգային տարազը, պահվածքի կանոնները, մի խոսքով՝ ազգային խորհրդանիշների ողջ համակարգը (հայրենիք, մայրենի լեզու, օջախ և այլն) ամբողջությամբ նպաստում է «յուրայինի» առանձնահատկությունների շեշտադրմանը:

Ազգային ծեսերը բազմազան են: Դրանք որոշակիորեն նպատակ են հետապնդում ծեսի մասնակիցներին զգայականորեն ոգևորել, պահպանել և ամրապնդել միասնականությունը,

---

[47] Տե՛ս **Полосин В. С.,** Миф. Религия. Государство. М., «Ладомир», 1999, էջ 83; **Лурье С. В.** Национализм, этничность, культура. М., «Наука», 1999, էջ 101-102; **Шнирельман В.,** Ценность прошлого: этноцентристские исторические мифы, идентичность и этнополитика// Реальность этнических мифов. М., «Гендальф», 2000, էջ 22-23:

սահմանել հանրույթի ներսում և դրսում տեղի ունեցող փոխհարաբերությունների կարգը: Արտաքին տեսքը (տարազ, մարդաբանական յուրահատկություններ և այլն) ակնառու տարբերանշան է ազգայինի մակարդակում «յուրայինների» և «օտարների» սահմանազատման համար:

«Յուրայինին» «օտարից» տարբերակելու առանձնահատուկ գործոն է նաև լեզուն: Ազգային ինքնությունը կապված է ոչ այնքան խմբի անդամների կողմից մայրենի լեզվի օգտագործման, որքան նրա խորհրդանշական դերի հետ, որը նպաստում է խմբի հետ հարազատության զգացողության ձևավորմանը: Լեզվական նմանությունը, սակայն, կարող է նպաստել ոչ միայն մերձեցմանը, այլև տարանջատմանը: Ինչպես ցույց են տալիս ժամանակակից հետազոտողները, գերծանրաբեռնված լեզվական սիմվոլիզմը, վերածվում է ազգայնականության գաղափարական բազայի և բերում էթնոլինգվիստիկ լարումների բազմազգ (բազմալեզու) երկրներում: Լեզուն կարող է լինել ազգային միավորման և՛ նախադրյալ, և՛ հետևանք: Այսպես, գերմանական մոտեցման համաձայն, սկզբում եղել են լեզուն և մշակույթը, իսկ ֆրանսիականում լեզուն դիտարկվում է լոկ որպես քաղաքական ունիֆիկացիայի միջոց[48]:

Բացի դրանից՝ լեզուն կարևորագույն սոցիալական պաշար է: Ինչպես նշում է Ջ. Բրոյնը, «լեզուն ոչ միայն մշակույթի, հիշողության, առասպելների շտեմարան է, այլև քաղաքական, տնտեսական, իրավական, կրթական շահերի ոլորտ»[49]: Ազ-

---

[48] Տե՛ս **Донцов А. И., Стефаненко Т. Г., Уталиева Ж. Т.,** Язык как фактор этнической идентичности // Вопросы нсихологии, 1997, № 4, էջ 82-83:

[49] **Бройн Дж.**, Подходы к исследованию национализма// Нации и национализм, М., «Праксис», 2002, с. 209.

գային լեզվի՝ որպես ինքնության հաղորդչի ուժը կայանում է ոչ միայն սոցիալական իրողություններն արտացոլելու, այլև աշխարհի պատկերը կառուցելու նրա ունակության մեջ: Ընդհանուր առմամբ, ազգային ինքնության կառուցվածքը ենթադրում է փոխկապակցված տարրերի համակարգ, որտեղ լեզուն ոչ միայն խորհրդանիշների միջավայրի էական բաղադրիչ է ու առավել բարդ հաղթահարվող սահման, այլև կարևոր ազգային արժեք:

Ազգային ինքնությունն իր ողջ ծավալով կատարում է կոլեկտիվ ինքնությանը հատուկ բոլոր գործառույթները: Շատ հետազոտողներ ընդգծում են, որ ազգային ինքնությունը նախևառաջ կատարում է հուզական գործառույթ: Ազգային հանրույթի հետ նույնականացումն արդյունավետորեն նպաստում է անհատի անվտանգության, ինքնօրինակության, պատկանելիության զգացողության պահանջմունքների բավարարմանը:

Ազգային ինքնությունը կատարում է նաև իմացական (կոգնիտիվ) գործառույթ՝ նպաստելով շրջապատող աշխարհի կանոնակարգմանն ու հանդիսանալով սոցիալական դասակարգումը համապարփակող համակարգ, ինչից հետևում է, որ այն սոցիալական կարգի կազմակերպման ձևերից մեկն է: Կ. Վերդերին նշում է, որ «լինելով ինստիտուցիոնալացված՝ ինքնությունը տալիս է իշխանության համար հիմքեր և լեգիտիմության հնարավորություններ և հաղորդում նրանց կատեգորիաներ, որոնց տրվում է միաժամանակ բնական և սոցիալական իրական բնույթ»[50]: Ազգային ինքնության իմացական գործառույթի կատարման համար անհրաժեշտ են ինստիտուտներ, որոնք կապահովեն նրա պահպանությունն ու վերարտադրությունը. այդ

[50] **Вердери К.,** Куда идут «нация» и «национализм»?// Нации и национализм. М., «Праксис», 2002, с. 297.

դերը կատարում են դպրոցը, ընտանիքը, բուհը, եկեղեցին, ՁԼՄ-ները և այլն:

Ազգային ինքնության մեկ այլ կարևոր գործառույթ է այն կրողների վարքը կառավարելու և վերահսկելու հատկությունը: Ազգային ինքնությունը կարող է փոխակերպել սոցիալական իրողությունը: Հենց ազգային ինքնությունն է հանդիսացել մեծ պետությունների և միությունների (այլանսների) ստեղծման հիմք: Հետևաբար, պետությանն անհրաժեշտ է ամեն կերպ պահել ազգային ինքնությունը՝ բնական և ամուր կապեր կառուցելու, ազգի ու պետության միասնականությունն ամրապնդելու համար: Ազգային ինքնությունը հաճախ դառնում է քննադատության ու գաղափարների ճնշման գործիք «մարդկանց ուշադրությունը թերի գործառող սոցիալական կարգերից շեղելու համար»[51]: Ինչպես արդեն բազմիցս նշվել է, հանրությանը մոբիլիզացնելու և շահամիտելու ազգային ինքնության հատկությունն առավել հաճախ օգտագործվում է ճգնաժամային իրավիճակներում:

Ազգային հողի վրա գործառում են նույնականացման տարբեր դիսկուրսներ, որոնցով սահմանվում են ազգային պատկանելիության և գենդերային, կրոնական, քաղաքական և այլ ինքնությունների փոխհարաբերությունները: Գենդերը հասարակության կազմակերպման ունիվերսալ սկզբունքներից է: Նրա համընդհանրությամբ ու «բնականությամբ» է բացատրվում գենդերային դիսկուրսի ազդեցությամբ ազգային «յուրային-օտարի» կառուցարկումը: Ազգային ինքնության կոնցեպտը և դրա շատ բաղադրիչներ ունեն հստակ գենդերային երանգ: Օրինակ՝ ազ-

---

[51] **Прайс М.,** Телевидение, телекоммуникации и переходный период: право, общество и национальная идентичность. М., Изд-во Моск. ун-та, 2000, с. 115.

գային «յուրայինն» ընկալվում է որպես ընտանիք, ինչից ելնելով էլ տարածքը ներկայացվում է որպես Հայրենիք կամ մայր հող: Հայրենիքի գենդերային ընկալումն ընդգծում է ազգ-ընտանիքի սահմանները, հաստատում հարաբերականորեն հորիզոնական հավասարությունն իր անդամների միջև, լեգիտիմացնում իշխողներին: Ազգի ընկալումը՝ որպես տղամարդկային կամ կանացի (մասկուլին կամ ֆեմինին) որակների կրողի, կախված է նշանակալի օտարների գենդերային ընկալումից («տղամարդկային Բրիտանիա» ու «կանացի Ֆրանսիա» և այլն): Ազգային յուրայինին պատկանելիությունը պարտավորեցնում է որոշակի գենդերային պահվածք: Այսպես՝ հայ կինը պետք է հարմարվող լինի, իսկ օտար կանանց հաճախ այս որակը չի վերագրվում: Օրինակ՝ պատերազմի ժամանակ տվյալ «յուրայինների» համար օտար-թշնամի կանայք ընկալվում են որպես դաժան, կանացիությունից զուրկ արարածներ:

Ազգայինի համատեքստում «յուրային-օտար» տարանջատումն ազդեցություն է կրում նաև կրոնական դիսկուրսից: Եկեղեցին երկար ժամանակ կանոնակարգել և ստեղծել է էթնիկ ինքնության «առասպելախորհրդանշային բարդույթները»[52]: Այդ իսկ պատճառով ազգային «յուրայինին» պատկանելիությունը հաճախ ուղեկցվում է «յուրայիններին» և բարեկամաբար տրամադրված «օտարներին» «անաստված-թշնամի օտարից» պաշտպանելով և Աստծո կողմից սահմանված ազգային առաքելությունն իրագործելով:

Ազգային ինքնությունը փոխազդում է նաև քաղաքականի հետ՝ հաճախ դառնալով քաղաքական պայքարի օբյեկտ: Տարբեր քաղաքական ուժեր օգտագործում են ազգայինը որպես հա-

[52] Տե՛ս **Бройн Дж.**, նշվ. աշխ., էջ 209:

մախմբման (կոնսոլիդացիայի) կամ հակառակը՝ տարանջատման միջոց:

Թվարկված դիսկուրսները՝ գենդերային, կրոնական, քաղաքական, կարող են ազգայինի հետ տարբեր կերպ խաչվել: Օրինակ՝ արդի քաղաքական դիսկուրսի բաղադրիչներից մեկը հասարակական կարգը իդեալական վիճակի մոտեցնելու ուղիների որոնումն է (երկրի վրա Աստծո թագավորության կառուցում): Այստեղ ազգայինը միաժամանակ խաչվում է կրոնականի և քաղաքականի հետ, քանի որ իրական ազգային «յուրայինները» պետք է համապատասխան քաղաքական և կրոնական վարք դրսևորեն:

Դասակարգային նույնականացման դիսկուրսն այդքան էլ նշանակալի չէ: Սակայն, ըստ Օ. Բաուերի, «տիրապետող և ունևոր դասակարգերը, պաշտպանելով իրենց շահերը, հաճախ հենվում են այն բանի վրա, որ ազգային բնավորությամբ են պայմանավորված սոցիալական գործող կարգը և նրանց իրավունքների ոտնահարումը, կամ սեփականության վերաբաշխումը կհանգեցնի դարերով պահպանված ազգային դիմագծի կորստին»[53]:

Ազգային ինքնությունը մեծապես ազդում է նաև միջազգային հարաբերությունների դաշտում գործողների վարքի և ինքնին միջազգային հարաբերությունների համակարգի վրա: Ազգը չի կարող գոյատևել որպես մեկուսացված ու պարփակված հանրույթ: Ազգային հանրույթների միջև հաղորդակցությունից են հյուսվում ազգամիջյան հարաբերությունները:

Այսպիսով՝ ազգայինի համատեքստում «յուրային-օտար» փոխհարաբերության յուրահատկություններից կարելի է նշել

[53] **Бауэр О.,** նշվ. աշխ., էջ 97:

նրա կայունությունը, արժեքայնությունը և բնականությունը, որոնք ենթակա չեն ռեֆլեքսիայի: Հարաբերակցական և համակարգային մոտեցումները թույլ են տալիս ազգային ինքնությունը դիտարկել որպես հարաբերությունների համակարգ, նշել «յուրային-օտար» փոխհարաբերություններում դրանց միջև սահմանի կամ դրանց սահմանազատման կարևորությունը, ցույց տալ ազգային «յուրային-օտար» աստիճանակարգը: «Յուրային-օտար»-ի հայեցակարգային դերով է բացատրվում կոլեկտիվ ինքնության հիմնական հատկությունների պատկանելիությունը նաև ազգային ինքնությանը (ռեֆերենտություն, միատարրություն, շարժունակություն և համատեքստայնություն):

Ազգային ինքնությունն ունի կոլեկտիվ ինքնությանը համանման կառուցվածք: Նրա փոխկապակցված կառուցվածքային տարրերի հատկություններից են՝

- *ազգային շահերի հատուկ և լարված ընկալումը,*
- *օտարի ամբիվալենտ (երկարժեք) ընկալումը, տարբերվելու և նմանվելու ցանկությունների համադրությունը,*
- *որոշակի տարածքին, որպես «սեփականի», խիստ կապվածությունը և անցյալի մասին պատկերացումների կարևորությունը (դրանց վերարտադրության համար),*
- *սոցիալական աշխարհի կենտրոնում «յուրայինի» պատկերումը,*
- *լեզվի՝ որպես «յուրային-օտար» փոխհարաբերության սահմանի* պահպանման համար կարևոր նշանակություն ունեցող բաղադրիչի կարևորումը:

Ազգային ինքնությունն իրականացնում է կոլեկտիվ ինքնությանը հատուկ բոլոր գործառույթները. հատկապես կարևորվում են զգայական և վարքաբանական գործառույթները: Ազգային

դաշտում գործառում են նույնականացման դիսկուրսի տարբեր տեսակներ: Առավել պահանջարկված են գենդերային, կրոնական, քաղաքական դիսկուրսները, որոնք ազգային հանրույթին հաղորդում են բնական և սրբազան բնույթ և իրենց հերթին արդյունավետ օգտվում են ազգային ինքնության գործառական հնարավորություններից:

Նույնականացման դիսկուրսի կարևոր տարատեսակ է նաև տարածաշրջանային ինքնությունը:

Ժամանակակից աշխարհում տարածաշրջանային ինքնության հիմնախնդիրը ձեռք է բերել տեսական ու գործնական նոր հնչեղություն, թեև, որքան էլ տարօրինակ է, այն դեռևս չի արժանացել գիտական այնպիսի ուշադրության, ինչպիսին նկատվում է ազգային ինքնության նկատմամբ[54]: Նման «անուշադրությունն» այնքան էլ հիմնավոր չէ, եթե հաշվի առնենք, որ այն պատմականորեն նախորդում է ազգային ինքնությանը[55], և նրանց միջև գոյություն ունի գործառական մեծ փոխկապվածություն: Տարածաշրջանային ինքնությունը սոցիալական ինքնության տարատեսակներից մեկն է և սովորաբար արտահայտում է տարածաշրջանային պատկանելիությունը, երկրացիների համակեցության բնույթն ու բովանդակությունը: Տարածված տեսակետ է, որ տարածքի աշխարհագրական գործոններն էական ազդեցություն չունեն հասարակական հարաբերությունների վրա, քանի որ այս դեպքում վճռորոշն էթնիկական ինքնությունն է, որն ավելի կայուն է ու ինքնաբավ: Դժվար չէ նկատել, որ

---

[54] Տե՛ս **Туровский Р.,** Региональная идентичность в современной России//Российское общество: становление демократических ценностьей? М., «Гендельф», 1999, էջ 87:

[55] Տե՛ս **Желицки Б. Й.,** Центральноевропейская идентичность и Венгрия// Международный исторический журнал. М., 2000, № 11, էջ 19:

նման մոտեցման դեպքում տարածաշրջանային ինքնությունը դիտարկվում է որպես էթնիկականին ածանցյալ որակ, որն առաջ է գալիս միայն այնտեղ, որտեղ որոշակի տարածքում էթնիկական ինքնությունները խաչվում և ծնում են տարածքային բնույթի կոնֆլիկտներ: Սակայն այս մտայնության հետ չպետք է համաձայնել, քանի որ տարածաշրջանային ինքնությունն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք կարող են որակական նշանակություն ունենալ սոցիալական փոխազդեցություններում: Էթնիկական և տարածաշրջանային ինքնություններն ունեն բացարձակապես տարբեր հիմքեր, զարգացման տարբեր մեխանիզմներ, իսկ դրանց համընկնումները մասնավոր դեպքեր են: Պետք է նկատել, սակայն, որ էթնիկական ինքնության դերի կարևորումը նոր երևույթ է, քանի որ դեռ մեկուկես դար առաջ տարածաշրջանային ինքնությունն անհամեմատ ավելի վառ երևույթ էր, քան էթնիկականը, լեզվականը կամ քաղաքականը: «Ֆրանսիական հեղափոխության տարիներին,- գրում է Է. Հոբսբաումը,- Ֆրանսիայի բնակչության միայն կեսն էր կարողանում խոսել ֆրանսերեն, և միայն 12-13 տոկոսն էր դա անում «ճիշտ»: Ամենազարմանալի օրինակներից է Իտալիան, որտեղ պետականություն ձեռք բերելու ժամանակ հարյուր իտալացիներից երկուսը կամ երեքն էին տանը գործածում իտալերեն լեզուն»[56]: Կարելի է առանձնացնել երկու ոլորտ, որոնց շրջանակում տարածաշրջանային ինքնությունն ունի պրակտիկ մեծ նշանակություն և արժեք, դրանք քաղաքական և տնտեսական ոլորտներն են:

Առաջին՝ արևմտյան երկրներում վաղուց արդեն գիտակցում են, որ մարդկանց կայուն խմբերում ընդգրկելու համար ինքնու-

---

[56] **Hobsbawm E.,** Language, Culture, and National Identity.//Social Research. 1996, Vol. 63, № 4, p. 1068.

թյունն ունի քաղաքական մեծ ներուժ: Այն մի անգամ չէ, որ դարձել է հասարակական ուժերի համախմբման հիմք, ընդ որում՝ ինչպես ստեղծարար, այնպես էլ կործանարար նպատակների իրագործման համար: Մի անգամ չէ, որ այն հաջողությամբ օգտագործվել է և՛ առաջադեմ ու արդյունավետ հասարակական առաջնորդների, և՛ դեմագոգների կողմից: Այդպիսի ազդեցությունների համար անհրաժեշտ է իմանալ, թե հանուն ինչ նպատակների են մարդկանց համախմբում նմանատիպ խմբերում: Այդ նպատակները կարող են լինել շատ տարբեր, օրինակ՝ խմբի կողմից անհատի պաշտպանության, համերաշխության զգացումի բարձրացման, «յուրայիններին» «օտարներից» տարբերակելու, ինքնաճանաչման, հարևանների հետ համեմատվելու միջոցով սեփական որակների բացահայտման և այլն:

Երկրորդ՝ արևմուտքում տարածաշրջանային ինքնությունը մանրամասն ուսումնասիրվում է նաև առևտրատնտեսական հարաբերությունների կազմակերպման համար: Այստեղ, առաջին հերթին, հաշվի են առնվում սպառողների ճաշակի, հակումների, էթնիկ և աշխարհագրական առանձնահատկությունների, տարածաշրջանային տարբերությունների մասին ուսումնասիրությունները, որոնք հսկայական նշանակություն ունեն առևտրի արդյունավետ կազմակերպման և իրականացման համար:

Տարածաշրջանային ինքնության բնութագրման հարցում կան մի շարք տարբեր, հաճախ իրարամերժ տեսակետներ: Հետազոտողների մի մասը տարածաշրջանային ինքնությունը նույնացնում է ազգային ինքնության հետ՝ դրանց հակադրելով քաղաքակրթականը, օրինակ՝ դիտարկելով տարածաշրջանային

ինքնության դերը (ֆրանսիական, գերմանական և այլն) Եվրոպական միությունում[57]:

Հետազոտողների մեկ այլ խումբ տարածաշրջանային ինքնությունը համարում է ազգային ինքնությունների ընդհանուր գծերի գումար, որի կրողներն ապրում են որոշակի տարածքում: Օրինակ՝ կենտրոնաեվրոպական ինքնությունն իրենից ներկայացնում է Կենտրոնական Եվրոպայի երկրների ժողովուրդների ընդհանուր ճակատագրի և դրանից բխող, նրանց միջև փոխհարաբերությունների ու համագործակցության գիտակցումը, որը հակադրվում է տարածքային և առասպելաբանական հիմքերով ձևավորված «օտար» կամ այլ հանրույթների ու միջազգային հանրույթների համակարգերին[58]:

Երրորդների համար տարածաշրջանային ինքնության և դրա գործառության համար հիմք են պատկանելիությունը որոշակի տարածքին, սոցիալական սուբյեկտին[59], այդ տարածքում հաջողությունների հասած կարկառուն ներկայացուցիչներին «երկրպագելը» կամ նրանցով հպարտանալն ու ինքնահաստատվելը (օրինակ՝ արևելյան, կովկասյան, ղարաբաղյան և այլն):

Ինքնության առաջնային ձևերից մեկը տարածաշրջանային ինքնությունն է, քանի որ մարդը (ինչպես և ցանկացած կենդանի) սոցիալականացման առաջին «դասերը» ստանում է տարածքային ու տարածաշրջանային ներգործություններից: Հետագա-

---

[57] Տե՛ս **Коровицына Н. В.,** Регион догоняющей модернизации: коммунистический и либерально-демократический опыт// Международный исторический журнал, 2000, № 11, էջ 35-39:

[58] Տե՛ս **Желицки Б. Й.,** նշվ. աշխ., էջ 59:

[59] Տե՛ս **Косач Г.,** Региональное «гражданское полиэтническое сообщество» //Реальность этнических мифов. М., «Гендельф», 2000, էջ 58:

յում, որոշակի արժեհամակարգի ձևավորմանը զուգահեռ, նա իր կենսահոգեբանական ապրումներում սկսում է հետևել այս կամ այն առասպելաբանությանը՝ միաժամանակ իրեն նույնացնելով այն տարածքի հետ, որտեղ անցել է մանկությունը:

Այս դեպքում տարածաշրջանային ինքնությունը դիտարկվում է որպես «յուրայինների» հանրույթին պատկանելու գիտակցում, որն «օտարներից» սահմանազատված է որոշակի «թաղային», ադմինիստրատիվ, աշխարհաքաղաքական գործոններով: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ կարելի է ասել, որ տարածաշրջանային ինքնությունը, որոշ իմաստով, «ենթաինքնություն» է, որը միշտ ենթադրում է առավել մեծ հանրույթի՝ «մեգահանրույթի» կամ առասպելաբանական հանրույթի առկայություն, և որտեղ կոնկրետ տեղային կամ լոկալ ինքնության կրողներն ընդգրկված են որպես «յուրայիններ»: Տարածաշրջանային ինքնության ապրիորի «բիվալենտականությունը», ըստ որի՝ այդ ինքնության կրողը կապված է այնպիսի երկու հանրույթների հետ, որոնցից մեկն ընդգրկում է մյուսն ամբողջ ծավալով, տարածաշրջանային ինքնությունը տարբերակում է կոլեկտիվ ինքնության մյուս ձևերից: Այսպես, օրինակ, հայկական ինքնության կրողին հաճախ մեքենայաբար վերագրվում է կովկասյան ինքնություն, հոլանդականի կրողին՝ եվրոպական և այլն, այն դեպքում, երբ ազգային, գենդերային, պրոֆեսիոնալ պատկանելիությունները, որոշ բացառություններով, այդպիսի կապ չունեն:

Տարածաշրջանային ինքնության գործառական մակարդակը տարբեր շրջաններում տարբեր է: Այսինքն՝ սոցիալական համակարգի ինքնությունների բուրգում տարածաշրջանային ինքնության դիրքը կախված է մի քանի գործոններից.

- որքանով են համընկնում տարածաշրջանի բնակչության և էթնոսի բնակեցվածության տարածքները, այսինքն՝ համասեռության մակարդակը և «յուրայինների» առանձնահատկություններն էթնիկական, «բնական» չափանիշի հիմքի վրա,
- որքանով են միմյանցից տարբերվում հարևան տարածաշրջաններն էթնիկական, տնտեսական և այլ չափանիշներով, այսինքն՝ ինչպիսին է «օտարների» արտահայտվածության աստիճանը,
- ինչպիսին է տարածաշրջանային ինքնության սոցիալական պաշարը, որը ներառում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են նրա հեղինակությունը, վարկանիշը, մարդկանց շահերի ու հետաքրքրությունների բավարարման ունակությունը, տնտեսական ինքնուրույնությունը և այլն,
- ինչպիսին է տարածաշրջանային վերնախավի (իշխանական և ինտելեկտուալ) ջանքերի մակարդակը, տարածաշրջանային ինքնության կառուցարկման և այս ուղղությամբ գործառող ինստիտուտների (ԶԼՄ-ներ, դպրոցներ, բուհեր և այլն) աշխատանքների արդյունավետությունը:

Տարածաշրջանային ինքնության հզորացման դրական հետևանքներից մեկը դրա ներկայացուցիչների անվտանգության ապահովումն է, ինչը, օրինակ, թույլ տվեց վերահսկողության տակ վերցնել Հյուսիսային Իռլանդիայի կոնֆլիկտը[60]: Սակայն տարածաշրջանային ինքնության չափից ավելի արդիականացումն ու ակտիվացումը կարող են հանգեցնել սոցիալ-քաղաքական կայունության կորստին, էթնիկ զտումների մեխանիզմների

[60] Տե՛ս **Задорожнюк Э. Г.,** Политические процессы в Центральной Европе и становление новой региональной идентичности//Международный исторический журнал, 2000, № 11, էջ 151-153:

գործադրմանը, որի դեպքում տվյալ տեղային (լոկալ) հանրույթի մշակույթը հայտարարվում է բացարձակ արժեք, և խնդիր է դրվում տվյալ հանրույթի մշակույթը պաշտպանել օտարների ազդեցությունից: Այդպիսի քաղաքականությունն անխուսափելիորեն սադրում է կոնֆլիկտներ, մինչև իսկ ռազմական բախումներ ու գործողություններ և նույնիսկ միասնական պետության փլուզում (օրինակ՝ Հարավսլավիա, ԽՍՀՄ):

Կոլեկտիվ ինքնության հատկությունները որոշակի վերապահումներով կարելի է կիրառել նաև տարածաշրջանային ինքնության նկատմամբ:

Տարածաշրջանային ինքնության ռեֆերենտության մասին են վկայում նրա ակտուալիզացիայի վերը նշված գործոնները: Ինչպես տարածաշրջանային, այնպես էլ արտաքին գործոնների («օտարների») առկայությունը նպաստում է «յուրայինների» ինքնանույնականացմանը, ավելին՝ «օտարների» հետ սահմանի առկայությունը նպաստում է տարածաշրջանային ինքնության հզորացմանը: Ինչ-որ իմաստով կարելի է ասել, որ արտաքին սահմանները անջատողականության աճի նշանակալի գործոն[61] են: Այլ կերպ ասած՝ արտաքին «օտարների» հետ հակադրման ու համեմատման միջոցով «յուրայինների» որոշարկումը նպաստում է նրանց առանձնացմանը նաև ներքին «օտարներից»: Տարածաշրջանային «յուրայինների» համար կարող են լինել մի քանի ռեֆերենտ խմբեր: Ռեֆերենտ խմբերի մի քանի տարբերակների առկայությունը կապված է այն բանի հետ, որ այն «ենթաինքնություն» է: Այս առանձնահատկությունն ազդում է տարածաշրջանային «յուրայինների» և «օտարների» միջև բարձր մակարդակի

---

[61] Տե՛ս **Дробижева Л.,** Возможность либерального этнонационализма//Реальность этнических мифов. М., «Гендальф», 2000, էջ 91:

տարասեռության (հետերոգենության) վրա: Տարածաշրջանային «յուրայիններին» հակադրվում են ոչ միայն լոկալացման չափանիշով «օտարները», այլև այդ լոկալացման համար արտաքին «օտարները»: Օրինակ՝ «օտար» կարող է համարվել տարածաշրջանի վարչական կենտրոնը՝ կենտրոնական իշխանությունը (ինչպես Մոսկվան՝ ԽՍՀՄ-ում): Թեև պետք է նկատել, որ կենտրոնը հանդես է գալիս որպես քաղաքակրթական չափորոշիչ[62]:

Այս առումով տարածաշրջանային «յուրային-օտար» սահմանազատումն իրականացվում է ոչ միայն արտաքին «օտարների», այլև ներքին «օտարների»՝ կենտրոնական իշխանության հետ համեմատության միջոցով, ինչը նպաստում է տարածաշրջանային ինքնության տարասեռացմանը (հետերոգենությանը): Եվ հակառակը՝ մեգահանրույթի մեջ ընդգրկվելը կարող է նպաստել «յուրայինների» և «օտարների» միասեռացմանը (հոմոգենիզացմանը), որի դեպքում «յուրային-օտար» տարբաժանման բոլոր ներքին սահմանները վերացվում են, և մնում է միայն արտաքին սահմանը, որը նպաստում է մեգահանրույթի հետ նույնականացմանը (օրինակ՝ արտաքին վտանգի դեմ պայքարելու համար բոլոր շրջանների ու տարածքների մոբիլիզացումը):

Տարածաշրջանային ինքնության մյուս առանձնահատկությունը պայմանավորված է նրա դինամիկ բնույթով: Բնակության վայրի փոփոխումն արդեն իսկ բավարար պայման է նոր տարածաշրջանային ինքնության ձևավորման համար: Բացի դրանից՝ իշխանական կամ վարչական որոշումների արդյունքում հնարավոր է նոր սահմանների ձևավորում, ինչը նպաստում է նոր տարածաշրջանային ինքնության կառուցարկմանը: Սակայն, պետք

---

[62] Տե՛ս **Енина Л. В.,** Оппозиция «провинция-столица» в журналистском тексте// философские и лингвокультурологические проблемы толерантности: коллективная моногр, М., «ОЛМА-Пресс», 2005, էջ 222-223:

է նկատել, որ չնայած տարածաշրջանային ինքնության դինամիկ բնույթին, «երկրացիության» ինստիտուտը դեռևս մի քանի սերունդ շարունակում է գործառել տարբեր ոլորտներում՝ նույնիսկ նոր ինքնության ձևավորումից հետո:

Տարածաշրջանային ինքնության կառուցվածքում առանձնացվում են նաև կոլեկտիվ ինքնության «ավանդական» բաղադրիչները, որոնցից են վարչական իշխանությունը, «խորհրդանշական» վերնախավը, գիտական և ստեղծագործական մտավորականությունը, որոնք ԶԼՄ-ների միջոցով ստեղծում և տարածում են տեղային արժեքներ և խորհրդանիշներ: Այդ իսկ պատճառով նրանց շահերն ու հետաքրքրությունները տարածաշրջանային ինքնության կարևոր բաղադրիչներ են: Ի դեպ, վերնախավի շահերը որոշվում են նրա նպատակներով, ներքին բնորոշիչներով, կենտրոնի հետ հարաբերության բնույթով, և հենց այդ շահերի իրագործման նպատակով էլ ստեղծվում, միավորվում և բաժանվում են տարածաշրջանները:

Տարածաշրջանային ինքնության համար կարևոր նշանակություն ունի նաև ժամանակատարածային տարրը, այսինքն՝ աշխարհում դրա տեղն ու դերը: «Օտարների» նկատմամբ «յուրայինների» առավելություններն ու նրանց հատուկ նշանակությունն արտահայտվում են խորհրդանշանային բաղադրիչով: Ամենատարբեր ծեսերն ու ավանդույթները համախմբում (կոնսոլիդացնում) են հանրույթին, որոշում տվյալ շրջանի տեղը «մեգահանրույթում», ընդգծում են դրա ինքնակայությունը և այլն: Ցանկացած ծես, անմիջականորեն, թե միջնորդավորված, բովանդակում է «յուրային-օտար» ընդդիմությունը: Դրանցում հաճախ արտացոլվում են հերոսի կերպարը և նրա հաղթանակը թշնամիների նկատմամբ: Այս տեսակետից, օրինակ, կարելի է առանձնացնել քաղաքական, պետական, կրոնական մի շարք արարողու-

թյուններ, որոնք նվիրված են տոնական օրերին (շրջանի կամ քաղաքի ծննդյան օրեր, պատմական իրադարձությունների օրեր և այլն): Տարածաշրջանային ինքնության գործառույթների իրագործումն ու կենսունակության առանձնահատկությունները կախված են այդ տարածաշրջանի «յուրայիններ-օտարների» փոխհարաբերության առանձնահատկություններից: Տեղային ինքնության սոցիալական կապիտալի մեծացման, լեզվամշակութային տարբերակման պարագայում մեծանում է տվյալ գործառույթի արդյունավետությունը: Տարածաշրջանային ինքնության կրողները, ներառված լինելով «մեգահանրույթում» (օրինակ՝ Եվրամիություն), ընդգրկվում են ընդհանուր ինտեգրացիոն և ունիֆիկացիոն գործընթացների մեջ: Այս պայմաններում տարածաշրջանային ինքնությունը, ընդգծելով «յուրայինների» և «օտարների» բազմազանությունը, նպաստում է սեփական անկրկնելիության զգացողության մեծացմանը և ամրապնդմանը: Հենց զարգացած տարածաշրջանային ինքնությունն է թույլ տալիս Եվրոպային լինել միաժամանակ միասնական և բազմազան[63]: Տարածաշրջանով որոշված «յուրայինները» բավարարում են իրենց ներհանրութային, փոքր հայրենիքին պատկանելու ու տեղային ավանդույթները ճնշող ու արտամղող ունիֆիկացիոն գործընթացներից պաշտպանված լինելու պահանջմունքները[64]:

Տարածաշրջանային ինքնությունը մասնակցում է աշխարհի պատկերի կառուցարկմանը: Այն առավել է ակտիվանում հատկապես համակարգային ճգնաժամերի կամ համազգային տեսլականի բացակայության պարագայում՝ ստանձնելով փոխհա-

---

[63] Տե՛ս **Желицки Б. Й.,** նշվ. աշխ., էջ 70:

[64] Տե՛ս **Коровицына Н. В.,** Регион догоняющей модернизации: коммунистический и либерально-демократический опыт// Международный исторический журнал, 2000, № 11, էջ 55:

տուցող մեխանիզմի դեր և ստեղծելով լոկալ «աշխարհի պատկերը»[65]: Աջակցելով շրջակա աշխարհի մասին պատկերացումների կարգավորմանն ու ստեղծելով սոցիալական աշխարհի հասկացութային պատկերը՝ տարածաշրջանային ինքնությունը կատարում է կոգնիտիվ գործառույթ: Այս տեսակետից դժվար չէ նկատել, որ ինստիտուցիոնալ և լեգիտիմ բնույթ ունեցող հասկացութային ապարատի միջոցով տարածաշրջանային ինքնությունը նպաստում է սոցիալական կարգի և «իշխել-ենթարկվել» հարաբերության համակարգի կազմակերպմանը: Այլ կերպ ասած՝ տարածաշրջանային ինքնությունն ունի լեգիտիմացնող մեծ ներուժ: Ավելին՝ ինչ-որ իմաստով տարածաշրջանային ինքնությունն «օտարների» նորմերն ու արժեքները ողջ մեգահանրույթին հեռարձակող միջնորդ օղակ է, որը նպաստում է համակեցության և հանդուրժողականության ձևավորմանը:

Լոկալ հանրույթին պատկանելիության ընդունումն էական ազդեցություն է գործում տարածաշրջանային ինքնության կրողների, նրանց վարքային գործառույթների վրա: Այն, մասնավորապես, վարքի օրինակներ է տալիս քաղաքական (քաղաքական ակտիվություն, աստիճան, օրինապահություն և այլն), կրոնական (այլադավանների հետ հարաբերություն և այլն), տնտեսական (որոշակի «ավանդական» տնտեսական ոլորտներին մասնակցություն), գենդերային (ներընտանեկան հարաբերությունների և այլնի) ոլորտների գործառությանը: Լինելով ենթաինքնություն՝ տարածաշրջանային ինքնությունը մի կողմից՝ նպաստում է «յուրայինների» ինքնատիպության և ինքնակայու-

---

[65] Տե՛ս **Ачкасов В. А.,** Политическое мифотворчество как способ выражения региональных интересов// Журнал социологии и социальной антропологии, СПб, «Интерсоцис», 2002, Т. 5, № 3, էջ 96:

թյան պահպանմանը, մյուս կողմից՝ կարող է էապես հեշտացնել շրջանների և պետությունների, այսինքն՝ «յուրայինների» և «օտարների» միջև փոխազդեցության և ինտեգրացիայի գործընթացները:

Տարածաշրջանային ինքնությունն ունի մի շատ կարևոր ու դրական հատկություն ևս՝ այն ունակ է միավորելու տարբեր ռասաների, մասնագիտությունների և կրթվածության աստիճանի, կարգավիճակի մարդկանց, կոտրելու կամ թուլացնելու այդ խմբերի միջև առկա արգելապատնեշները: Տարածաշրջանային համերաշխությունը (սոլիդարությունը) հաճախակի հադիպող երևույթ է: Որոշ հետազոտողների մոտ տարածաշրջանային ինքնության վերաբերյալ ձևավորվել է այնպիսի պատկերացում, ըստ որի՝ այն ունի բուժիչ ներգործություն տարբեր տեսակի վախերի (ֆոբիաների), առաջին հերթին՝ ռասիզմի և այլ տեսակի դասակարգային ու խմբային ատելությունների ու օտարացումների վրա: Այդ հատկությունը հիմնվում է բնակության վայրի նկատմամբ հատուկ ջերմ զգացողության, նրա գեղեցկության մասին հիշողությունների վրա[66]:

Տարածաշրջանային «յուրային-օտարի» կառուցարկման վրա ազդեցություն են գործում տարբեր տիպի դիսկուրսներ: Առավել ազդեցիկ նույնականացնող դիսկուրսների թվին են պատկանում քաղաքականը, էթնիկականը և կրոնականը: Քաղաքական դիսկուրսի շրջանակում տարածաշրջանային «յուրայիններ» են համարվում որոշակի քաղաքական ռազմավարության հետևորդները: Որպես կանոն, լոկալ քաղաքական դիսկուրսը կարող է լինել կենտրոնամետ («յուրայինները» նրանք են,

---

[66] Տե՛ս **Смирнягин Л. В.,** О региональной идентичности//Вопросы экономической и политической географии зарубежных стран, Москва-Смоленск, «Ойкумена», Вып. 17, 2007, էջ 35-36:

ովքեր աջակցում են կենտրոնին և ընդգծում են նրա կառավարման իրավունքը) և անջատողական («յուրայինները» պետք է հանդես գան և պայքարեն կենտրոնի և շրջանի իրավասությունների վերաբաշխման համար): Լոկալ «յուրայինների» և «օտարների» որոշարկման վրա նշանակալի ազդեցություն ունի էթնիկական դիսկուրսը: Էթնիկությունը բնականություն և լեգիտիմություն է հաղորդում տարածաշրջանային հանրույթին և կարևոր սոցիալական կապիտալ է անհրաժեշտության դեպքում «արյունով» մոտ «օտարների» հետ կապերի կարգավորման համար: Ինչպես էթնիկական, այնպես էլ կրոնական դիսկուրսները հանդես են գալիս «յուրայինների» և «օտարների» որոշարկման նորմերի օգտին՝ կենտրոնի և շրջանի միջև նկատելի կրոնական տարբերությունների առկայության պայմաններում:

Այսպիսով, լինելով ենթաինքնություն, տարածաշրջանային ինքնությունը ենթադրում է «յուրայինների» ընդգրկում «մեգահանրույթի» մեջ: «Ենթաինքնության» բնույթով որոշվում են նրա հիմնական հատկությունները, որոնցից են տարբեր ռեֆերենտ խմբերի առկայությունը, բարձր տարասեռությունը, ներքին և արտաքին գործոններով պայմանավորված դինամիկությունը և համերաշխությունը: Այն հիմնվում է «յուրայիններ-օտարներ» ընդդիմության վրա: Շահերը, հետաքրքրությունները, ժամանակատարածային բաղադրիչները, սոցիալական աշխարհում «յուրայինների» տեղի և դերի մասին պատկերացումները նպաստում են «յուրայինների» առավել ինտեգրացիային և «օտարներից» տարբաժանմանը: Տարածաշրջանային ինքնությունը նպաստում է «մեգահանրույթում» և «ենթահանրույթում» կայունության պահպանմանը, բավարարում է պատկանելիության, ինքնուրույնության և պաշտպանվածության պահանջմունքները, ազդում է նրա կրողների պահվածքի ու վարքի վրա:

1.3. «ՅՈՒՐԱՅԻՆԸ» ԵՎ «ՕՏԱՐԸ» ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

«Յուրայինի» և «օտարի» փոխհարաբերության դրսևորումներից է մշակույթների երկխոսությունը, որը, կապված սոցիալական, քաղաքական, տնտեսական գործոնների ու տիրող փիլիսոփայական գաղափարաբանության հետ, պատմության ընթացքում տարբեր դրսևորումներ է ունեցել: Ընդհանրապես, համաշխարհային պատմության խճանկարային համայնապատկերը բաղկացած է բազմազան մշակույթներից ու քաղաքակրթություններից: Դրանցից յուրաքանչյուրը՝ ծագումից մինչև վախճան, անցնում է էվոլյուցիոն տարբեր փուլեր: Ցանկացած մշակույթ իր մեջ արտացոլում է պատմական զարգացման դինամիկան, այն ամբողջի մի մասն է և չի կարող մեկուսի լինել: Մշակույթներից յուրաքանչյուրն անկրկնելի է, ունի յուրահատուկ ճակատագիր և հենց դրա շնորհիվ էլ մարդկության համընդհանուր պատմամշակութային իրականության մեջ ունի իր ներդրումները, ընդ որում՝ մշակույթների բազմազան ձևերն ու դրսևորումները և համատեղ գոյությունը ենթադրում են նրանց միաժամանակյա համագոյակցման հատուկ երկխոսութային ձև[67]: Մշակույթների երկխոսությունները ժամանակատարածային այն կապերը, փոխհարաբերություններն ու փոխազդեցություններն են, որոնք պայմանավորում են մշակույթների դինամիկան ու զարգացումը:

Ցանկացած մշակույթ մինչև իր սեփական դեմքի, ինքնանույնականացման գծերի ձեռքբերումը հանդիպում է դժվարությունների՝ ընդունելով թե՛ բնական գործոնների, թե՛ «օտարնե-

[67] Տե՛ս **Демирчян М. А.,** Диалог культур в современных условиях. Ер., «Издательство ЕГУ», 2015, էջ 7-8:

րի» (թշնամի հարևանների) մարտահրավերները: Այս առումով Թոյնբին մի հետաքրքիր օրինակ է բերում այն մասին, թե ինչպես է բնական բացասական երևույթը դրական ազդեցություն ունենում հունական հասարակության ու մշակույթի վրա: Նա խոսում է Աթենքում հողերի չորացման երևույթի մասին: «Ի՞նչ ձեռնարկեցին աթենացիները: Երբ Աթենքի արոտավայրերը չորացան, մարդիկ անասնապահությունից ու հողագործությունից անցան ձիթենու պլանտացիաների մշակմանը: Այս ֆենոմենալ ծառը ոչ միայն կարող է քարերի վրա աճել, այլև առատ բերք տալ: Սակայն միայն ձիթապտղի յուղով հնարավոր չէր ապրել, և աթենացիները սկսեցին փոխանակել յուղը սկյութական ցորենի հետ: Յուղը տեղափոխվում էր ծովով, և դա իր հերթին նպաստեց ծովագնացության ու կավագործության զարգացմանը: Սկյութական շուկան նպաստեց նաև աթենական արծաթի, թանկարժեք քարերի ու կավի հանքերի զարգացմանը, քանի որ միջազգային առևտուրը պետք է ունենա դրամական տնտեսություն: Արտահանման, արդյունաբերության, առևտրական նավերի ու փողի շնորհիվ ի վերջո ձևավորվեց ռազմական նավատորմը: Այսպիսով՝ հողերի չորացումն Աթենքում հատուցվեց ծովագնացության զարգացմամբ: Աթենացիները հարյուր անգամ բազմապատկեցին կորցրածը»[68]: Բացասական բնական մարտահրավերն առաջացրեց տվյալ իրավիճակից դուրս գալու դրական լուծում: Այսպիսի երևույթ կարող է լինել նաև «օտարների» կողմից ագրեսիվ վերաբերմունքի դեպքում, որը ստիպում է շուտափույթ քայլեր ձեռնարկել:

Միևնույն ժամանակ բնական և սոցիալական մարտահրավերները կարող են ճնշել տվյալ մշակույթի ջանքերը և այն դա-

---

[68] **Тойнби А. Дж.,** Постижение истории. М., «Прогресс», 1991, с. 127.

տապարտել մահվան, ինչպես, օրինակ, մայաների քաղաքակրթությունը, որի վախճանը պայմանավորեց վայրենի ջունգլին, իսկ քրիստոնեությունը դարձավ մի շարք հեթանոսական և այլ քաղաքակրթությունների մահվան պատճառ և այլն:

Ամեն դեպքում անհրաժեշտ է հիշել մի կարևոր բան, որ սոցիալական ու բնական մարտահրավերների և նրանց պատասխան քայլերի կապը նույնական չէ պատճառահետևանքային կապի հետ, որն առկա է բնության մեջ: «Ի տարբերություն խիստ դետերմինիստական պատճառահետևանքային կապի՝ մարտահրավերների նկատմամբ պատասխան քայլը նախասահմանված չէ, բոլոր դեպքերի համար միանշանակ չէ և այդ պատճառով ներքուստ անկանխատեսելի է»[69]: Այստեղ չհամաձայնել Թոյնբիի հետ դժվար է, քանի որ պատմության մեջ գործում են մարդիկ, որոնք օժտված են գիտակցությամբ ու ազատությամբ և տարբեր կերպ կարող են պատասխանել արտաքին ազդեցություններին: Այս պատճառով միևնույն մարտահրավերը կարող է առաջ բերել բազմաթիվ պատասխան արձագանքներ:

Հայտնի է, որ տվյալ մշակույթի կայացման համար արժեքանպատակային կողմնորոշիչների փնտրտուքը բաժին է հասնում վերնախավային շերտին: Նրանց կողմից են մշակվում արժեքային ու իմաստային այն հիմքերը, որոնք անհրաժեշտ են տվյալ մշակույթի ինքնատիպության համար: Բնական ու սոցիալական մարտահրավերներին պատասխանելիս ստեղծագործ վերնախավը միաժամանակ պետք է անդրադառնա նաև դրանց նկատմամբ ժողովրդական զանգվածների հակազդեցություններին: Նրանց պահանջմունքների ու հետաքրքրությունների անտեսումը կարող է դառնալ տվյալ մշակույթի կործանման ներքին

[69] Տե՛ս նույն տեղում, էջ 97:

գործոն: Վտանգավոր է նաև այն իրավիճակը, երբ ժողովուրդն առանց քննադատության, այլ կերպ ասած՝ ճարահատ հանդուրժողականությամբ ընդունում է այն ամենը, ինչն առաջարկվում է վերևից: Այդ դեպքում ժողովուրդը վերածվում է անդեմ ամբոխի, քանի որ, ինչպես նկատում է Գ. Սողոմոնյանը, «Հանդուրժողականությունը պետք է լինի ոչ թե դատապարտված գոյության անճարակ պահվածք, այլ արժանապատիվ համակեցության շնորհ»[70]: Վերնախավային շերտերը ձևավորում են մշակույթի սոցիալական մարմինը՝ ստիպելով ժամանակակիցներին գիտակցել սեփական պատկանելիությունը դրան: Վերնախավը, գիտակցելով տվյալ մշակույթում մարտահրավերների առաջացրած խնդիրները, պետք է սևեռվի ոչ միայն արտաքին նմանակման, այլև ներքին ինքնատիպության վրա: Տնտեսական, սոցիալական, միկրո- և մակրոքաղաքական, հոգևոր խնդիրների լուծումը պահանջում է վերնախավային շերտերի ջանքերի միասնություն, քանի որ դրանք օրգանապես փոխկապված են: Մարդկանց հոգևոր ու կրոնական պատկերացումները քաղաքակրթության կայացման գործընթացում պետք է համադրվեն սոցիալ-քաղաքական մեխանիզմներում: Չինական քաղաքակրթության բազմադարյա պատմության մեջ այդպիսի օրինակ է կոնֆուցիականությունը: Նրա կրոնաէթիկական կանոնները դարձան քաղաքական փորձի հիմք, ընտանեկան ու աշխատանքային կյանքի կարգավորիչներ: Նույնիսկ մերօրյա արդիականացման ու համաշխարհայնացման գործընթացների պայմաններում դրանք

---

[70] **Սողոմոնյան Գ. Ա.**, Սոցիոմշակութային իմպերատիվների բնույթը արդի քաղաքական շուկայում // Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ, հոդվածների ժողովածու, Պրակ I, Երևան, «Նոյյան տապան», 2002, էջ 41:

ունեն իրենց նախկին ուժն ու ազդեցությունը, ուղղորդում են մարդկանց վարքն ու գործունեությունը: Մեկ այլ օրինակ է միջնադարյան Եվրոպան, որտեղ աստվածաշնչյան հեղինակությամբ լեգիտիմացվում են ֆեոդալամիապետական կարգերը: Վերնախավն իր առաջարկած արժեքները կարող է իրականացնել իշխանական լծակների և օրենսդրության միջոցներով, այդ իսկ պատճառով ինքնատիպ ու հզոր մշակույթ լինելու համար անհրաժեշտ է, որ հոգևոր, քաղաքական ու տնտեսական հարաբերությունները կրեն միմյանց կնիքները, գտնվեն անընդհատ երկխոսության մեջ: «Վերնախավային շերտերը պատասխանատու են քաղաքակրթության և նրա բնական ու սոցիալական շրջապատի հավասարակշռության համար, այդ է պատճառը, որ նրանք դատապարտված են անընդհատ որոնումների, իսկ եթե դա տեղի չի ունենում, ապա կամ նրանց փոխարինելու են գալիս ուրիշները, կամ ողջ սոցիոմշակութային ամբողջը դատապարտված է դեգրադացիայի և պատմության բեմից հեռացման»[71]:

Լոկալ մշակույթների կենսագործունեության տրանսֆորմացիոն գործընթացը նույնքան կարևոր է, որքան ինքնատիպության պահպանումը: Ինչպես նշում է Է. Հարությունյանը, «... հասարակական կյանքը և նրա կազմակերպման ձևերն ու եղանակները մշտապես փոփոխվում ու փոխակերպվում են՝ ապահովելով համակարգի զարգացումն ու վերընթաց վերարտադրությունը»[72]:

Մշակույթի և քաղաքակրթության մի փուլից մյուսին անցումը պայմանավորված է միաժամանակ և՛ ինքնանույնականաց-

---

[71] **Губман Б.,** Современная философия культуры. М., «Росспен», 2005, с. 495.

[72] **Հարությունյան Է. Ա.,** Քաղաքակրթության սոցիալական ու մարդկային որակների համատեղման հիմնահարցը // Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ, Երևան, «Նոյյան տապան», 2002, էջ 53:

ման, և՛ փոխակերպման միտումներով: Փոփոխությունն ու նույնականացումը փոխլրացնում են միմյանց, քանի որ մշակութային ամբողջականության պահպանումը պայմանավորում է նրա փոփոխման անհրաժեշտությունը: Մշակույթի մեջ առաջացած խնդիրները դառնում են այդ մշակույթի անցումային փուլերի հիմք: Անկրկնելի լինելով հանդերձ՝ մշակույթները ներթափանցելի են, և հենց այդ պատճառով ստեղծագործ վերնախավը կարող է մշակույթն ուղղորդել զարգացման այնպիսի ձևի, որի դեպքում տվյալ մշակույթի ներկայացուցիչներն ի վիճակի կլինեն յուրացնելու պատմության ընթացքում կուտակված սոցիոմշակութային կազմակերպվածության փորձը: Սա որոշ մշակույթների թույլ է տալիս թռիչք կատարել իրենց զարգացման փուլային շղթայում՝ անցնելով մեկ քայլ առաջ:

Մշակույթի ճգնաժամը պայմանավորված է ստեղծագործ վերնախավի կողմից նրանում առաջացած խնդիրների լուծման անկարողությամբ, այն վերնախավի, որը կորցրել է կապը զանգվածների հետ: Այս պարագայում արտաքին միջավայրի հետ առաջանում է անհավասարակշռություն, վերնախավն այլևս ի վիճակի չի լինում նոր դեղամիջոցներ առաջարկելու, և մշակույթն անկում է ապրում, մինչև իսկ կործանվում է: Այսպիսի վախճանը սակայն չի կարելի բնութագրել որպես ճակատագրական երևույթ, քանի որ այն կախված է ներքին և արտաքին պայմանների մի ամբողջ համակարգից, որը հնարավոր չէ կանխատեսել: Այսինքն՝ մշակույթի՝ որպես քաղաքակրթության համար ժամանակային որևէ սահմանափակում չկա. հնարավոր է՝ նրա կյանքի տևողությունը լինի մեկ դար, հնարավոր է՝ մի քանի հազարամյակ և ավելին: Չնայած որ մշակույթներն ու քաղաքակրթությունները հեռանում են պատմության բեմահարթակից,

այնուամենայնիվ դրանք անհետ չեն կորչում, այլ դառնում են մարդկության պատմական փորձն ու ձեռքբերումը:

Պատմությունն իրենից ներկայացնում է տարբեր մշակույթների միջև կապերի համընդհանրացում, փոխկապվածություն, և վերջին հաշվով այդ միտումը գերակայում է դեզինտեգրացիոն միտումների համեմատ: Սա մշակույթների, քաղաքակրթությունների երկխոսությունն է. «Քաղաքակրթությունների երկխոսությունը հենց իրենց ինքնանույնականացման ձեռքբերումն է»[73]: Այս երկխոսությունն ընթանում է ոչ միայն սինխրոն, այլև դիախրոն մակարդակներում, ոչ միայն միաժամանակ գոյություն ունեցող, այլև ժամանակի մեջ բաժանված քաղաքակրթությունների միջև: Վաղուց հեռացած մշակույթը կարող է տալ այսօր գոյություն ունեցող հարցերի պատասխանները:

Օտար մշակույթը հանդես է գալիս որպես սեփական մշակույթի ինքնաճանաչման և ինքնանույնականացման միջոց: Նայելով նրան՝ ստեղծագործ վերնախավը փնտրում է սեփական մշակույթի կերպարը, գտնում է առաջացած խնդիրների լուծումները, նույնիսկ այն դեպքում, երբ այդ օտար մշակույթը վաղուց արդեն կործանվել է: Ժամանակով բաժանված մշակույթների երկխոսությունը պատմության մեջ երբեք չի դադարում: Եվ երբ այդ երկխոսությունն ավելի ինտենսիվ է դառնում, և փորձ է արվում վերականգնել այն, ինչը վաղուց կործանվել է, ապա այս դեպքում մենք գործ ունենք Վերածննդի (Ռենեսանսի) հետ: Շատ հաճախ Վերածննդի երևույթը նույնացվում է իտալական վերածննդի հետ, որը ճիշտ չէ: Ռենեսանսը՝ հնության վերածնունդը, համամշակութային երևույթ է: Համեմատելով իտալական գրող Դ. Վազարիի (1511–1574) և չինական մտածող Հան

[73] Տե՛ս **Губман Б.**, նշվ. աշխ, էջ 496:

Յուի (768–824)՝ վերածննդի մասին պատկերացումները՝ Ն. Ի. Կոնրադը գրում է. «Իր երկրում այդ դարաշրջանը Վազարին անվանեց «Rinascita», իսկ Հան Յուը «ֆուգու»՝ իր երկրում: «Ֆուգուն» կազմված է երկու արմատից՝ «ֆու» նշանակում է «վերածնունդ», և «գու»՝ հնություն: Սրանց համադրությունը կարելի է հասկանալ «վերադարձ հնություն» կամ «հնության վերադարձ», այսինքն՝ դրա վերականգնում»:[74] Հին արժեքների, փիլիսոփայական համակարգերի, գեղարվեստաէսթետիկական մոտեցումների վերածնումը հատուկ է բոլոր մշակույթներին և կարելի է մեկնաբանել որպես տարբեր դարաշրջանների մշակույթների երկխոսություն:

Քաղաքակրթական գործընթացներում միշտ գոյություն են ունեցել դեզինտեգրացիոն ու ինտեգրացիոն միտումներ: Վերջինս ավելի շատ է դրսևորվում անցյալի մեծ մշակույթների առաջ գալուց ի վեր՝ մ.թ.ա. 4–րդ հազարամյակում: Արդեն նրանց միջև ձևավորվում են սոցիալ-մշակութային փոխհարաբերություններ, փոխանակումներ: Մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներում ձևավորվեցին արդեն քաղաքակրթությունների երեք հիմնական օջախները՝ եվրոասիական, հնդկական և չինական, որոնք, հետագայում ընդլայնելով ազդեցության գոտիները, էլ ավելի շատ ժողովուրդներ ու քաղաքներ ընդգրկեցին:

Մինչև Նոր շրջան, երբ համաշխարհային պատմության ակնհայտ լիդեր էր արևմտյան քաղաքակրթությունը, հիմնական ինտեգրացիոն ուժեր էին կայսերական քաղաքական համակարգերը և համընդանուր կրոնաաշխարհայացքային պատկերացումները: Նոր շրջանից սկսած, կապված բնագիտական-ռացիոնալիստական նվաճումների հետ, ինտեգրացիոն խթանիչ

---

[74] **Конрад Н. И.,** Запад и Восток. М., «Юсполитиздат», 1972, с. 212.

գործոն են դառնում գիտությունն ու տեխնիկան, սկսում է ուժ հավաքել արդիականացման գործընթացը, որի հաջողությունը պայմանավորված էր նրանով, որ անընդհատ բարելավում էր մարդկանց կենցաղային հարմարավետությունը: Կայսերական համակարգերում ինտեգրացիոն գործընթացն իրականանում է գաղութային քաղաքականության միջոցով, քանի որ կայսրության տիրապետության տակ են գտնվում բազմաթիվ ժողովուրդներ՝ իրենց յուրահատուկ ազգային մշակույթներով, որոնք փոխհարաբերվում են տիրապետող կենտրոնական մշակույթի մեխանիզմներով: Այստեղ ինտեգրացիան իրականանում է վերևից՝ պարտադրմամբ, և բազմաթիվ դեպքերում փոքր մշակույթներն այդպիսով կործանվում են: Գ. Ֆեդոտովը գրում է. «Կայսրությունն այնպիսի ճնշման է ենթարկում փոքր ու թույլ ժողովուրդների մշակույթները, որոնք հաճախ լինում են ավելի արժեքավոր, որակապես ավելի բարձր մակարդակում գտնվող և տիրապետող մշակույթի համար ավելի խոստումնալից, որ անհնար է դառնում այդ մշակույթների ծաղկման հնարավորությունը»[75]: Միևնույն ժամանակ, սակայն, տիրապետող մշակույթը կրում է իր տիրապետության տակ գտնվող փոքր մշակույթների ազդեցությունը: Այս երևույթը կարելի է ներկայացնել որպես մշակութային երկխոսության յուրահատուկ ձև, որը պայմանականորեն կանվանենք **կայսերական** մեխանիզմ: Այս մեխանիզմը տարածված էր մինչև գաղութատիրական համակարգերի վախճանը (20-րդ դարի 50-ական թվականներ): Մշակութային բռնի «ինտեգրացիան», կամ կայսերական մեխանիզմը ԽՍՀՄ-ում, փորձում էր օգտագործել նաև Ռուսաստանը: Թվում էր, թե

[75] **Федотов Г. П.**, Судьба Империй // Федотов Г. П., Судьба и грехи России. Избр. статьи по философии русской истории и культуры: В 2 т., СПб., «София», 1992, Т. 2, с. 305.

առաջ է գալիս մի ինչ-որ համամարդկային մշակույթ՝ զերծ ազգային հավակնություններից: Բայց դա զուտ պատրանք էր, քանի որ այն իրենից ներկայացնում էր փակ մշակույթ, իսկ փակ մշակույթը, ինչպես վկայում է փորձը, վաղ թե ուշ դատապարտված է կործանման:

Միջմշակութային փոխհարաբերություններում «յուրայինի» և «օտարի» հարաբերության բովանդակությունը պայմանավորված է տիրող արժեքային համակարգով, որի ձևավորման գործում կարևոր նշանակություն ունի քաղաքական համակարգը (մշակույթը կամ արժեքները): Մասնավորապես կարելի է առանձնացնել ժողովրդավարական և ավտորիտար ռեժիմները: Ցանկացած հասարակության կողմից «օտարի» ընկալումը կախված է տվյալ հասարակությունում տիրող քաղաքական ռեժիմից: Որքան ավելի շատ են հասարակության մեջ տարածված ժողովրդավարական արժեքները, այնքան օտարի նկատմամբ վերաբերմունքը բարեկամական և դրական է: Իսկ ավտորիտար ռեժիմների դեպքում օտարն ընկալվում է որպես թշնամի: Առաջին դեպքում կա միջմշակութային հանդուրժողականություն, այսինքն՝ օտար մշակույթն ընդունվում է սեփականին իրավահավասար: Այստեղ օտարն ուղղակի տարբերն է և ոչ թե ավելի ցածրը կամ թշնամին: Երկրորդ դեպքում մենք գործ ունենք անհանդուրժողականության հետ, քանի որ ավտորիտար ռեժիմով հասարակությունն ինքն է անհավասար, կան տարբեր դասակարգեր, որոնք մեկը մյուսի նկատմամբ գտնվում են «բարձր» և «ցածր» հարաբերության մեջ: Այս դեպքում «յուրայինի» և «օտարի» փոխհարաբերությունը նույնացվում է «բարձրի» և «ցածրի» հարաբերության հետ: Ավտորիտար հասարակությունն օտար մշակույթն ընդունում է որպես իր մշակույթից ցածր, ոչ մարդ-

կային, վայրենի և այլն: Այլ մշակույթների նկատմամբ այսպիսի անհանդուրժողական վերաբերմունքի պատճառներից մեկը, ինչպես նշվեց, ավտորիտարիզմն է: «Ժողովրդավարական հանդուրժողականության պայմաններում «մենք-նրանք» ընդդիմությունը ձեռք է բերում «յուրայինի» և «օտարի» ձև, իսկ ավտորիտարիզմի անհանդուրժողական պայմաններում՝ «բարձրի» և «ցածրի». առաջինը բնորոշում է էթնոսների փոխըմբռնումը, երկրորդը՝ թշնամություն»[76]:

20-րդ դարի կեսերից ինտեգրացիոն մեխանիզմը կայսերականից անցնում է ազատականի, այսինքն՝ տվյալ քաղաքակրթությունն ինքն է կայացնում այս կամ այն քաղաքակրթության հետ փոխհարաբերության մեջ մտնելու որոշումը: Սա դեռևս բացարձակ ազատություն չէ, քանի որ այս հարաբերությունում ազատությունը մի քանի կամ գուցե միակ տարբերակի ընտրությունն է: Ամեն դեպքում, այս ոլորտներում, թեկուզև պատրանքային, ինքնակամ ինտեգրման ընտրությունը դարձավ 20-րդ դարի մշակութային երկխոսության պարտադիր մեխանիզմ: Օրինակ՝ Եվրամիությունը չի հավակնում դառնալ կայսերական մի ինչ-որ համակարգ, այն դարձել է միջմշակութային ազատ երկխոսության մի մեծ բեմահարթակ, որտեղ յուրաքանչյուր մշակույթ հնարավորություն ունի ստանալու ժողովրդավարական չափանիշներին համապատասխանող, գլխավոր դերակատարություն: Այսպիսի միություններ այսօր կազմավորվում են բոլոր մայրցամաքներում: Նույնիսկ հին՝ կայսերական համակարգերում գոյություն ունեցող կապերը լիովին կարող են փոխակերպվել՝ իրենց գոյությունը շարունակելով նոր, ազատ կամքի հիմքով

---

[76] **Шипилов А. В.,** «Свои», «чужие» и «другие». От античности до современности // Социологические исследования. М., «Наука», 2006, № 5, с. 104.

ստեղծված միություններում: Այդպիսի միավորում է Բրիտանական համագործակցությունը, որն առաջ եկավ կայսրության դեզինտեգրման արդյունքում և հիմա դարձել է միջմշակութային երկխոսության միջոց:

Ինտեգրացիոն միտումների ամրացման գործում մեծ դեր են ունեցել և ունեն կրոնաաշխարհայացքային փնտրտուքները, չնայած որ դրանք ունեցել են նաև դեզինտեգրացիոն ազդեցություններ: Պատմության ընթացքի վրա հատկապես մեծ ազդեցություն են ունեցել համաշխարհային կրոնները՝ քրիստոնեությունը, մահմեդականությունը և բուդդիզմը: Մեծ դեր ունենալով առանձին քաղաքակրթությունների զարգացման գործում՝ դրանք ծառայել են նաև միջմշակութային փոխհարաբերություններին՝ առաջ բերելով երկխոսության անհրաժեշտություն: Համաշխարհային կրոններին հատուկ է իրենց հիմքի վրա տարբեր մշակույթներ միավորելու միտումը: Իսլամական քաղաքակրթությունը բազմաթիվ ժողովուրդների կապել է միմյանց: Քրիստոնեությունն ու բուդդիզմը ստեղծել են միջքաղաքակրթական կազմակերպություններ:

Նոր շրջանից սկսած՝ Արևմուտքը դառնում է քաղաքակրթական գործընթացների արդիականացման կենտրոն: Արդիականացումը հասարակության արդյունաբերական տեսակ է, որը ձևավորվել է 17-18-րդ դարերում և իր զարգացումն է ունեցել 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին կեսում: Սրա հետ մեկտեղ՝ արդիականությունն այդ դարաշրջանին հատուկ մշակույթի ինքնագիտակցությունն է՝ «արդիականության նախագիծը»: 18-րդ դարից սկսած՝ մարդկային գործունեությունն ընկալվում և իրականացվում է որպես մշակույթ: Այսպիսով՝ մշակույթը դառնում է բարձրագույն արժեքների իրագործում՝ մարդկության բարօրու-

թյան նկատմամբ հոգատարության ճանապարհով: Այդպիսի հոգատարությունը սկսում է աշխատել ինքն իր նկատմամբ և այդպիսով դառնում է մշակութային քաղաքականություն՝ հիմնված որոշակի գաղափարախոսության, մշակութային նախագծի վրա[77]: Արդիականացումն ուղղված է սոցիալական կարգավիճակի բարելավմանը՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառման միջոցով: Ինչպես նշում է Վ. Մեժուևը, «Արդիականացումը նախօրոք հայտնի և գիտակցաբար պլանավորված արդյունքներին հասնելն ու յուրացնելն է»[78]: Արևմուտքում արդիականացումն իրականացվում է հենց արևմտյան մեխանիզմներով, այդ պատճառով էլ գործընթացները սահուն և կանխատեսելի բնույթ ունեն: Բայց երբ ոչ արևմտյան քաղաքակրթություններն են փորձում նույն մեխանիզմներով ու սոցիոմշակութային չափորոշիչներով իրագործել արդիականացման գործընթացները, առաջանում են լուրջ բարդություններ ու հակասություններ: Այդ իսկ պատճառով արդիականացման մեխանիզմները պետք է համապատասխանեն տվյալ մշակույթի առանձնահատկություններին:

Արդիականացման համար կարևոր նախապայման է մարդու իրավունքների ու ազատությունների ինստիտուտը, քանի որ մարդն առավել արդյունավետ կարող է գործել միայն այն դեպքում, երբ ունի որոշակի իրավունքներ ու ազատություններ:

---

[77] Տե՛ս **Гвардини Р.**, Конец нового времени//Вопросы философии, М., «Наука», 1990, № 4, էջ 142:

[78] **Межуев В. М.,** Ценностьи современности в контексте модернизации и глобализации // Материалы постоянно действующего междисциплнарного семинара Клуба учёных “Глобальный мир”. М., «Институт микроэкономики», 2001, Вып. 11, с. 6.

Մյուս նախապայմանը տվյալ երկրի բաց և ժողովրդավար լինելն է: Ամբողջատիրության պայմաններում արդիականացումն ուղղակի անհնար է, ինչն ապացուցվեց ԽՍՀՄ-ի պարագայում:

Արդիականացման գործընթացը բերեց տեղեկատվական հասարակության, միասնական հաղորդակցական համակարգի առաջացմանը, ինչը մոտեցրեց մշակույթներն ու քաղաքակրթությունները: Մշակութային երկխոսության միասնական դիսկուրսիվ տարածության ստեղծման գաղափարական հիմքերը դրվեցին հետմոդեռնիստական փիլիսոփայության մեջ, և այժմ էլ առաջ են քաշվում նոր մոտեցումներ ու լուծումներ: Ընդհանրապես հետմոդեռնիզմում առաջադրվում են միջմշակութային երկխոսության, «յուրային-օտար» փոխհարաբերության տարբեր հիմնախնդիրներ, որոնց մեջ կարելի է առանձնացնել «օտարին» կամ «օտարներին» ընդունելու կամ հասկանալու հիմնահարցերը: Հետմոդեռնիզմի կողմից Վերածննդի հումանիզմի, ռացիոնալիզմի և եվրոպակենտրոն մտածողության քննադատությունն ուղեկցվում է նոր հումանիզմի փնտրտուքով՝ հնի նորացման միջոցով: Առաջարկվում է հումանիզմի նոր ըմբռնում մեր դարաշրջանի համար, որտեղ մարդը պետք է դիտարկվի որպես բնական ունիվերսումի մի մաս և ոչ թե նրա տիրակալ ու սպառող: Այդ հումանիզմի կենտրոնում դրվում է ոչ թե մարդու և մշակույթների եվրոպական նորշրջանյան ըմբռնումը, այլ միջանձնային և միջմշակութային փոխհարաբերությունները, նրանց երկխոսությունը: Այստեղ «յուրային-օտար» փոխհարաբերությունը «բարձրեր-ցածրեր», «վերին-ստորին» շերտավորումից անցնում է փոխըմբռնման և հանդուրժողականության փոխհարաբերության: Քննադատելով արդիականության սկզբունքները՝ հետմոդեռնիզմում փորձ է արվում դրանք վերանայել և ամբողջությամբ

դեն չշպրտել. «Ես կարծում եմ, որ մեզ համար ավելի լավ է սովորել արդիականության նախագիծն ուղեկցող լուծարված մշակույթի շինծու ծրագրի սխալների վրա, քան արդիականությունն ու իր նախագիծը հայտարարել ու ճանաչել անհիմն»[79]:

Հետմոդեռնիստական բանավեճերն ընդգրկում են սոցիալ-փիլիսոփայական պրոբլեմների մեծ շրջան, վերաբերում են կյանքի ձևերին, կենսաշխարհին, բնապահպանության, քաղաքականության ու բարոյականության հարցերին. հատուկ ուշադրության է արժանանում մշակույթը: Հետմոդեռնիզմի առավել էական առանձնահատկություններից մեկն այն է, որ դասական մարդակենտրոն հումանիզմից անցում է կատարվում ժամանակակից ունիվերսալ հումանիզմին, որն ընդգրկում է ողջ կենդանի աշխարհը՝ մարդկությունը, բնությունը, տիեզերքը: Հրաժարվելով ամեն տեսակ եվրոպակենտրոնությունից՝ մշակութային աշխարհը դիտարկվում է իր բազմազանության մեջ, որտեղ ամրագրվում է բոլորի իրավահավասարությունը: Այստեղ որևէ կենտրոնի շուրջ համախմբման գաղափարին հակադրվում է ապակենտրոնությունը, այսինքն՝ գերակայություն ունեցող բոլոր «կենտրոնների» ժխտումը (օրինակ՝ Երկիրը՝ տիեզերքում, մարդկային ցեղը՝ բնության մեջ, Եվրոպան կամ ԱՄՆ-ն՝ աշխարհի բոլոր ոլորտներում և այլն): Ժխտվում են տիրապետության, գերիշխանության, բռնության, պատերազմի գաղափարախոսությունները՝ հոգուտ պլյուրալիզմի, իրավահավասար երկխոսության, հաղորդակցային դիսկուրսի, համատեղ որոշում գտնելու, խաղաղության և համաձայնության արժեքների: Վերջիններս,

[79] **Хабермас Ю.**, Модерн-незавершенный проект // Политические работы, М., «Праксис», 2005, с. 25.

սակայն, հիմնված պետք է լինեն անխուսափելի տարաձայնությունների ու անհամաձայնությունների վրա:

Հետմոդեռնիզմը հակադրվում է այն բոլոր դիրքորոշումներին ու ուղղություններին, որոնք դեմ են պլյուրալիզմին: Այն հրաժարվում է ամեն տեսակ մոնիզմից, ունիֆիկացումից, տոտալիտարացումից և դրանց փոխարեն անցնում է բազմազանության, բազմատեսակության գաղափարներին, հարացույցների տարատեսակությանն ու մրցակցությանը, տարաբնույթ մշակույթների համագոյակցությանը: Հետմոդեռնիստական փիլիսոփայական գաղափարները չէին սահմանափակվում միայն արդիականության «միակության», «ամբողջականության» խորհրդանիշների դեմ պայքարով: Արդիականության դարաշրջանի հիմնական «մեղքեր» են համարվում մի շարք հակասականություններ, հատկապես այն, որ մշակույթն ու փիլիսոփայությունը չկարողացան ապահովել միասնականություն, մարդկային աշխարհում դրսևորվեցին բազմաթիվ պառակտումներ, որոնք առաջ բերեցին օտարում, թշնամական գաղափարական բևեռներ, տարբեր խմբերի, ազգերի, պետությունների միջև «յուրայինների» ու «օտարների» թշնամական փոխհարաբերություն և անհաղթահարելի լարվածություններ:

Հետմոդեռնիզմում տեղի է ունենում մշակույթի ապակենտրոնացում, խախտվում է մշակույթի նախկին աստիճանակարգը, ինչը հնարավոր է դարձնում «բարձրի» և «ցածրի», «էլիտարի» ու «զանգվածայինի» իրավահավասար համագոյակցումը: Սպառողական հոգեբանության վրա խարսխված զանգվածային մշակույթն արդեն հետարդիականության դարաշրջանում չափավոր իդեալների նկատմամբ որոշակի հակումներ է դրսևորում, փորձում է ազատվել սպառողական կենսաոճից: Զանգվածային

մշակույթի այս փոխակերպումները հաճախ անվանում են հետ-նյութապաշտական զանգվածային մշակույթ[80]: Տեղի է ունենում սոցիալ-քաղաքական և հոգևոր կյանքի թատերականացում: 80-ական թվականների կեսից արևմտյան որոշ ավանգարդիս-տական տեսաբանների մոտ տարածվեց այն կարծիքը, որ հա-սարակական կյանքն ու նրա ըմբռնման ձևերն ունեն կառնավա-լային, դիմակահանդեսային, թատերականացված բնույթ. քա-ղաքականությունը, տնտեսությունը և առևտրականացված ար-վեստը, ամեն ինչը վերածվեցին «համընդգրկուն շոու բիզնեսի»: Կյանքի այդ ոչ իսկականության, թատերական, ուրվականային վիճակի զգացողությունը դարձավ հետարդիական հասարակու-թյունում մարդկային անհատականության իրացման հնարավո-րությունների ու սահմանների վերաիմաստավորման դրդա-պատճառ[81]: Դրա հետ մեկտեղ սկսվում է սոցիալական ու մշա-կութային նոր ինքնություններ ձեռք բերելու փնտրտուքը: Հետ-արդիականությունն առանձնանում է նրանով, որ այն պարունա-կում է մեծ անորոշություն, բաց է, անավարտ է, ժամանակային և տարածական սահմաններ չկան: Պատմական ընթացքի անընդ-հատության գաղափարը դառնում է ոչ արդի, մշակույթը ձեռք է բերում խճանկարային տեսք, համադրվում են տարբեր դարա-շրջաններ ու մտածողության ձևեր: Արդիական է դառնում տար-բեր մշակույթների համագոյակցման և շփման հնարավորու-թյունների հարցը:

Մշակույթում ժամանակակից հետմոդեռնիստական իրավի-ճակը գիտատեխնիկական հեղափոխության ընթացքում ողջ

---

[80] Տե՛ս **Inglehart R.,**Culture shift in advanced industrial society. princeton (N. J.), 1990, էջ 151:

[81] Տե՛ս **Ильин И. П.,** Постмодернизм от истоков до конца столетия; эволюция научного мифа. М., «Интрада», 1998, էջ 178:

տեղի ունեցածի հետևանք է: Ծագելով 20-րդ դարի երկրորդ կեսին՝ այն հնարավոր է դարձնում «օտար» մշակույթների ձեռքբերումների յուրացումը: «Օտարը» դիտարկվում է որպես հավասար: Իհարկե, նրանք տարբեր են յուրայիններից, նրանք կարող են ունենալ հակադիր տեսակետներ, արժեհամակարգեր, տարբեր կրոններ, բարքեր, սակայն օտարներն այստեղ դիտարկվում են որպես ուրիշներ, պարզապես յուրայիններից տարբերվողներ: Ընդհանրապես հետմոդեռնիստական փիլիսոփայության կոնցեպտուալ համակարգում կարևորագույն տեղ է գրավում «ուրիշ» հասկացությունը. ««Ուրիշի» նորմատիվության առաջնայնությունը կապված է ուրիշներին ընդունելու և նրանց մասին հոգ տանելու բարոյականության զարգացման, ինչպես նաև ունիվերսալիզմից և էսսենցիալիզմից հետարդիականության հրաժարման հետ: Կոնկրետ փաստերը, որոնք լույս աշխարհ են բերում ուրիշների բարոյական փորձը, դիտարկվում են որպես ուրիշին ընդունելու և հարգելու գոյաբանական պահանջներ»[82]:

Հետմոդեռնիզմում բոլոր մշակույթներն իրավահավասար են, այստեղ ժխտվում է ամեն տեսակ բևեռացում, և առաջնային են դառնում մշակույթների ազատ երկխոսությունն ու ինտեգրացիան: Հետմոդեռնիզմն ընդունում է մշակույթների անկրկնելիությունն ու բազմակերպությունը, ընդունում է հերմենևտիկական մոտեցումը, որը ենթադրում է հրաժարում որևէ մշակույթի բացարձակացումից թե՛ անհատական և թե՛ սոցիոմշակութային մակարդակում: Այն առաջարկում է մշակել «յուրայինին» և «օտարին» հասկանալու համընդհանուր չափանիշներ[83]:

---

[82] **Кеглер Г. Г.,** Этика после постмодернизма//Вопросы философии, М., «Наука», 2006, № 3, с. 18.

[83] Տե՛ս **Ильин И. П.,** նշվ. աշխ., էջ 103-105:

Այսպիսով՝ միջմշակութային երկխոսություններն ու ինտեգրման գործընթացները համաշխարհային պատմական պրոցեսի ընթացքում դրսևորվել են տարբեր եղանակներով ու ճանապարհներով, այս կամ այն գործոններից կրել են տարաբնույթ փոփոխություններ ու ազդեցություններ: Կարելի է առանձնացնել միջմշակութային երկխոսության դրսևորման երկու եղանակ:

Առաջին՝ ***կայսրության*** *մոդել, որը «երկխոսության» ու ինտեգրացիոն գործընթացներում ենթադրում է բռնություն, մեկ կենտրոնական մշակույթի գերակայություն և նրա տիրապետության տակ գտնվող մյուս թույլ և փոքր մշակույթների վրա ճնշում:*

Երկրորդ՝ ***միությունների*** *ստեղծման մոդել, որի դեպքում ստեղծվում է մի այնպիսի դիսկուրսիվ տարածություն, որտեղ ազատորեն և իրավահավասար պայմաններում մշակույթները կարող են մերձենալ և մտնել երկխոսությունների ու փոխազդեցությունների մեջ: Այս մոդելի գաղափարական հիմքը հետմոդեռնիստական փիլիսոփայությունն է, որը ժխտում է ամեն տեսակ կենտրոնություն ու հեղինակություն և առաջ է քաշում երկխոսությունների նոր արժեքներ:*

Ժամանակակից գլոբալացվող աշխարհում միջմշակութային փոխհարաբերություններն առավել ինտենսիվ են դարձել, քանի որ նորագույն տեխնոլոգիաները թույլ են տալիս երկխոսության մեջ մտնել մեծ տարածությամբ բաժանված մշակույթներին: Մշակույթների փոխներթափանցումները, փոխազդեցություններն ազատում են մշակույթը ներփակվածությունից, ազգայնամոլությունից, հաղորդակից դարձնում համաշխարհային մշակույթին, ազգային մշակույթը դարձնում համաշխարհայինի

տարր[84]: Տեղի են ունենում մշակութային ինտեգրացիաներ ու բախումներ, և ինչպես նշում է Ն. Բորը, « ... մարդկային տարբեր մշակույթները ոչ թե բացառում, այլ լրացնում են մեկը մյուսին»[85]:

Այսօր մարդկության առաջ կանգնած ժողովրդագրական, բնապահպանական և պետությունների սպառազինության հետ կապված հիմնախնդիրներն արդյունավետ լուծումներ կարող են ստանալ միայն մշակույթների երկխոսության պայմաններում, ընդ որում՝ երկխոսություն թե՛ անցյալում մնացած, թե՛ ժամանակակից մշակույթների հետ, քանի որ այդ փոխհարաբերության արդյունքում ծնվում են համընդհանուր նշանակություն ունեցող արժեքներ, որոնց համատեքստում «յուրայինի» և «օտարի» փոխհարաբերությունը, ի տարբերություն ավտորիտարիստական բարձրեր-ցածրեր, մարդիկ-ոչ մարդիկ փոխհարաբերությունների ձեռք է բերում «յուրայինի» և «օտարի» երկխոսության և փոխհասկացման հարաբերության բնույթ:

---

[84] Տե՛ս **Սարգսյան Ա. Հ.,** Մշակույթի տեսություն// Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տնտեսագետ», 2003, էջ 60:
[85] **Бор Н.**, Избранные научные труды. М., 1971, Т. 2, с. 287.

1.4. «ՅՈՒՐԱՅԻՆԻ» ԵՎ «ՕՏԱՐԻ» ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՍԵՄԻՈՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդկության պատմության համայնապատկերն աչքի է ընկնում տարբեր երկրների ու ժողովուրդների սոցիոմշակութային բազմազանությամբ: Դժվար է պատկերացնել որևէ մշակույթ առանց լեզվի, որով խոսում է նրան պատկանող ժողովուրդը, արտահայտվում են յուրահատուկ դիցաբանական պատկերացումները, կրոնը, բարոյականությունը, արվեստը, գիտությունն ու փիլիսոփայությունը: Լեզուն և լեզվամշակույթն ունեն այնպիսի առանձնահատկություններ, որոնց ուսումնասիրությունը որոշակիորեն լույս է սփռում միջմշակութային հաղորդակցման և մշակութային երկխոսության հիմնախնդիրների պարզաբանման վրա: Այդ առանձնահատկությունների մեջ մտնում են այնպիսի երևույթներ ու մեխանիզմներ, ինչպիսիք են, մասնավորապես, կարծրատիպացումը և լեզվական մարկերները, որոնց գործառությամբ լեզվական առանձին միավորները ստանում են լրացուցիչ իմաստներ ու նշանակություններ և վերածվում միջմշակութային հաղորդակցման դիսկուրսի առանձնահատուկ տարրերի: Պատահական չէ, որ կարծրատիպերը դարձել են ժամանակակից հումանիտար դիսկուրսի առանցքային հիմնախնդիրներից մեկը, քանի որ դրանց հիման վրա ձևավորվում են մշակույթի խորհրդանիշները (մարկերները)[86]: Սակայն մինչ այս երևույթների բովանդակային պարզաբանումը հարկ է դիտարկել, թե միջմշակութային փոխհարաբերության և երկխոսության

[86] Տե՛ս **Тихонова Н. А.,** Стереотипы в отношении гастрономии как маркеры культурной идентичности//Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики,Тамбов, «Грамота», 2011, № 6(12), в 3-х ч., ч. 3, էջ 183:

գործընթացում ինչպիսի նշանակություն ունի տարբեր մշակույթների ներկայացուցիչների կողմից աշխարհի յուրացման ու աշխարհընկալման բովանդակությունը:

Մարդու կողմից շրջակա միջավայրի մասին տեղեկույթի ընկալումն ունի ընտրովի բնույթ: Յուրաքանչյուր մարդու մշակութային և կենսական փորձը, հույզերը, դաստիարակությունն ու կրթությունն անհատական ու անկրկնելի են, և այդ պատճառով մարդիկ միևնույն իրադարձություններին հաճախ տալիս են տարբեր մեկնաբանություններ: Բանն այն է, որ շրջակա աշխարհից ստացած տեղեկությունները մարդիկ համակարգում ու դասակարգում են ըստ իրենց նախապատվությունների ու աշխարհընկալման, քանի որ նրանք չեն կարող ապրել անկարգ ու օտար աշխարհում[87]: Այսինքն՝ ընկալված իրերը, մարդիկ, հարաբերություններն ու երևույթները ստորաբաժանվում են համապատասխան խմբերի, դասերի, տեսակների, որպեսզի աշխարհը ձեռք բերի կարգավորվածություն և մտերմիկ դասավորվածություն:

Հարկ է նշել, որ շրջակա աշխարհի ընկալման ու յուրացման ընթացքում մարդը ղեկավարվում է գեղեցկության, ճշմարտության, ընկերության, ազատության, արդարության և այլնի մասին սեփական պատկերացումներով, ինչն իր հերթին պայմանավորված է նախորդ կենսափորձով, անձնական հետաքրքրություններով, դաստիարակությամբ, սոցիալ-տնտեսական և այլ գործոններով: Այս գործոնների ազդեցությամբ շրջակա աշխարհը բացվում է մարդու առջև ամենատարբեր նշանակություններով՝ ամենանպաստավորից մինչև նրա կյանքին սպառնացողը:

---

[87] Տե՛ս **Вальденфельс Б.,** Повседневность как плавильный тигль рациональности//Социологос: Социология, антропология, метафизика, М., «Прогресс», 1991, вып. 1, էջ 42:

Շրջակա աշխարհը մարդու գիտակցության մեջ արտացոլվում է մշակութային «հայելու» միջով: Այլ կերպ ասած՝ աշխարհի ընկալումը ոչ թե պասիվ հայեցողություն է, այլ մարդու բարոյական հայացքների, մշակութային ավանդույթների, նախապաշարումների ու կարծրատիպերի «զտիչով» անցած և անձնավորված ըմբռնում, ինչը հնարավորություն է տալիս «մարդկայնացնելու» իրականությունը՝ այն դարձնելով առավել հասկանալի ու բացատրելի: Իսկ դա նշանակում է, որ մեր արարքների առնվազն առերևույթ պատճառները երբեմն պայմանավորված են այն բանով, թե ինչպիսին է աշխարհը մեզ թվում՝ անկախ նրա իրական գոյից: Պատահական չէ, որ մարդիկ հաճախ դառնում են իրենց ընկալումների գերին:

Եթե բոլոր մարդկանց մոտ զգայությունների ձևավորման գործընթացը միանման է, ապա ստացված զգայությունների մեկնաբանությունն ու նույնականացումը որոշվում են մշակույթով, ստացված տեղեկույթի գնահատման ու մեկնաբանման մշակութաբանական չափորոշիչներով: Այս առնչությամբ տեղին է նկատել, որ մարդու կողմից իրականության ընկալման ու յուրացման մշակութային կարևոր որոշարկիչներից մեկը լեզուն է: Ի դեպ, մշակութային տարբերությունների ու հակադրությունների պարագայում միջմշակութային հաղորդակցման հաջողությունը կախված է մի շարք գործոններից: Այստեղ կանխորոշիչ գործոններից մեկը, որը սահմանում ու որոշում է ինչպես հաղորդակցության շարժառիթները, այնպես էլ հաղորդակցական գործունեության բուն բովանդակությունը, այն է, որ հաղորդակցվողները պատկանում են տարբեր լեզվամշակույթների: Այս գործոնը մեծ ազդեցություն ունի ինչպես տարբեր մշակույթների ներկայացուցիչների միջանձնային շփման, այնպես էլ միջմշակու-

թային հաղորդակցման սոցիալական համատեքստի վրա: Ընդ որում՝ չի կարելի ասել, թե այս գործոնն ազդում է միայն «պարզունակ հաղորդակցվողների» վրա, իսկ միջմշակութային հաղորդակցության ոլորտում կրթվածությունն ու զարգացվածության աստիճանը կարող են հանգեցնել միջմշակութային ու միջլեզվական սահմանները ջնջելուն կամ հաղթահարելուն: Միջմշակութային հաղորդակցման ոլորտում մեծ փորձն ընդամենը նպաստում է իրազեկմանը՝ օտարի «այլության» գիտակցմանը, նույնիսկ նրա «գոյության իրավունքի» ճանաչմանը, բայց ոչ երբեք լեզվամշակութային բազմազանության անհետացմանը: Բանն այն է, որ յուրաքանչյուր լեզու ոչ միայն հաղորդակցային նշանների համակարգ է, այլև բովանդակում է ազգի կամ էթնոսի ողջ մշակույթը: Այլ կերպ ասած՝ լեզվամշակույթում արտացոլվում են տվյալ ազգի ինքնությունն ու ինքնագիտակցությունը: Նեղ իմաստով՝ էթնիկ ինքնագիտակցությունը մարդու նույնացումն է այս կամ այն էթնոսին, այսինքն՝ այն էթնիկական ինքնությունն է: Լայն իմաստով՝ այն ոչ միայն ինքնանույնացում է նշանակում, այլև էթնիկական մշակույթի ողջ համալիրի, ողջ մշակութային միջավայրի իմաստավորում, այսինքն՝ մշակութային ինքնության գիտակցում:

Էթնիկ և մշակութային ինքնությունները պատկանում են անձի հիմնարար բնութագրերի շարքին, քանի որ ինքնանույնականացման և ինքնագիտակցման գործողությունների շնորհիվ անձը կարողանում է իր «ես»-ը համեմատել այլոց հետ և օտար հասարակության մշակութային ու սոցիալական ձևերի ճանաչման, համեմատման ու գնահատման գործողությունների շնորհիվ ձեռք բերել ինքնագիտակցություն[88]: «Օտարի» և «յուրայի-

[88] Տե՛ս **Тихонова Н.А.,** նշվ. աշխ., էջ 183:

նի» տարբերակման և սեփական աշխարհընկալման ձևավորման հիմքում ընկած է էթնոկենտրոնությունը: Այն մարդուն հնարավորություն է տալիս օտարի սոցիոմշակութային առանձնահատկությունների ճանաչման միջոցով ուրվագծելու իր էթնոմշակութային սահմանները: Ընդ որում՝ այդ ճանաչումը միշտ իրականացվում է սեփական սոցիոմշակութային համակարգի համատեքստում: Այդ իսկ պատճառով «օտարի աշխարհի» պատկերը փոփոխվում է արտակարգ դանդաղ, նույնիսկ որակական շարժերը, որոնք տեղի են ունենում օտար մշակույթներում (ինչպես խորհրդային կարգերի տապալումը Խորհրդային Միության նախկին հանրապետություններում), նույնիսկ դրական բնույթի փոփոխություններն արագորեն չեն ամրագրվում «յուրայինների» ընկալումներում, հատկապես երբ «օտարների» վերաբերյալ ձևավորված գնահատականներն արդեն իսկ բացասական են, և հակառակը՝ բացասական պահերը հեշտորեն մտնում են առօրեականություն»[89]:

Միևնույն ժամանակ էթնոկենտրոնությունը՝ որպես սեփական մշակութային զտիչների օգնությամբ աշխարհի գնահատման ու իմաստավորման միտում, ինքնին ո՛չ վատ է, ո՛չ լավ. այն «սոցիալականացման և մշակույթին հաղորդակից լինելու նորմալ հետևանք է»[90]: Եվ այս առումով «միջմշակութային հաղորդակցման արդյունավետությունը կախված է աշխարհի իմաստավորման ու գնահատման էթնոկենտրոն մշակույթի ճկունու-

---

[89] **Кашкин В. Б.**, Маркеры своего и чужого в межкультурном диалоге//Взаимопонимание в диалоге культур: условия успешности: коллективная монография. Воронеж: «ВГУ», 2004, ч. 2, с. 61.

[90] **Мацумото Д.,** Психология и культура, СПб, «Прайм-Еврознак», 2002, с. 74-75.

թյունից»[91]: Ի դեպ, միջմշակութային հաղորդակցության սկզբունքներին ու գիտելիքներին անծանոթ հաղորդակցվողի ելակետային դիրքորոշումներն այնքան էլ ճկուն չեն, ինչի հետևանքով օտար մշակույթի նկատմամբ թշնամական վերաբերմունքը հաճախ տարածվում է նաև միջմշակութային հաղորդակցման լեզվի վրա: Որևէ ժողովրդի նկատմամբ թշնամական վերաբերմունքը, օրինակ, կարող է դառնալ այդ ժողովրդի լեզվի յուրացումը խոչընդոտող հանգամանք:

«Ուրիշին» հասկանալը հեշտ չէ, առավել ևս, երբ կողմերի միջև գոյություն ունեն լեզվական և, դրանով իսկ, նշանաբանական տարբերություններ: Մարդը հասկանում է միայն այն, ինչն արդեն որոշակիորեն ճանաչել է: Նորի ճանաչումը հաճախ զուգորդվում է վախով, քանի որ այդ նորը դեռևս անորոշ է և կարող է ընկալվել որպես սեփական գոյության սպառնալիք: Ինչ-որ իմաստով կարելի է ասել, որ լեզուն և այլ հաղորդակցային համակարգերն առաջացել են շրջակա չճանաչված, չմասնաբաժանված աշխարհի որոշարկման պահանջից: Ճանաչված, մասնատված և նշանակված աշխարհն առօրյա դիսկուրսում վերարտադրվում է որպես յուրային, անվտանգ, հարմարավետ, ոչ ագրեսիվ: Սեփական և օտար մշակույթների ճանաչված կարծրատիպերը նպաստում են հարմարավետության և անվտանգության զգացողության ստեղծմանը: Այդ զգացողությունը, որն անհատը ստեղծում և ձգտում է պահպանել, ինքնապահպանման այն բնազդներից մեկն է, որը նպաստում է մարդու ինքնության պահպանմանը: Ավելին՝ այդ այսպես կոչված հարմարավետ պրակտիկան կիրառվում է անգամ մանիպուլյացիոն գործընթացներում, քանի որ այն հենվում է ավանդույթների, նախապա-

[91] Նույն տեղում, էջ 77:

շարումների, առասպելների և այլնի վրա, որոնք հենց հարմարավետ պրակտիկայի դրսևորումներ են[92]:

Ցանկացած դիսկուրս ուղղված չէ տեղեկատվության փոխանցմանը. դիսկուրսիվ գործունեության հիմնական գործառույթը հաղորդակցային և կենսական տարածությունների սահմանազատումն է: Հաղորդակցային վարքն ուղղորդված է յուրային (սեփական) լսարանի հետ նույնականացմանը և օտարից սահմանազատմանն ու հեռավորության պահպանմանը: Միջմշակութային դիսկուրսը կապված է զանգվածների ու անհատների խմբերի միավորման և այլ խմբերից սահմանազատման հետ՝ հիմնվելով սոցիալական իրականության մեկնաբանության վրա: Նույնականացումն ու սահմանազատումը փոխլրացնող գործընթացներ են և նշանաբանական սահմանի երկու կողմերը:

Այս կամ այն մշակույթը կամ մշակույթի նշանային համակարգը գնահատող պարզունակ ըմբռնումներում, որպես կանոն, խախտվում է համընկնման կամ համապատասխանության սկզբունքը, այսինքն՝ համակարգին համապատասխանությունը, դրա հետ համատեղելիությունը: Բանն այն է, որ այդ գնահատականներում այլ մշակութային կոդին, լեզվին, նշանաբանական համակարգին պատկանող նշանները մեկնաբանվում են սեփական մշակույթի, սեփական լեզվի, սեփական համակարգի միջոցով[93]: Այս ճանապարհով օտար մշակույթի տարբեր տարրերի տրվում են տարբեր պիտակներ: Սակայն յուրաքանչյուր նշանաբանական համակարգ պայմանականությունների համակարգ է.

---

[92] Տե՛ս **Филинский А. А.,** Критический анализ политического дискурса предвиборных компаний, (диссертация на соискание ученой степени кандидата филологических наук), Тверь, Тверской гос. ун-т, 2002, էջ 59:

[93] Տե՛ս **Кашкин В. Б.,** Введение в теорию коммуникации, Воронеж, «ВГУ», 2003, էջ 89-90:

«Յուրաքանչյուր ազգ բնության մասին ունի իր պատկերացումը: Միջմշակութային դիսկուրսը, հատկապես որոշակիության ձգտման, գոյության ապահովման, սեփական մշակութային տարածությունն օտարից պաշտպանելու դեպքերում, պայմանական-մշակութայինն ընդունում է որպես բնական անհրաժեշտություն»[94]:

Մարդկային կենսագործունեության հիմքում ընկած են մի շարք արժեքաբանական տարբերակիչ գնահատականներ (վտանգավոր և անվտանգ, օգտակար և վնասակար, յուրային և օտար և այլն), որոնք միջմշակութային հաղորդակցության պարագայում դրսևորվում են վերաբերմունք արտահայտող կարծրատիպերի ու կանխադիրքորոշումների տեսքով՝ էական ազդեցություն թողնելով հաղորդակցության սկզբի, իրականացման և արդյունքի վրա[95]: Բանն այն է, որ մարդու հիմնական հատկություններից մեկը շրջակա աշխարհի առարկաների ու երևույթների տարբերակումը, դասակարգումն ու սահմանազատումն է: Այս առնչությամբ Յու. Լոտմանը նկատում է, որ «…անհատականության ինքնանույնականացման և արժեհամակարգի ձևավորման հիմնական մեխանիզմներից մեկը սահմանազատումն է, սեփական և օտար տարածությունների միջև սահմանի անցկացումը…: Սեփական տարածությունը սահմանվում է որպես «մեր», «յուրային», «մշակութային», «անվտանգ», «ներդաշնակ կազմակերպված» և այլն: Դրան հակադրվում է այն տարածու-

---

[94] **Барт Р.,** Система моды: статьи по семиотике культуры, М., изд.-во им. «Собашниковых», 2003, с. 426.

[95] Տե՛ս **Карасик В. И.,** Языковой круг; личность, концепты, дискурс, Волгоград, «Перемена», 2002, էջ 29-30:

թյունը, որը բնորոշվում է որպես «նրանց տարածություն», «օտար», «թշնամի», «քաոսային»»[96]:

Սահմանի գաղափարը մեծապես ու գլխավորապես զուգորդվում է «փշալարային», մեղմ ասած՝ «պատից այն կողմ», «ուրիշ», «սխալ», «արգելված» և այլ կարծրատիպերի հետ: Ի դեպ, «յուրայինների» և «օտարների» ֆիզիկական կամ քաղաքական սահմանները միշտ չէ, որ համապատասխանում են դրանց միջև եղած քաղաքական, տնտեսական, էթնոմշակութային ու պատմամշակութային սահմաններին ու դրանց առասպելաբանությանը: Ընդ որում՝ «յուրայինի» և «օտարի» տարանջատում և հակադրություն կարող է լինել ոչ միայն օբյեկտիվ, այլև առաջանալ գիտակցության մեջ նրանց սուբյեկտիվ արտացոլման պատճառներով[97]: Ընդ որում՝ մարդիկ, խմբերը, հանրույթները սահմանազատում են իրենց՝ «յուրայիններին», նրանցից՝ «օտարներից», անցկացնում են մշակութային սահմաններ սեփական հանրույթի կեցության որոշակիությունն ապահովելու նպատակով: Նրանք «կառուցում են» միջմշակութային պատնեշներ: Թեև սահմանազատման պատնեշներն անցողիկ են, միևնույն է, դրանք երկար ժամանակ պահպանում են իրենց վարքաբանական նշանակությունը, դրանք են ստեղծում այն աշխարհը, որտեղ ապրում են մարդ անհատը և էթնիկ խումբը: Այդպիսի օրինակ կարող է ծառայել միջգերմանական սահմանը: «Բեռլինյան պատի» ֆիզիկական ռեալությունը կարճ կյանք ունեցավ: Պետք է նկատել, սակայն, որ երկու Գերմանիայի միջև ֆիզիկական սահմանի ոչնչացումից հետո դեռևս պահպանվում է դրանց

---

[96] **Лотман Ю. М.,** Внутри мыслящих миров. Человек-текст-семиосфера-история, М., «Языки русской культуры», 1996, с. 175.

[97] Տե՛ս **Степанов Ю. С.,** Константы: словарь русской культуры. М., «Академический проект», 2001, էջ 127:

միջև վարքաբանական սահմանը. փոխվել է միայն սահմանի արժեքաբանական իմաստը: Եթե մինչ այդ ԳԴՀ-ն դիտվում էր չար ուժերի պատվար, ապա այժմ նախկին այդ տարածքը՝ իր բնակիչներով հանդերձ, ստացել է «մութ Գերմանիա» (Dunkeldeutschland) որակումը և այլն[98]: Այսպիսի օրինակներ շատ կան, որոնք ևս մեկ անգամ հաստատում են, որ բնության մեջ սահմաններ չկան. սահմաններն անցկացնում է մարդը, դրանք նշանային, մշակութային, գաղափարական բնույթ ունեն և իրենց հատուկ կարծրատիպային վարքով մարդկանց գոյության համար խիստ էական են: Ինչպես գոյություն ունի ներքին գրաքննություն, այնպես էլ գոյություն ունեն ներքին սահմաններ, որոնք միջմշակութային փոխհարաբերություններում կողմերի փոխհասկացման ու փոխըմբռնման արգելքներ են:

Միջմշակութային հաղորդակցման համար լեզվական, նշանաբանական սահմանի գործոնը հիմնարար, արմատական նշանակություն ունի: Հաղորդակցման սկիզբը ենթադրում է, որ հաղորդակցվողներն իրենց և համազրուցակցին ընկալում են որպես «յուրային» և «օտար»: Երկխոսության մեջ «օտարի» խոսքին տրվում են տարբեր իմաստներ ու նշանակություններ, այսինքն՝ մարկերներ՝ որպես սեփական լեզվի ու մշակույթի «սահմանից այն կողմ», «պատից այն կողմ» գտնվող լեզվամշակույթի ներկայացուցչի խոսք: Ընդ որում՝ կարևոր չէ, թե ինչ միջոցով է ընթանում երկխոսությունը՝ երկու լեզուներից մեկո՞վ, բոլորովին այլ լեզվո՞վ, թե՞ թարգմանչի օգնությամբ: Բոլոր դեպքերում հաղորդակցվողները հաշվի են առնում և ընդգծում իրենց պատկանելիությունը տարբեր մշակույթներին: Այսպիսի տարանջատումն

---

[98] Տե՛ս **Кашкин В. Б.**, Маркеры своего и чужого в межкультурном диалоге//Взаимопонимание в диалоге культур: условия успешности: коллективная монография. Воронеж: «ВГУ», 2004, ч. 2, էջ 49-50:

անպայմանորեն չի նշանակում հակամարտություն կամ ագրեսիվ հաղորդակցություն: Հաճախ հաղորդակցվողները փնտրում են փոխադարձ հասկացման ընդհանուր դաշտ՝ արդյունավետ հաղորդակցմանը նպաստելու համար մոտեցնելով լեզվամշակույթով դետերմինավորված աշխարհըմբռնումները: Հաղորդակցային հավասարակշռությունն ապահովվում է համակրանքի և հակակրանքի, փոխազդեցության և ազդեցության երկու մրցակցող սկզբունքներով: Անկախ այն բանից, թե այդ սկզբունքներից որին է նախապատվություն տրվում, *նշանաբանական սահմանի առկայության ճանաչումն ու ընդունումը միջմշակութային հաղորդակցման համար հաստատուն են:*

Միջմշակութային հաղորդակցությունում նշանաբանական սահմանը մարկերավորվում է, ընդ որում՝ այդ հաղորդակցությունում միջմշակութային հարաբերությունների մասին «յուրայինի» և «օտարի» մարկերները բաժանվում են երկու մակարդակների.

- *համահաղորդակցային դիրքորոշումների մակարդակ, որտեղ մարկերները վերաբերում են լեզվին (սեփական և օտար լեզու, մշակույթ),*
- *կոնցեպտների մակարդակ՝ լեզվի միավորների մարկերներ («յուրայինի» և «օտարի» բառ, անուն, բառի հասկացում, միֆոլոգեմ, էթնոնիմ, վարքի մոդել և այլն):*

Համահաղորդակցային դիրքորոշումների մակարդակում առօրյա գիտակցության մեջ օտար լեզուն ավելի շատ բացասական, քան դրական նշանակություն ունի, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ «օտար լեզու» ասելով մենք նկատի ունենք ոչ թե որևէ կոնկրետ լեզու, այլ օտարների կամ օտար տեքստերի հետ ապագա շփման հետ կապված պատկերացում-

ները, վախերն ու ֆոբիաները: «Օտար լեզվի էֆեկտը» պայմանավորված է մարդկանց մտածական ունակությունների ժամանակավոր անկմամբ, երբ նրանք օգտագործում են օտար լեզուն[99]: Սեփական ուժերի թերագնահատումը առաջ է բերում միանգամայն բնական պաշտպանական ռեակցիա կարծրատիպերի, պատկերացումների, սնահավատությունների, համալիր դիսկուրսիվ գործողությունների և այլ ձևերով:

Սովորաբար օտար լեզուն ընկալվում է որպես անսովոր, տարօրինակ, զարմանալի, իսկ յուրային, սեփական լեզուն՝ պարզ, թափանցիկ, հասկանալի[100]: Այսպիսի պատկերացումն այս կամ այն չափով հատուկ է բոլոր հաղորդակցվողներին՝ անկախ այն բանից, թե որքանով են նրանք տիրապետում միջմշակութային հաղորդակցության գիտական հիմունքների ոլորտին: Սոցիալական մակարդակում օտար լեզվի ընդհանրական գնահատականը դրսևորվում է զանգվածային մշակույթում, գրականությունում, կրթությունում, քաղաքական-տնտեսական նախընտրություններում և այլն: Այդ գնահատականն առաջ է գալիս բազմաթիվ սուբյեկտիվ գնահատականներից ու նախընտրություններից և իր հերթին ազդում է վերջիններիս վրա: Օրինակ՝ կրթության և ինքնակրթության ոլորտում օտար լեզվի (առաջին, երկրորդ և այդպես շարունակ) ընտրությունը մեծապես կախված է ոչ միայն աշխարհում տիրող տնտեսական ու մշակութային իրադրությունից, այլև ձևավորված կարծրատիպերից ու առասպելներից: Օրինակ՝ Հայաստանում առանձնակի կարևորվում է ռուսերենը՝ որպես երկրորդ լեզու, որի պատճառն ավելի շատ կարծրատիպային բովանդակություն ունի, քան տնտեսական

---

[99] Տե՛ս **Мацумото Д.,** նշվ. աշխ., էջ 273-274:
[100] Տե՛ս **Степанов Ю. С.,** նշվ. աշխ., էջ 140:

կամ քաղաքական: Սա կապված է, այսպես ասած, կենցաղային արժեքաբանության հետ, որը դրսևորվում է այլալեզու և այլ մշակութային միջավայրերում սեփական հաղորդակցային կարծրատիպերի ձևերով և զանգվածային գիտակցությունում այս կամ այն լեզվի կամ էթնոսի մասին առասպելների համակարգի և կարծրատիպերի, այլ կերպ ասած՝ լեզվական կամ էթնիկական «իմիջի» տեսքով: Այլ լեզուների կամ էթնոսների մասին առասպելները, որոնք կարելի է սահմանել որպես նշանաբանական սահմանի առասպելաբանություն, հարաբերակցության մեջ են գտնվում տվյալ սոցիումում հանդուրժողական գիտակցության դրսևորման մակարդակի և առանձին լեզվի օգտագործողի ու մշակույթի կրողի վարքաբանական կարծրատիպերի հետ: Օրինակ՝ հայտնի է, որ հայալեզու մշակույթը կրողների համար ֆրանսերենը գեղեցիկ է, իսկ գերմաներենը՝ կոպիտ, ֆրանսերենը պիտանի է սեր բացատրելու, հաճոյախոսություններ անելու, գեղեցիկ խոսելու, պոեզիայի համար, գերմաներենը՝ կարգուկանոնի, թուրքերենը՝ բարբարոսության և այլն:

Բնականաբար, ազգային-լեզվամշակութային համակարգում գնահատվում են այն լեզուները, որոնք այս կամ այն կերպ նշանակություն ունեն տվյալ մշակույթում: Դրանք կա՛մ տարածքով մոտ երկրների ու ժողովուրդների, կա՛մ մշակութապես կապված ժողովուրդների, կա՛մ միջազգային դոմինանտ լեզուներն են:

Միջմշակութային հաղորդակցման գործընթացում յուրայինի ու օտարի նշանաբանական մարկերավորման **երկրորդ մակարդակում (կոնցեպտների) հանդես են գալիս լեզվի միավորները:** Աշխարհի ընդհանրական պատկերի համատեքստում էթնոնիմները թույլ են տալիս հայտնաբերել արտաբանավոր միջա-

վայրի հետ բառի շփման այն տեսանկյունները, որոնք մնում են թաքնված, երբ լեզուն դիտվում է որպես բառերի հարաբերությունների համակարգ: Մարդը երբեք չի օգտագործում բառը հանուն բառի, նա ապրում և գործում է՝ օգտագործելով բառերն իր և համատեղ հասարակական կյանքի կազմակերպման համար: Ցանկացած արտահայտության կենտրոնն ընկած է դրա սահմաններից դուրս՝ սոցիալական միջավայրում: Բառն անբաժանելիորեն կապված է սոցիալական գործունեության հետ, այդ իսկ պատճառով միջմշակութային հակադրության պայմաններում էթնոնիմի՝ որպես վերբալ միֆոլոգեմի գործառության դիսկուրսիվային վերլուծությունը բացահայտում է լեզվամշակութային իմաստները:

Այդպիսի օրինակներ շատ կան. «հայի բախտ», «տիպիկ վրացի», «թուրքը մնում է թուրք», «անգլիական հումոր» և այլն, որոնցում հայ, վրացի, անգլիացի, թուրք բառերի ետևում կանգնած է ավելին, քան մարդկանց որոշակի խումբ: Էթնոնիմի գործածումը լեզվից օգտվողի գիտակցությունում առաջ է բերում մեկ միասնական ձևում փաթեթավորված, դրա նախորդ գործածության համատեքստերի մասին հիշողություններ, համապատասխան էթնիկ խմբի մասին գնահատականներ, նրանց հանդեպ էմոցիոնալ հարաբերություններ և այլն: Այսինքն՝ միջմշակութային դիսկուրսներում էթնոնիմն իր թիկունքում թաքցնում է առասպելը՝ որպես գործողության ղեկավարման միջոց:

Միջմշակութային հակադրության պայմաններում դիսկուրսն ունի ինտերտեքստուալ բնույթ, այսինքն՝ ցանկացած տեքստ, խոսք, արտահայտություն բովանդակում է ենթատեքստ, կանխատրամադրվածություն, «յուրայինի» և «օտարի» մասին հիշո-

ղություններ ու պատկերացումներ, որոնք պայմանավորում են ողջ դիսկուրսը[101]:

Բառույթ-էթնոնիմը, որի թիկունքում առասպելն է, բնութագրում է ոչ թե ինտերտեքստի երեք կողմերին, այլ հաղորդակցման հնարավոր մասնակիցներից մեկին: Բացի դրանից՝ էթնոմիֆոլոգեմը մինչ հաղորդակցության մեջ մտնելը հնարավոր զրուցակցին կամ հաղորդակցվողին վերագրում է իր արժեհամակարգով պայմանավորված նշաններ, և այդպիսի կանխատրամադրվածություններն անընդհատ ուղեկցում են միջմշակութային գործողությանը կամ իրադարձությանը, ընդ որում՝ միջմշակութային հաղորդակցության պատմության ողջ ընթացքում, ինչը, օրինակ, նկատելի է հայ-թուրքական հարաբերություններում: Հաղորդակցման ընթացքին բնորոշ է դերերի փոխադարձ սահմանումը, որտեղ հաղորդակցվողները ղեկավարվում են էթնոնիմներով ու առասպելներով ու դրանցից առաջացած կարծրատիպերով: Այստեղ առանձնահատուկ նշանակություն ունի աշխարհի կարծրատիպացման՝ մարդու, էթնոսի կամ սոցիալական խմբի ունակությունը կամ «բնազդը»: Կարծրատիպը սոցիալական խմբի յուրաքանչյուր ներկայացուցչի վերաբերյալ ստեղծում է նույնական տպավորություններ, որոնք ըստ երևույթին անհրաժեշտ են տվյալ սոցիալական խմբի հետ մեր հարաբերությունների, նրա հետ վարվեցողության միջոցների որոշարկման, առանձին անհատներից բաղկացած սոցիալական միջավայրին մեր հարմարվողականության համար: Էթնոմշակութային և լեզվամշակութային խմբի կարծրատիպերը կարող են և՛ ջնջել, մաքրել անհատների միջև սահմանները, և՛ հստակեցնել,

---

[101] Տե՛ս **Ильин И.,** Постмодернизм, Словарь терминов, М., «Интрада», 2001, էջ 101-103:

ամրացնել ու պահպանել դրանք: Ընդհանուր առմամբ մարդու վարքի կարծրատիպացումը նպաստում է ջանքերի տնտեսմանը, իջեցնում գոյության անորոշությունը և մարդուն ի վերջո հնարավորություն է տալիս հարմարվելու շրջակա սոցիալական միջավայրին[102]: Կարծրատիպը, որպես կանոն, արժեքաբանորեն կամ զգացմունքորեն մարկերավորված է: Օտար էթնոսներն այդ կարծրատիպերում հաճախ բնութագրվում են որպես ցածրակարգ խմբեր: Այս տեսանկյունից աշխարհի էթնոկենտրոն ընկալման միտումը մարմնավորվում է ազգային կամ էթնիկական կարծրատիպերում՝ էթնոկարծրատիպացման մեջ: Կարծրատիպացման գործընթացներն առկա են ոչ միայն այս կամ այն երկրի կամ ազգի ներկայացուցչի կերպարի ընկալման մեխանիզմներում, այլև ներառում են նաև առարկաների և իրադարձությունների մասին արտահայտություններն ու մտածողությունը: Կարծրատիպերն առարկայի մասին նաև այնպիսի ազգային, էթնիկական պատկերացումներ են, որոնք վերաբերում են այդ առարկայի լինելիությանը (ինչ տեսք ունի այն, ինչպես է գործում այն և այլն)[103]: Այլ կերպ ասած՝ էթնոկարծրատիպը դրսևորվում է որպես ուրիշների (ուրիշ մշակույթի) մասին այնպիսի մեկնաբանություն, որն անցնում է տվյալ մշակույթի միջով և պայմանավորված է տվյալ լեզվամշակութային մարկերներով: Կարծրատիպերի դասակարգման ժամանակ շատ կարևոր է սեփական (յուրային) խմբի հակադրումը ուրիշ (օտար) խմբին[104]: Կարելի է

---

[102] Տե՛ս **Lippmann W.,** Public Opinion, New York, Harcourt, Brace, 1992, էջ 81:

[103] Տե՛ս **Бартминьский Е.**, Базовые стереотипы и их профилирование//Стереотипы в языке, коммуникации и культуре: сб. статей/ сост. и отв. Ред. Л. Л. Федорова. М., «РГГУ», 2009, էջ 12:

[104] Տե՛ս **Карасик В. И., Дмитриева О. А.,** Лингвокультурный типаж: к определению понятия//Аксиологическая лингвистика: лингвокультурные типажи: Сб. науч. тр./Под ред. В. И. Карасика. Волгоград, «Парадигма», 2005, էջ 13:

առանձնացնել էթնոմշակութային կարծրատիպացման մի շարք տարատեսակներ.

- *պարզ ավտոկարծրատիպեր ու հետերոկարծրատիպեր, այսինքն՝ մեր պատկերացումները մեր և օտարների մասին,*
- *փոխաբերական ավտոկարծրատիպեր ու հետերոկարծրատիպեր, այսինքն՝ մեր ենթադրություններն այն մասին, թե ինչ են օտարները մտածում մեր և իրենց վերաբերյալ*[105]*:*

Հարաբերությունների և հաղորդակցային վարքի կարծրատիպացման բոլոր տարատեսակներում դիտարկվում է մի սկզբունք: Բինարային ընդդիմության սկզբունքով նույնիսկ ուրիշ ժողովրդի, ազգի սահմանման ու գնահատման ժամանակ գնահատողն օգտագործում է իրեն և յուրայիններին հատուկ բնութագրիչներ, սահմանափակվում է իրենց վարքաբանական համակարգով: Երբեմն կարծրատիպերը կեղծ են լինում, պարունակում են մոլորություններ, քանի որ կարծրատիպի հիմքում ընկած են տեղեկատվության դեֆիցիտն ու անհատի անձնային փորձը: Այդ իսկ պատճառով ինքնապատկերացումները բովանդակում են ավելի շատ դրական բնութագրիչներ, քան ուրիշների մասին պատկերացումները[106]: Եթե օտարներին վերագրվում է անբանություն կամ ծուլություն, ապա ենթադրվում է, որ յուրայիններն աշխատասեր են կամ հակառակը:

Այսպիսով՝ էթնոսը, իր ներկայացուցիչների դիսկուրսի միջոցով իրեն նույնականացնելով, սահմանագծում է սեփական էթ-

---

[105] Տե՛ս **Кашкин В. Б.**, Маркеры своего и чужого в межкультурном диалоге//Взаимопонимание в диалоге культур: условия успешности: коллективная монография. Воронеж: «ВГУ», 2004, ч. 2, էջ 57:

[106] Տե՛ս **Карасик В. И., Дмитриева О. А.,** նշվ. աշխ., էջ 12-13:

նոմշակութային տարածությունը, որտեղ առանձնահատուկ նշանակություն են ստանում «յուրայիններ» և «օտարներ» կոնցեպտները:

Անհատի սոցիալիզացման գործընթացում օտար սոցիումի մարկերը դառնում է սեփական՝ որպես հաղորդակցային անձի սահմանի մարկեր: Դիսկուրսիվ վարքում օտարի մարկերն առաջին հերթին դրսևորվում է այլ մշակույթի ներկայացուցչի հաղորդակցային վարքի խոսքային գնահատականով: Այդ գնահատականը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Այստեղ անփոփոխ է մնում միայն օտարի այլության, ուրիշ լինելու փաստի ճանաչումը:

Այսպիսով՝ երբ խոսք է լինում միջմշակութային հաղորդակցման համատեքստում լեզվամշակույթների համեմատության մասին, պետք է նշել, որ լեզվական համակարգի ոչ միայն առանձին միավորները, այլև ողջ համակարգն ունի ազգային-մշակութային մարկերավորում, ընդ որում՝ ցանկացած մարկերավորում կարող է փոխվել՝ վերածվելով իր հակադիրին, այսինքն՝ նախկինում որպես «յուրայիններ» ընդունվածները կարող են վերածվել «օտարների» և հակառակը:

ԳԼՈՒԽ 2. «ՅՈՒՐԱՅԻՆԸ» ԵՎ «ՕՏԱՐԸ» ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2.1. «ՅՈՒՐԱՅԻՆԸ» ԵՎ «ՕՏԱՐԸ» ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող տնտեսական, քաղաքական ու մշակութային ինտեգրման գործընթացների պայմաններում երկրներն ու ժողովուրդներն ակտիվորեն համագործակցում և փոխազդում են կյանքի տարբեր՝ քաղաքական, տնտեսական, կենցաղային, սոցիալական կամ մշակութային ոլորտներում և փոխազդում են տարբեր մակարդակներում՝ անձնական շփումներից մինչև միջազգային հանդիպումներ: Փոխազդեցության կողմերը տարբեր մշակույթների ներկայացուցիչներ են, և ի դեմս նրանց մենք գործ ունենք միջմշակութային փոխազդեցությունների հետ: Փոխազդեցության մեջ մտնող կողմերի մշակութային տարբերությունները հարուցում են մի շարք խնդիրներ, որոնց լուծման նախապայմաններից մեկը մշակութային երկխոսությունն է: Միջմշակութային երկխոսությունն ու շփումներն իրագործվում են տեղեկատվության, կենսափորձի, վարքի ձևերի փոխանակման միջոցով: Փոխհարաբերություններում տեղեկատվության փոխանակումը բերում է սոցիալական համակարգերի տարանջատման կամ համախմբման, ինչի հետևանքով այդ համակարգերը փոխհարստացնում են միմյանց: Պետք է նկատել, սակայն, որ փոխհարաբերությունների ընթացքում տեղի է ունենում ոչ միայն տեղեկատվության փոխանակում,

այլև մի համակարգի ներխուժում մեկ այլ համակարգ: Այս դեպքում գործընթացը ոչ թե նպաստում է սոցիոմշակութային համակարգերի փոխհարստացմանը, այլ վտանգում է նրանց ինքնությունը: Այդպիսի վտանգներ ծագում են հատկապես ժամանակակից միգրացիոն գործընթացների հետևանքով:

Միգրացիոն գործընթացները մարդկությանն ուղեկցել են պատմության ողջ ընթացքում: Առավել բարենպաստ պայմաններ որոնելու ճանապարհին մարդիկ նոր տարածքներ են յուրացրել, նոր երկրներ տեղափոխվել՝ փորձելով կամ հարմարվել նոր միջավայրին, կամ էլ այն հարմարեցնել իրենց պահանջներին ու պատկերացումներին: Նոր միջավայրն իհարկե թելադրել է իր պայմանները: Երկուստեք շփումներն առաջ են բերել յուրահատուկ փոխհարաբերություններ ու երևույթներ, ինչպիսիք են, օրինակ, հակազդեցությունը, հարմարումը, հակադրությունը, համագործակցումը, ձուլումը, բախումը և այլն:

Միգրացիան մեծապես պայմանավորված է սոցիալական իրականությունում տեղի ունեցող ապակառուցողական գործընթացներով: Կախված դրա պատճառների բնույթից՝ կարելի է տարբերակել ներգաղթյալների երեք տեսակ՝ **«քաղաքական ներգաղթյալներ»** կամ փախստականներ, **«տնտեսական ներգաղթյալներ»** և **«էկոլոգիական ներգաղթյալներ»**: Քաղաքական փախստականների զանգվածները լքում են կործանված հետգաղութատիրական երկրները, որոնցում կոնֆլիկտներն անընդհատ աճում են (Աֆղանստան, Սուդան, Անգոլա, Ռուանդա, Սոմալի, Լիբիա, Սիրիա և այլն): Տնտեսական միգրացիան առաջ է գալիս մարդկանց ֆինանսատնտեսական վիճակի վատթարացման պատճառով: Այս առումով մեծ անդունդ է առաջացել Հյուսիսի և Հարավի (հիմնականում՝ աֆրիկյան երկրների),

Արևելքի և Արևմուտքի միջև: Իսկ հողի էրոզիան, խմելու ջրի պակասը, էկոլոգիական ճգնաժամի պատճառով առաջացած կլիմայական փոփոխություններն առավել աղքատ երկրների բնակչությանը ստիպում են դիմել էկոլոգիական միգրացիայի: Ժամանակակից աշխարհում միգրացիան իր բոլոր ձևերով դրսևորվում է աշխարհի տարբեր մասերում և արդեն ստացել է գլոբալ գործընթացների որակ: Միգրացիոն մեծ հոսքեր կան դեպի զարգացած երկրներ, հատկապես՝ ԱՄՆ և եվրոպական երկրներ: Իր ստեղծման օրվանից ԱՄՆ-ն հանդես է եկել որպես ընդունող երկիր: Բայց այսօր այդ հոսքերը մեծացել են այնքան, որ սպառնում են ամերիկյան ինքնությանը: Դեռևս ԱՄՆ-ի հիմնադիրներն այն կարծիքին էին, որ ներգաղթյալներին պետք է հնարավորինս ցրված բնակեցնել տեղաբնիկ քաղաքացիների միջև, որպեսզի նրանք ձուլվեն ամերիկյան մշակույթին և դառնան ԱՄՆ քաղաքացի: Այդ իսկ պատճառով չէր խրախուսվում համայնքներով ապրելը: Ներգաղթյալների նկատմամբ նման վերաբերմունքն այդ ժամանակ կոնգրեսի կողմից ստանում էր օրենսդրական աջակցություն[107]:

Համաշխարհայնացման պայմաններում միգրացիան ուժեղանում է, ինչով պայմանավորված՝ տարբեր երկրներ ներգաղթում են բազմաթիվ մարդիկ, որոնք իրենց հետ բերում են «իրենց» մշակույթը, «իրենց» արժեքները, աշխարհի մասին «իրենց» պատկերացումները: Արտաքին և ներքին միգրացիան «յուրայինների» մշակույթի առաջ նոր մարտահրավերներ է ստեղծում՝ կապված «նրանց» ընդունելու, «նրանց» հետ հարմարվելու ու «նրանց» տվյալ մշակույթին ձուլելու և այլ խնդիրների հետ:

---

[107] Տե՛ս **Хантингтон С.**, Кто мы? М., «Транзиткнига», 2004, էջ 303-304:

Միգրացիոն հոսքերն առաջին հերթին առաջացնում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են մշակութային, սոցիալական ու էթնիկական այլ միջավայրին ինտեգրումն ու հարմարումը, որոնք, որպես կանոն, ուղեկցվում են ձուլման գործընթացներով: Մյուս կողմից, ներգաղթյալների մեծաքանակ հոսքերի պարագայում, որոնք միավորվում են դավանանքային, էթնիկական, մշակութային նմանություններով կամ ունեն միևնույն պատմամշակութային ծագումը և այլն, նոր մշակութային տարածությանը հարմարումը տևական ժամանակ է պահանջում, իսկ երբեմն էլ չի ավարտվում՝ առաջացնելով մի շարք խնդիրներ:

Քանի որ մշակույթն է այն ոլորտը, որտեղ կոդավորված են ինքնությունն ու հասարակության զարգացման անընդհատությունը, այդ իսկ պատճառով հենց մշակութային ինքնությունն է մարդուն տալիս կյանքում կողմնորոշվելու, իր տեղը կարևորելու և իրացվելու ինքնավստահությունն ու ապահովության զգացումը: Հետևաբար այս ոլորտում փոփոխություններն ունենում են բացասական հետևանքներ: Այս երևույթը լեհ սոցիոլոգ Պ. Շտոմպկայի կողմից ստացել է «մշակութային վթար»[108] անվանումը: Անձնային մակարդակում «մշակութային վթարը» դրսևորվում է մշակութային ապակողմնորոշվածությամբ, սեփական վարքի, արժեքային կողմնորոշիչների ու ձևերի նկատմամբ անվստահությամբ ու անորոշությամբ:

Միգրացիոն նման հոսքերի պայմաններում «յուրայինների» ու «օտարների» փոխհարաբերությունը նոր մարտահրավերներ է նետում սոցիալական կյանքի կազմակերպմանն ու սոցիոմշակութային համակարգին: Այս իրավիճակում կարևորվում է մշա-

---

[108] Տե՛ս **Штомпка П.**, Социология социальных изменений, М., Аспект-Пресс, 1996, էջ 375:

կույթների երկխոսության հնարավորությունների ու տարբերակների հարցը, քանի որ միայն երկխոսության արդյունքում է հնարավոր միջմշակութային փոխհարաբերությունների և դրա հետ կապված հիմնախնդիրների կարգավորումը: Սակայն միգրացիոն «զանգվածային ներխուժումների» պայմաններում ընդունող հասարակությունը ներգաղթյալներին՝ «օտարներին», դիտարկում է որպես սպառնալիք իրենց սոցիալական, մշակութային համակարգի նկատմամբ:

Սոցիալական համակարգի համար ապակառուցողական է ոչ թե մարդկանց վերաբնակեցման փաստը, այլ այն, որ մշակութային արժեքները, նորմերը, վարքի ձևերը, որոնք իրենց հետ բերում են ներգաղթողները, հաճախ հակասում են տվյալ սոցիալական համակարգի արժեքներին և չեն ընդունվում այդ մշակույթի կողմից, քանի որ «օտար մշակույթի տարրերի մուտքը սոցիալական օրգանիզմ անխուսափելիորեն հանդիպում է հիվանդագին դիմադրության»[109]: Այս հանգամանքը որոշակի խնդիրներ է առաջացնում համակարգի, տվյալ դեպքում՝ ընդունող երկրի հասարակության և ներգաղթյալների շփման ու հաղորդակցման գործընթացներում, որոնց հիմքերում կարող են ընկած լինել կողմերի ռասայական, ազգային, կրոնական, արժեհամակարգային, ավանդութային և մի շարք այլ տարբերություններ:

Ներգաղթյալների կազմած համայնքների և ընդունող հասարակության փոխհարաբերությունները գենետիկորեն տարբեր սոցիալական կազմավորումների հարաբերություններ են: Հետաքրքրական է այս երկուսի փոխազդեցության սոցիոմշակու-

---

[109] **Тойнби А. Дж.,** Цивилизация перед судом истории, М., «Айрис пресс», 2003, с. 66.

թային տեսանկյունը, քանի որ ընդունող հասարակությունում ներգաղթյալների համար հարմարվողականությունը նշանակում է սոցիոմշակութային փոխակերպման գործընթաց: Ընդունող հասարակությունը փոփոխվող հասարակություն է հենց միգրացիոն մեծ ներհոսքի և նրանց ազդեցության պատճառով: Որքան մեծ են տվյալ հասարակությունում ներգաղթողների քաղաքական, տնտեսական ու սոցիոմշակութային պահանջարկն ու նշանակությունը, այնքան մեծ է նրանց ազդեցությունը տվյալ հասարակության վրա: Այս առումով ընդունող հասարակությունը դառնում է փոփոխվող հասարակություն, որտեղ երբեմն տեղի են ունենում մի շարք էական տեղաշարժեր: Ներգաղթողներն իրենց էժան և ոչ պահանջկոտ աշխատուժի շնորհիվ ոչ միայն նպաստում են ընդունող հասարակության տնտեսության զարգացմանը, այլև ընդլայնում են այն և նոր շունչ են հաղորդում ընդունող հասարակության սոցիալ-տնտեսական ավանդական և հաճախ քարացած կապերին: Բանն այն է, որ նրանք իրենց հետ բերում են իրենց արժեքները, վարքի ձևերը, ճաշակները, պատկերացումներն ու ավանդույթները: Պատահական չէ, որ ժամանակակից համաշխարհային արվեստն ու գրականությունը, երաժշտությունն ու կինոարվեստն աչքի են ընկնում բազմազան էթնիկ մոտիվներով ու ձևերով: Միևնույն աշխատանքում կարելի է նկատել տարբեր էթնիկական արժեքների դրսևորումներ: Նման փոխազդեցությունների է ենթարկվում ոչ միայն երաժշտությունը կամ գրականությունը, այլև ողջ մշակույթը, սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքը և, ընդհանրապես, կենսաշխարհը: Եվ երբ ներգաղթողները շատ են լինում, փոխվում է ընդունող հասարակության ժողովրդագրական պատկերը՝ հարստացնելով նրա էթնիկական ներկապնակը, ինչպես դա

տեղի ունեցավ ԱՄՆ-ում, Կանադայում, Լատինական Ամերիկայի երկրներում, Ավստրալիայում և այլն: «Կա հնդկական թաղամաս Լոնդոնում, թուրքական՝ Բեռլինում,- գրում է Զ. Լևինը,- եվրոպական ցանկացած խոշոր քաղաքում այժմ գոյություն ունեն Հնդկաստանի, Աֆրիկայի, արաբական քաղաքակրթությունների կղզյակներ, որոնք ջազ և ռոքնռոլ երաժշտության միջոցով աստիճանաբար դուրս են մղում դասական երաժշտությունը»[110]:

Ընդունող հասարակության վրա ներգաղթողների դրական ազդեցությունն այն է, որ նրանք հարստացնում են ընդունող հասարակության մշակույթը, լեզուն, նորույթներ են մտցնում կենցաղի մեջ, փոփոխում ավանդույթները և այլն: Իտալական պիցցան, սպագետտին, չինական խոհանոցը և այլն, կարծես թե գրավել են աշխարհի տարբեր երկրները: Ամերիկյան Նոբելյան մրցանակի դափնեկիրների մեկ երրորդը և ԱՄՆ-ի ազգային ակադեմիայի մեկ քառորդը կազմում են ներգաղթյալները: 80-ական թվականներին Ֆրանսիայում հայտնի մարզիկների 70%-ը և դերասանների 60%-ը մարդիկ էին, որոնք էթնիկ ֆրանսիացիներ չէին, նրանք ներգաղթյալներ էին: Օրինակները շատ են և վերաբերում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներին: Կարելի է վստահաբար ասել, որ ներգաղթողների լեզվական ու մշակութային ազդեցությունը հարստացնում է տվյալ երկրի մշակութային համակարգը[111]:

Ներգաղթողների և նրանց կազմած համայնքների կամ սփյուռքի միջոցով ընդունող հասարակության անդամներն առավել մոտիկից են ճանաչում այլ ազգերին ու էթնոսներին, որի շնորհիվ հաճախ հաղթահարվում է «յուրայիններ» և «օտար-

---

[110] **Левин З. И.,** Менталитет Диаспоры, М., «Крафт+», 2001, с. 21.
[111] Տե՛ս **Левин З. И.,** նշվ. աշխ., էջ 22:

ներ» տարանջատումը: Կարելի է ասել, որ սփյուռքն իր գոյությամբ ստիպում է, որ ընդունող հասարակությունն աստիճանաբար փոխի իր մասին ունեցած պատկերացումները, սովորեցնում է հասարակությանը ներգաղթողների մեջ տեսնել նրանց անհրաժեշտ ու բնական տարրերը: «20-րդ դարի երկրորդ կեսին հետգաղութային երկրներից դեպի Արևմուտք մարդկանց տեղաշարժերն ընդունող հասարակությունները դարձրին ոչ միայն բազմամշակութային, այլև բազմաաշխարհայացքային, ինչը թույլ տվեց հայտարարել իրենց մասին այլ մշակույթներին ու մնացած աշխարհին»[112]:

Մյուս կողմից՝ հաճախ առաջ են գալիս սփյուռքի և ընդունող հասարակության շփման խնդիրներ՝ կապված այն բանի հետ, որ սփյուռքը կամ ներգաղթյալներն ընկալվում են որպես «օտարներ», հասարակական օրգանիզմում որպես օտար մարմին ու սպառնալիք: Սա ունի իր տարբեր պատճառները: Դրանցից է ներգաղթյալների համատեղ կեցությունը՝ միմյանց հետ բնակվելը, նրանց սոցիալական մեկուսացվածությունը, որն առաջ է գալիս մարդու սոցիալական բնույթի հոտային բնազդից, ինչից հաճախ շահադիտական նպատակներով օգտվում են համայնքային առաջնորդները:

Պատճառներից մյուսն այն հանգամանքն է, որ միգրացիոն հոսքերը հիմնականում տեղի են ունենում զարգացող երկրներից դեպի զարգացած երկրներ՝ հարավից՝ հյուսիս, արևելքից՝ արևմուտք, որոնց նկատմամբ ընդունող հասարակությունում արդեն կա «վերից նայելու» միտում: Ընդունող հասարակությունը հազվադեպ է ներգաղթյալների համար իրապես ընդունող համար-

---

[112] **Колесников А. С.**, Философская компаративистика в диалоге культур// Философские науки, М., 2004, № 11, с. 89.

վում. «Հիմնական բնակիչների համար ներգաղթյալը օտար է իր սահմանմամբ և կրկնակի օտար, եթե նա ասիացի է: Նրանց համար օտարը մշտական գրգռող ու նյարդայնացնող է»[113]: Նման նախատրամադրվածությունը կարծես գենետիկական որակ ունի: Սա, իհարկե, ընդունող հասարակության և ներգաղթյալների միջև անհանդուրժողականության ու անհավասարության մթնոլորտ է ստեղծում: Մյուս կողմից՝ հասարակության մեջ սոցիալական լարվածությունը, որն առաջ է գալիս տնտեսական դժվարություններից, աշխատանքի շուկայում ճգնաժամային իրադրություններից, տեղի հիմնական բնակչության մոտ առաջ է բերում դժգոհություն ու վատ տրամադրվածություն փաստացի կամ երևակայական մրցակցող ներգաղթողների նկատմամբ, եթե նույնիսկ նրանք չեն մրցակցում աշխատանքի շուկայում:

Պատճառներից հաջորդը կապված է զանգվածային ներգաղթի հետ, ինչին մենք ականատես ենք ժամանակակից Եվրոպայում: Սրա պատճառով ուժեղանում են ազգային ու շովինիստական տրամադրվածությունները, ռասիստական ու ազգայնական ակտիվությունը, ինչպես դա տեղի է ունենում այսօր Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և այլուր: Օրինակ՝ Ռուսաստանում ռուսների կողմից ցավագին է ընդունվում հայերի գործարարության հատկության շնորհիվ ձեռք բերված սոցիալական կարգավիճակը, և նրանց մոտ առաջանում է բացասական վերաբերմունք «օտար» հայերի (կովկասցիների) նկատմամբ, որը հաճախ արտահայտվում է բռնություններով: Կան տարբեր հասարակագիտական հետազոտություններ, որոնց հարցումների արդյունքում Ռուսաստանի բնակչության զգալի մաս են կազ-

[113] Տե՛ս **Левин З. И.,** նշվ. աշխ., էջ 33:

մում մարդիկ, որոնք իրենց սոցիալական խմբի համար օտար են համարում կովկասցիներին, մասնավորապես՝ հայերին[114]:

Համայնքը՝ որպես էթնոսոցիալական խումբ, ընդունող հասարակության համար օտարածին մարմին է, որին հասարակությունը գիտակցաբար թե անգիտակցաբար ձգտում է հետ հրել, ծայրահեղ դեպքում մեկուսացնել և, որպես կանոն, ստիպել ծառայելու սեփական շահերին՝ հարկադրելով «օտարին» վարվել այդպես և ոչ այլ կերպ: Հասարակությունը ներգաղթյալներին թողնում է կենսական տարածության միայն այն հատվածը, որը զբաղված չէ հիմնական բնակչության կողմից: Ներգաղթյալները, որպես կանոն, պատրաստ են ձեռնամուխ լինելու ցանկացած աշխատանքի, որով տարբեր պատճառներով չի ցանկանում կամ չի կարող զբաղվել հիմնական բնակչությունը: Այսինքն՝ օտարներին հիմնականում բաժին է ընկնում «սև» աշխատանքը:

Այլ մշակութային միջավայրի ներկայացուցիչների ներհոսքը բերում է այդ հասարակության արժեքային բազայի քայքայման, ռասիզմի, ազգայնականության վերածննդի, արտասահմանցիների նկատմամբ թշնամանքի: Հասարակության մեջ տարբեր էթնիկ խմբերի միջև առաջ են գալիս «յուրայիններ» և «օտարներ» տարբաժանումները:

Արդեն նշվեց, որ միգրացիոն հոսքը ոչ միայն մարդկանց վերաբնակեցման գործընթաց է, այլև մշակութային օրինակների, ավանդույթների ու կենսակերպերի վերաբնակեցման: Միգրանտներն այս ամենը տանում են այնտեղ, ուր որ գաղթում են: Նմանատիպ մշակութային ներխուժումներին (ինտերվենցիանե-

---

[114] Տե՛ս **Климова С. Г.**, Критерии определения групп «мы» и «они»//Социологические Исследования. М., «Наука», 2002, № 11, էջ 86:

ին) յուրաքանչյուր հասարակություն հիվանդագին է պատասխանում: Բարդանում են փոխհասկացման պայմանները: Այս գործընթացների հետ է կապված մշակութային ինքնության խարխլումը: Ավանդույթների կործանումը նշանակում է կենսական կողմնորոշիչների կորուստ, անձի հոգեբանական ծանրաբեռնվածություն, նրա լուսանցքայնացում: Զարգացած երկրներում կոնֆլիկտի սահմանն անցնում է «առավել զարգացած» և «ավելի քիչ զարգացած» կենսամակարդակ ունեցող խմբերի միջև: Այդ սահմանը հստակ դրսևորվում է այն պատճառով, որ այդ երկրներում հանցավորությունը, որպես կանոն, ունի «իմիգրանտային դեմք»: Ներգաղթյալներն այս երկրներում համալրում են ցածր կամ ոչ որակավորված աշխատուժի շարքերը, ճնշվում են տվյալ երկրի մշակույթով ու նրանց վերաբերմունքով: Սա նպաստում է արտասահմանցիներից ավելի շատ սահմանազատմանն ու օտարմանը, քան նրանց հետ ինտեգրացիային:

Հաշվի առնելով գոյություն ունեցող ժողովրդագրական խնդիրները՝ միգրացիայի խնդիրը զարգացած երկրների համար դարձել է կարևորներից մեկը: Եվրոպական քաղաքներում բավականին շատ են «օտար թաղամասերը», որոնք լցված են ներգաղթած «օտարներով»: Ֆրանսիայում այսօր ավելի շատ են հավատացյալ մահմեդականները, քան հավատացյալ քրիստոնյաները: Չնայած ալժիրցիները կազմում են բնակչության 10%-ը, նրանք արդեն գրավել են գրեթե բոլոր ֆրանսիական խոշոր քաղաքները և ստեղծել իրենց թաղամասերը (ֆրանսիական քաղաքների որոշ թաղամասերում նույնիսկ ոստիկանությունը չի համարձակվում երևալ): Այդպիսի «օտար թաղամասեր» կան ոչ միայն Ֆրանսիայում, այլև Գերմանիայում, Հոլանդիայում, Բելգիայում, Իսպանիայում, Իտալիայում և այլն:

Ընդունող հասարակության կողմից ներգաղթյալն ընկալվում է որպես օտար, քանի որ նա տարբերվում է իրենցից թե՛ կենսաբանական արտաքին տվյալներով, թե՛ մշակութային որակներով: Եվ գիտակցելով այդ փաստը՝ նա փորձում է ուսումնասիրել ընդունող հասարակության մշակույթն ու վարքի ձևերը, որպեսզի կարողանա մտնել կյանքի նորմալ հուն և օտարված չմնա այդ հասարակությունում: Ներգաղթյալը, ի տարբերություն ընդունող հասարակության անդամների, ըստ էության, մի մարդ է, որը պետք է կասկածի գրեթե ամեն ինչին, ինչը տվյալ խմբի անդամներին հուսալի է թվում: Նա այդ հասարակության անդամների համար մարդ է՝ առանց պատմության[115]: Նա մտնում է նոր միջավայր և պետք է յուրացնի նոր մշակութային օրինակը, որը տարբեր է իր սեփական մշակույթից: Եվ հաճախ ներգաղթողը ստիպված է լինում մի կողմ դնել իր մշակութային համակարգը՝ արժեհամակարգը, ավանդույթները, սովորույթներն ու վարքի ձևերը, և անցնել նոր մշակութային համակարգի յուրացմանը:

«Ընդունող հասարակության մշակութային օրինակը,- գրում է Ա. Շյուցը,- ներգաղթողի համար ոչ թե ապաստարան է, այլ արկածների տեղ, ոչ թե ինքնըստինքյան հասկանալի մի բան, այլ ուսումնասիրման պրոբլեմատիկ թեմա, ոչ թե պրոբլեմատիկ իրադրությունների լուծման գործիք, այլ հենց պրոբլեմատիկ իրադրություն, որը դժվար է հաղթահարել»[116]: Ներգաղթողին դիտարկելով որպես օտար՝ կարելի է առանձնացնել ընդունող հասարակության նկատմամբ նրա դիրքորոշման երկու հիմնական բնորոշ գիծ՝

---

[115] Տե՛ս **Шютц А.**, Смысловая структура повседневного мира (очерки по феноменологической социологии), М., «Общественное мнение», 2003, էջ 197:
[116] **Шютц А.**, նշվ. աշխ., էջ 204:

- *օտարի օբյեկտիվությունը,*
- *նրա կասկածելի չեզոքությունը:*

1. Ներգաղթյալն օբյեկտիվորեն օտար է, սակայն դա չի կարող բավարար չափով բացատրվել միայն նրա քննադատական դիրքորոշմամբ: Իհարկե, նա հստակ զգում է իր անհամապատասխանությունն ու հակասականությունն ընդունող հասարակության մշակույթի հետ, բայց նրա այդպիսի դիրքորոշումն առաջանում է ոչ այնքան նրա քննադատական վերաբերմունքից տվյալ հանրույթի նկատմամբ, որի հետ փորձում է մերձենալ իր սեփական մշակութային ստանդարտներով, որքան այդ մշակույթի տարրերի մասին ամբողջական տեղեկատվություն ու գիտելիք ձեռք բերելու իր պահանջմունքից:

Սակայն օբյեկտիվության առավել խորը պատճառ է սեփական դառը փորձով ճանաչված «սովորական կամ առօրեական մտածողության» սահմանափակությունը, այսինքն՝ այն բանի հասկացումը, որ մարդը կարող է կորցնել իր կարգավիճակը, իր կյանքի կանոնները և նույնիսկ իր պատմությունը, և որ նորմալ կենսակերպի երաշխիքներն ավելի քիչ և թույլ են, քան թվում են: Նա մտնում է բոլորովին այլ սոցիոմշակութային իրականություն: Այստեղ մենք գործ ենք ունենում բազմակի օտարման հետ՝ օտարում ինքն իրենից և օտարում շրջակա միջավայրից, հասարակությունից, արժեհամակարգերից և նույնիսկ աշխարհագրական ու մարդաբանական չափանիշներից:

2. Օտարի կասկածելի չեզոքությունն արտահայտվում է այն ժամանակ, երբ նա ցուցաբերում է իր անընդունակությունն ու անկարողությունը՝ փոխելու իր հարազատ մշակութային օրինակն ընդունող հասարակության մշակույթով: Այս դեպքում ներգաղթած «օտարը» դառնում է «լուսանցքային մարդ», մշակու-

թային հիբրիդ, որը չի կարողանում կողմնորոշվել երկու մշակույթների ընտրության հարցում, ինչը նրա մոտ առաջ է բերում նույնականության ճգնաժամ, լուսանցքային նույնականություն: «Լուսանցքային նույնականության կրողներն են համարվում այն անհատները, որոնք դեռևս տատանվում են նախորդ և ներկա մշակույթների միջև՝ անհրաժեշտ չափով չտիրապետելով այդ մշակույթներից և ոչ մեկի նորմերին ու արժեքներին»[117]: Այսինքն՝ ներգաղթողը դեռ չի տիրապետում ու չի կարողանում յուրացնել նոր, ընդունող հասարակության մշակութային օրինակը, ինչը նրան գցում է անորոշության մեջ:

Հաճախ կասկածելի չեզոքությունն առաջ է գալիս ընդունող հասարակության անդամների այն դիրքորոշումից, համաձայն որի՝ նրանց համար զարմանալի է, որ այդ «օտար» ներգաղթյալը չի ընդունում իրենց մշակույթն ամբողջությամբ՝ որպես կենսակերպի բնական, համապատասխան և լավագույն տարբերակ՝ բոլոր հնարավոր տարբերակների մեջ: Օտարին անվանում են անշնորհակալ, քանի որ նա հրաժարվում է ընդունել, որ իրեն առաջարկված մշակութային օրինակը պաշտպանվածության երաշխիք է և ապաստարան: Սակայն այդ մարդիկ հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ օտարը գտնվում է անցումային վիճակում և դիտարկում է այդ մշակույթը ոչ թե միայն որպես ապաստարան, այլ որպես լաբիրինթ, որտեղ նա կորցրել է ամեն տեսակ կողմնորոշում: «Նորեկի ընտելացումը խմբին, որը նրա համար օտար ու անծանոթ է, իրենից ներկայացնում է այդ խմբի մշակութային օրինակի արժեքների ու նորմերի, ավանդույթների

---

[117] **Հարությունյան Է. Ա.,** Վարքի սոցիոմշակութային շարժառիթների մարդաբանական բնութագիրը // Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ (հոդվածների ժողովածու), Պրակ V, Երևան, «Լիմուշ», 2008, էջ 7:

ու սովորույթների, վարքի ձևերի ու կանոնների հասկացման ու յուրացման երկարատև գործընթաց: Եթե այդ գործընթացը հաջող է ընթանում, ապա տվյալ սոցիոմշակույթն ու նրա տարրերը նորեկի համար դառնում են ինքնըստինքյան հասկանալի, ընդունելի կենսաձև, ապաստարան ու պաշտպան: Այս դեպքում օտարն այլևս օտար չէ, և նրա առանձնահատուկ խնդիրները լուծվում են[118]:

Օտարի օբյեկտիվության ու կասկածելիության դիրքորոշումները կարող են դառնալ տվյալ սոցիոմշակութային իրականության դինամիկ կենսագործունեության կարևոր գործոններ: «Օտարը նա չէ, ով գալիս է այսօր, որպեսզի վաղը հեռանա: Նա այսօր գալիս է, որպեսզի մնա: Սակայն մնալով նա շարունակում է լինել օտար: Խումբը և օտարը տարասեռ են, իսկ ամբողջության մեջ նրանք ձևավորում են մի ավելի լայն միասնություն, որտեղ երկու կողմերի վրա էլ պետք է ուշադրություն դարձնել: ...Օտարին հատուկ է օբյեկտիվությունը, քանի որ նա խառնված չէ ներխմբային շահերի մեջ: Այդ իսկ պատճառով նա ազատ է և հետևաբար՝ կասկածելի: Եվ հաճախ ընդունող հասարակությանը թվում է, թե նա ոչ միայն չի տածում համակրանք կամ հակակրանք, այլև ցանկանում է քանդել գոյություն ունեցող կարգը և իրապես կանգնում է գերակայող ավանդույթների ու սովորույթների փոփոխման ու զարգացման կողմը»[119]:

Սակայն միշտ չէ, որ ներգաղթյալը, մոռանալով կամ մի կողմ դնելով իր սեփականը, կարողանում է յուրացնել ու ընդունել նոր մշակույթը, կենսաձևը, սովորույթներն ու ավանդույթները: Այս պարագայում ներգաղթյալը փորձում է գտնել իր հա-

---

[118] Տե՛ս **Шютц А.**, նշվ. աշխ., էջ 206:

[119] **Зиммел Г.,** Избранное, М., «Юристъ», 1996, Т. 1, с. 125.

մաերկրացիներին և ապրել նրանց հետ: Այսօր գրեթե ամենուր կան գաղթավայրեր, որտեղ միևնույն մշակույթի կրողները համագոյակցում են: Հաճախ սա բերում է այդ խմբերի լուսանցքայնացմանը, քանի որ նրանք չեն ինտեգրվում տվյալ երկրի մշակութային ու սոցիալական հարաբերություններում: Այդ համայնքները ստեղծում են իրենց փոքրիկ «հայրենիքը» և երբեմն նույնիսկ չեն տիրապետում և չեն էլ փորձում սովորել տվյալ երկրի ժողովրդի լեզուն:

Համայնքների մեկուսացվածության պատճառներից մեկն ընդունող հասարակության անդամների բացասական վերաբերմունքն է օտարների նկատմամբ: «Սոցիոլոգիական գրականության մեջ կան մի շարք տեսություններ, որոնց համաձայն՝ արտաքին միջավայրի նախապաշարմունքներն ու թշնամանքը ստիպում են «օտարներին»՝ հատկապես փոքրամասնություններին, ներփակվել և հույս դնել միայն սեփական հնարավորությունների և կարողությունների վրա, ինչը հանգեցնում է ձեռնարկությունների և ծառայությունների ստեղծմանը, որոնց արտադրանքն ուղղվում է «յուրայինների» որոշակի պահանջների բավարարմանը»[120]: Արտադրվում են ազգային ուտեստներ, բացվում են ժամանցի վայրեր ու ռեստորաններ, որոնք ունեն էթնիկական բովանդակություն: Օրինակ՝ հայկական տարբեր գաղթավայրերում կան հայկական ռեստորաններ, կազմակերպվում են համերգներ և շոուներ, որոնցում ներկայացվում է բացառապես հայկական մշակույթը: Մեծ գաղթավայրերը, ինչպիսին է, օրինակ, ԱՄՆ-ի հայկական սփյուռքը, հնարավորություն է տալիս նաև Հայաստանի շոու բիզնեսի ներկայացուցիչներին, արվեստի գործիչներին, ազգային տնտեսություններին իրենց հյու-

[120] **Фукуяма Ф.,** Доверие, М., «Ермак», 2004, с. 486.

ռախաղերի ու ապրանքների միջոցով վաստակելու ոչ փոքր գումարներ: Եվ այս ամենն ուղղված է միայն տեղի հայերի պահանջմունքների բավարարմանը:

Ներգաղթյալների մեկուսացվածության պատճառ կարող է լինել նաև նրանց կրթական մակարդակը: «Անվիճելի է, որ ներգաղթող խմբերի զարգացման արագության տարբեր տեմպերը բացատրվում են ոչ միայն ներգաղթյալների սոցիալականացվածության տարբեր մակարդակներով, այլև այլ գործոններով, որոնցից կարևորագույնը կրթության նկատմամբ վերաբերմունքն է: Մյուս կողմից՝ էթնիկական քրեական տարբեր խմբակցությունների գոյությունը վկայում է, որ հակվածությունը միասնականությանը տարբեր ոլորտներում հաջողության երաշխիք չէ: Այդպիսի հակվածությունը պետք է համադրվի նաև այլ գործոնների հետ, ինչպիսիք են ազնվությունը, խնայողությունը և կրթության արժեքի հասկացումը»[121]: Կրթություն ստացած ներգաղթյալը, լինելով լավ մասնագետ, մի կողմից՝ հեշտությամբ ինտեգրվում է ընդունող հասարակության սոցիալական կյանք, մյուս կողմից՝ այդ հասարակության անդամների հետ նրա երկխոսության ու շփումների արդյունքում աստիճանաբար դադարում է ընկալվել որպես օտար՝ ստանում է ինքնիրացման ու մրցակցության մեջ մտնելու հնարավորություն:

Ընդունող հասարակության և տարբեր էթնիկական համայնքների փոխհարաբերությունները պայմանավորվում են նաև նրանց պետությունների փոխհարաբերության մակարդակով: Եթե նրանց պետական հարաբերությունները բարիդրացիական ու համագործակցային են, ապա ներգաղթյալների նկատմամբ վերաբերմունքը մեղմ ու դրական է: Սակայն երբ հարաբերությունները վատթարանում են, վտանգվում է նաև ներգաղթյալ-

[121] **Фукуяма Ф.,** նշվ. աշխ., էջ 496:

ների կյանքը: Սրա վառ օրինակն է ռուս-վրացական հակամարտությունը: Մինչ կոնֆլիկտը Ռուսաստանում վրացի ներգաղթյալներն ընդունվում էին այնպես, ինչպես մնացյալ կովկասցիները, սակայն կոնֆլիկտից հետո մեծամասնությունը ստիպված եղավ լքել Ռուսաստանը՝ վերադառնալով հայրենիք կամ գնալով այլ երկիր: Նույնը տեղի ունեցավ նաև Վրաստանում՝ ռուսների հետ:

Ընդունող հասարակության և ներգաղթյալների համայնքի հաղորդակցության ու շփումների գործընթացների բնույթը պայմանավորված է մի շարք գործոններով: Դրանցից են, մի կողմից, տվյալ երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային առանձնահատկություններն ու զարգացումները, մյուս կողմից՝ այն հանգամանքը, որ եկվորի համար նոր մշակույթն ամբողջությամբ օտար է, և նա այդ մշակութային օրինակի ուսումնասիրության ու յուրացման կարիքն ունի: Եթե այդ գործընթացը հաջող է ընթանում, ապա նա կարողանում է ինտեգրվել այդ հասարակությանը, իսկ դժվարությունների չհաղթահարման դեպքում առաջ են գալիս ինքնամեկուսացված, ներփակված, լուսանցքային համայնքներ, որոնք փորձում են համագոյակցել «յուրայինների» հետ:

Ներգաղթյալների համայնքների ինտեգրացիոն և դեզինտեգրացիոն գործոնները երկակի գործընթացներ են: Դա առաջին հերթին ընդունող պետության իմիգրացիոն քաղաքականությունն է, ինչպես նաև էթնոռասայական խտրականությունն ու նախատրամադրվածությունները, որոնք ունի հիմնական բնակչությունը ներգաղթյալների հանդեպ: Դրանց ազդեցությունը հաղթահարվում է մեծ դժվարությամբ, քանի որ և՛ այն, և՛ այս ամրագրված են թե՛ ներգաղթյալների համայնքի, թե՛ ընդունող հասարակության մշակութային գենոտիպում:

2.2. «ՅՈՒՐԱՅԻՆԸ» ԵՎ «ՕՏԱՐԸ» ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓՈՒՄ

Ժամանակակից աշխարհում, գլոբալ գործընթացների ուղեկցությամբ, միգրացիոն տեղաշարժերը նոր որակ են ստացել, ինչի հետևանքով միջմշակութային փոխներթափանցումների, երկխոսությունների ու հակադրությունների համատեքստում առաջացել են «յուրայինների» ու «օտարների» համագոյակցության նոր մարտահրավերներ, որոնք լուծելու ու հաղթահարելու համար առաջարկվում են տարաբնույթ մոտեցումներ ու գաղափարներ: Դրանցից թերևս ամենատարածվածը բազմամշակութայնությունն է, որը դարձել է ժամանակակից հասարակագիտական, մշակութաբանական, փիլիսոփայական ու բնագիտական տարբեր հետազոտությունների ու ուսումնասիրությունների առանցքային թեմա: Ինչպե՞ս է դա հնարավոր, դրա ձևավորման ինչպիսի՞ միտումներ են նկատվում, ինչպիսի՞ն են այդտեղ յուրայինների ու օտարների փոխհարաբերությունները և այլն: Բայց մինչ սոցիալական աշխարհում յուրայինի և օտարի փոխհարաբերությունների արդի դրսևորումներին անդրադառնալը փորձենք տեսնել, թե յուրայինի և օտարի ինչպիսի փոխհարաբերություններ կան, օրինակ, «սոցիալական միջատների» կյանքում:

«Սոցիալական միջատ» (մեղուներ, կրետներ, մրջյուններ և այլն) հասկացության առաջադրումից մինչև վերջերս գիտնականներն այն համոզմանն էին, որ միջատների «սոցիալական կյանքը» խիստ սահմանափակված է իրենց բնով և ունի իր հստակ «սահմանները»: Որպես աքսիոմ ընդունված էր, որ եթե որևէ միջատ ներթափանցեր մեկ այլ խումբ, ապա նա պարզա-

պես կոչնչացվեր: Այս մոտեցման հիմքում ընկած էր այն կանխադրույթը, որ այս կամ այն սոցիումին պատկանելը որոշվում է ծնունդով: Իհարկե «սահմանների» գոյությունը բոլորի կողմից ընդունելի է, սակայն դրանց թափանցելիությանը վերաբերող կարծիքները տարբեր են: Մի քանի տարի առաջ լոնդոնյան կենդանաբանների մի խումբ Պանամայում կրետների «սոցիալական կյանքը» ուսումնասիրելիս կատարեց այնպիսի անսպասելի բացահայտումներ, որոնք փոխեցին հասարակական միջատների մասին դարեր շարունակ եղած կարծրատիպային պատկերացումները: Նրանք պարզել են, որ կրետները հնարավորություն չունեն իրենց պարսի սահմանները դարձնելու անթափանցելի, ինչի հետևանքով տեղի են ունենում «օտարների» ներթափանցումներ «յուրայինների» խումբ: Նրանք, նախևառաջ, չեն արձանագրել պարսերի՝ միմյանց դեմ պատերազմելու մեծաքանակ օրինակներ: Երկրորդ՝ «աշխատուժի» տեղափոխումը մի խմբից մյուսը, հավանաբար, անհրաժեշտ է առանձին վերցված խմբերում թվաքանակը կարգավորելու համար: Ի հակադրություն այն ամենի, ինչը հայտնի էր դարեր շարունակ (ավելի ճիշտ՝ ինչը հայտնի էր համարվում), պարզվում է, որ «աշխատող կրետների» զգալի մասը (ավելի կոնկրետ՝ 56%-ը) կյանքի ընթացքում փոխում է բույնը և միանալով այլ պարսերի՝ բոլորովին էլ չի դառնում մարգինալ, որին, սովորաբար, եթե ակնհայտ չեն հետապնդում, ապա միշտ ինչ-որ բանում կասկածում են և ընդհանրապես հազիվ են հանդուրժում: Նոր միջավայրում նրանք ունեն նույն «իրավունքները», ինչ բնիկները. նույն կերպ սնունդ են հավաքում, կերակրում և մեծացնում են երիտասարդ սերնդին: Այստեղից կարելի է եզրակացնել, որ լոնդոնյան գիտնականների ուսումնասիրած կրետների պարսերը, որպես կա-

նոն, «խառը միություններ» են, որոնցում տեղացիներն ու նորեկներն ապրում ու աշխատում են միասին: Առանց հատուկ էլեկտրոնային նշանների նրանց մեկը մյուսից անհնար է տարանջատել[122]: Այս բացահայտումն ամբողջովին փոխեց սոցիալական միջատների մասին դարերով եկած պատկերացումները. նրանց մոտ բնակչության փոփոխությունն ու սոցիալական պատկանելության անհաստատությունը նորմեր են: Ընդ որում՝ ակնհայտ է, որ միջատները հանգում են այդ նորմին միանգամայն բնական ճանապարհով. նրանք չունեն ո՛չ պետական հանձնաժողովներ, ո՛չ արագ ընդունվող օրենքներ, ո՛չ դատական գործընթացներ և ո՛չ էլ փախստականների ճամբարներ:

Գիտնականների նոր սերնդի այս բացահայտման իմացական մոդելը տարբերվում է նախորդ մի քանի սերունդների ուղեղներում «կարծրացած» մոդելից նրանով, որ արտացոլում է ժամանակակից պետությունների՝ կառուցման ազգային ձևից բազմամշակութայինի անցումը: Առավել ընդհանուր տերմիններով սա կարելի է նշանակել որպես անցում «քարացած մոդեռնից» «հոսող մոդեռնի»[123]: Սրանցից առաջինը ողջ ջանքերը ներդնում էր տարածքային ինքնավարության սկզբունքը պաշտպանելու և ամրապնդելու համար, ինքնավար տարածքների եզրերում կառուցում էր խուլ սահմաններ: Իսկ երկրորդի գալով սահմանները խախտվում են: Առօրյա լեզվում սա նշանակում է հրաժարում ձուլման ենթարկելուց և միաձևությանը ձգտելուց: Մենք աստիճանաբար գիտակցում ենք, որ միշտ պետք է համագոյակցենք մեզանից տարբերվող և մեզ համար անսովոր մի

---

[122] Տե՛ս «О своих и чужих в социуме ос», http://gorod214.ru/ateneo/laboratoriya-izucheniya-prirody/o-svoih-i-chuzhih-v-sociume-os, 2011:

[123] Տե՛ս **Бауман З.**, Прощание с миром своих и чужих // Вокруг Света, М., «Вокруг Света», 2011, № 12, էջ 25:

ինչ-որ այլ բանի հետ: Այսօր մարդիկ շարժվում են բոլոր ուղղություններով, սահմանները երկուստեք թափանցելի են: Որպես օրինակ կարելի է ներկայացնել Մեծ Բրիտանիան, որն այսօր ներգաղթյալների երկիր է: Չնայած այստեղ ներքին գործերի յուրաքանչյուր նոր նախարար փորձում է գերազանցել իր նախորդին արտասահմանցիների ներհոսքի դեմ նոր արգելքներ ու դժվարություններ ստեղծելու հարցում, այնուամենայնիվ գործընթացն առկա է: Սրա հետ մեկտեղ, ըստ վերջին հաշվարկների, Միացյալ Թագավորությունում ծնված գրեթե մեկուկես միլիոն մարդ այժմ բնակվում է Ավստրալիայում: Նմանատիպ պատկեր է նաև Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում և բազմաթիվ այլ երկրներում[124]: Բացառություն են միայն մի քանի պահպանված անկլավներ, որոնցում գործում է 18-19-րդ դարի անգլիացի փիլիսոփա Երեմիա Բենտամի առաջ քաշած իդեալական բանտի՝ պանօպտիկոնի գաղափարը. բնակիչները գտնվում են ապակեպատ բանտում, անընդհատ հսկողության տակ՝ առանց իրենց իմացության, և որտեղ կարևոր է ոչ այնքան օտարներին ներս չթողնելը, որքան բնակիչներին, ավելի ճիշտ՝ հպատակներին ներսում (պետական սահմաններում) պահելը:

Այսօր գոյություն ունեն բազմաթիվ սոցիալ-տնտեսապես և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից զարգացած երկրներ, որոնց բնակչությունն ըստ էության տարբեր էթնիկական ու ազգային համայնքների հավաքածու է, որտեղ «յուրայինների» և «օտարների» միջև սահմանը թեժ վիճաբանությունների առարկա է: Միևնույն ժամանակ այդ բաժանարար գիծը սահմանելու, պահպանելու և ոտնձգություններից հեռու

[124] Տե՛ս նույն տեղը, էջ 27:

պահելու իրավունքը սոցիալ-քաղաքական հեղինակությունների միջև մղվող պայքար և նպատակ է:

Ժամանակակից գլոբալ գործընթացների համատեքստում բազմաթիվ պետություններ հաղթահարել են ազգային պետություն կառուցելու արևմտյան մոդելը: Թողնելով այն անցյալում՝ նրանք այլևս չեն հետաքրքրվում օտարերկրացիների ձուլմամբ, այսինքն՝ չեն ստիպում նրանց մոռանալ և ջնջել իրենց նախկին «ես»-ը՝ խառնվելով տեղի բնակչության միատարր զանգվածին: Սրա արդյունքում ընդունող երկրներում ձևավորվում է մշակութային գունագեղ պատկեր: Նմանատիպ փոփոխությունն այլևս ընդմիշտ հաստատված է: Քաղաքները, հատկապես այնպիսի մեգապոլիսները, ինչպիսիք են, օրինակ, Լոնդոնը, Մոսկվան և այլն, վերածվել են յուրօրինակ «աղբանոցների», որտեղ լցվում են համաշխարհայնացման հետևանքով առաջացած բոլոր խնդիրները: Դրանք կարելի է համարել նաև լաբորատորիաներ, որոնցում վերամշակվում, փորձարկվում և կատարելագործվում են ոչ թե այդ խնդիրների լուծումները, այլ այդ խնդիրներն անհաղթահարելի համարելու և դրանց հետ համակերպվելու արվեստը: Առանձնացվում են համաշխարհայնացման մի շարք հետևանքներ, որոնցից մեկը նախևառաջ իշխանության ու քաղաքականության տարանջատումն է, նախկինում բացառապես քաղաքական ինստիտուտներին պատկանող գործառույթների տեղաշարժը՝ ինչպես հորիզոնական (շուկաների փոխանցումը նրանց), այնպես էլ ուղղահայաց (անցումը հասարակական մակարդակից անհատական, կենցաղային, քաղաքական մակարդակ): Համաշխարհայնացման գործընթացի համատեքստում առանձնակի կարևորություն ունեն միգրացիոն գործընթացները, առաջացել են գլոբալ միգրացիայի նոր մոդելներ ու ձևեր:

Միգրացիայի նոր ձևերը հարցականի տակ են դնում քաղաքացիության և ազգային ինքնության, կոլեկտիվության ու անհատականության, բնակության վայրի և անձնական համամասնակցության զգացումի սովորական փոխհարաբերությունները: «Այս աշխարհն իրոք դարձել է «հոսող իրականություն», որտեղ ասես դրված է ամեն տեսակի նույնականություններից ձերբազատվելու խնդիր, և որտեղ բացակայում է անվերջության (շարունակականության) պահանջմունքը, քանի որ երկու դեպքում էլ բացակայում է անցյալի և ներկայի անխզելի կապը»[125]: Ընդունենք դա, թե ոչ, բայց հաստատվելով բազմաթիվ ինքնավար պետություններում՝ մարդիկ ինչ-որ ժամանակ անց ի վիճակի են լինում գոյատևելու առանց որոշակի կենտրոնի: Եվ սա այն դեպքում, երբ այդպիսի ակնհայտ, ամենազոր և հեղինակավոր ընդհանուր կենտրոնի բացակայությունն իշխանություն ունեցողների և դրան ձգտողների համար դառնում է այդ դատարկությունը լցնելու մշտական ձգտում:

«Կենտրոնը» կորցրել է իր «կենտրոնայնությունը», ազդեցության և իշխանության միջև խզվել է նախկինում շատ սերտ և ամուր կապը: Տնտեսական, ռազմական, ինտելեկտուալ, նույնիսկ գեղագիտական հզորության և հեղինակության խտացման առանձին ոլորտներն այլևս չեն համընկնում (եթե իհարկե անցյալում համընկնում էին): Եթե գծենք աշխարհի տարբեր քարտեզներ՝ մեկի վրա նշելով այն տարածաշրջանները, որտեղ այս կամ այն քաղաքական սուբյեկտներն ունեն նշանակություն և ազդեցություն համաշխարհային արտադրության ոլորտում, մյու-

---

[125] **Հարությունյան Է. Ա.,** Համատեքստի հերթափոխը. մարդկային կեցության սոցիոմշակութային այլատեսակությունների ապականումը, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2016, թիվ 1 (19), էջ 15:

սի վրա՝ նույնը առևտրի ոլորտում, երրորդի վրա՝ ֆինանսական ներդրումների, չորրորդի՝ ռազմական հզորության, հինգերորդի՝ գիտության ոլորտում, մյուսի վրա՝ այն, ինչ վերաբերում է գեղագիտական հաջողություններին, ապա այդ քարտեզները ոչ մի կերպ չեն համընկնի: Եվ եթե այս ամենը գունավորվի, ապա ցանկալի չէ գույները մուգ անել, որպեսզի դրանք հնարավոր լինի ջնջել, քանի որ այսօր ազդեցության և հեղինակության փխրուն հիերարխիայում ցանկացած երկրի կարգավիճակ անկայուն մեծություն է:

Ուստի եթե փորձ է արվում մոլորակի գործընթացներն իմաստավորել հին սովորույթով, ապա շարունակվում է ուժերի հարաբերակցության մտահայեցողական պատկերի կառուցումը՝ օգտագործելով այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են «կենտրոնը» և «արվարձանը», «աստիճանակարգությունը», «գերազանցությունն» ու «անլիարժեքությունը». այդ հասկացութային ապարատը դառնում է ոչ թե օգնություն, ինչպես նախկինում, այլ՝ խոչընդոտ:

Այժմ յուրաքանչյուր սուբյեկտ իր ինքնությունը ձեռք է բերում շրջակա աշխարհի հետ իր փոխհարաբերությունների անընդհատ վերանայմամբ: Սեփական «ես»-ի ձևավորումը, ավելի ճիշտ՝ վերաձևավորումը, դառնում է խնդիր իր ողջ կյանքի համար, որը երբեք մինչև վերջ չի լուծվում, իր գոյության ընթացքում ինքնությունն այդպես էլ չի ստանում վերջնական տեսք և իրացում: Պատճառն այն է, որ երբեք հնարավոր չի լինում սպառել շրջակա միջավայրին հարմարվելու անհրաժեշտությունը, քանի որ անդադար փոխվում են կյանքի պայմանները, իսկ դրա հետ մեկտեղ՝ վտանգների սպեկտորն ու հնարավորությունների հավաքածուն: Այդ անավարտությունը տրված է ի սկզբանե, ինք-

նիրացումը հնարավոր չէ հասցնել ավարտի, որտեղից էլ առաջ են գալիս լարվածությունն ու անհանգստությունը: Դրանց հաղթահարումն այնքան էլ հեշտ չէ, և որևէ «դեղամիջոցի» բացակայությունը բացատրվում է նրանով, որ ինքնանույնականացման գործընթացը որոշվում է մարդկային երկու հիմնարար արժեքներով՝ ազատությամբ ու ապահովությամբ: Սրանք երկուսն էլ հավասարապես անհրաժեշտ են արժանապատիվ կյանքի համար, սակայն դժվար է դրանք համատեղել և դրանց միջև ստեղծել իդեալական հավասարակշռություն: Ընտրելով ազատությունը՝ մենք ստանում ենք ավելի քիչ ապահովություն, և հակառակը՝ հասարակության պաշտպանությունն իր հետ հաճախ բերում է ազատությունների սահմանափակում: Եվ քանի որ ապահովության պակասն ու ազատության կորուստը մեզ համար հավասարաչափ անընդունելի են, դրանց ցանկացած համադրություն մեզ չի բավարարում: Այդ իսկ պատճառով այս երկուսի նկատմամբ ձգտումներն անընդհատ տատանվում են մեկ դեպի ազատություն, մեկ դեպի ապահովություն:

Հատկանշական է, որ սոցիալականացումը գծային և միակողմանի ուղղորդված գործընթաց չէ (ինչպես մինչև վերջերս ընդունված էր կարծել): Ընդհակառակը՝ այն անհատի ազատ ինքնորոշման և ապահով գոյության ձգտումների փոխազդեցության բարդ մեխանիզմ է: Մարդը կարող է ապահովություն ձեռք բերել միայն այն դեպքում, երբ նրա ընտրությունը հավանության է արժանանում հասարակության կողմից և վավերացվում է նրա համար նշանակություն ունեցող խմբի կամ խմբերի լիազորված ներկայացուցիչների կողմից:

Ինքնության վերաբերյալ ժամանակակից դատողություններում առաջարկվում է հրաժարվել «արմատներ», «հիմքի կո-

ռուստ», «արմատներից կտրվել» այլաբանություններից[126]: Դրանք ենթադրում են, որ անհատն իր մի վճռով և դրան հետևող քայլով միանգամից դուրս է գալիս, կտրվում է իր հարազատ սոցիումի խնամակալությունից, ընդ որում՝ մեկընդմիշտ: Ավելի ճիշտ կլիներ ասել, որ անհատները «գցում և բարձրացնում են խարիսխներ», քանի որ իրականում, ի տարբերություն «արմատների» կամ «ակունքների» կորստի, «խարիսխ բարձրացնելը» անշրջելի կամ անուղղելի չէ: Եվ կարելի է միևնույն հաջողությամբ «խարիսխ գցել» բազմաթիվ մոտիկ ու հեռու «նավահանգիստներում»՝ նայած, թե ուր կտանի քեզ ճակատագիրը: Այս համատեքստում վերաիմաստավորվում է նաև ավանդույթների նկատմամբ վերաբերմունքը: Բազմամշակութային միջավայրում ավանդույթն ընկալվում է որպես մարդու ազատ ինքնարտահայտման արհեստական սահմանափակում: Երբ ավանդույթները կորցնում են իրենց ուժը, և առաջնային է դառնում կենսակերպի ազատ ընտրությունը, մարդու մոտ մեծանում է իր՝ անձ լինելու զգացումը: Այստեղ ավանդույթները դադարում են լինել անցյալում խիստ ամրագրված դիրքորոշումների, արժեքների և կարծրատիպերի պասիվ ընկալման հիմք. դրանք դառնում են բազմազան, պլյուրալիստական տեղեկատվական տարածության բաղադրիչներ: Եվ դրանց բազմազանությունը թույլ է տալիս մարդուն առնչվել «դերերի», «ձևերի», «իմաստների» անվերջանալի հոսքին: Այս հանգամանքներում աշխարհին իր հետ կապվելու համար մարդուն «առաջադրանքներ» չի տալիս: Հենվելով ռիսկի, ինչպես նաև վախի վրա՝ նա ինքն իրեն պետք է առաջադրանքներ տա: Եվ ստիպված իր կյանքի ուղին անցնում է ոլորապտույտ ճանապարհով՝ մշտապես կորուստներ կրելով:

---

[126] Տե՛ս **Бауман З.**, նշվ. աշխ., էջ 31:

Այն աշխարհը, որը հիմնված էր ավանդույթների, հավատի, բանականության ու հեղինակության վրա, դուրս է եկել իր սահմաններից և դարձել է ոչ թե ավելի կառավարելի, այլ հսկողությունից դուրս, այլ կերպ ասած՝ «անհետացող աշխարհ»[127]: Բազմամշակութային, բազմազգ, բազմադավան հասարակությունը վերածվում է ազատ ինքնանույնականացման, սեփական «ես»-ի կառուցման անսպառ տեղեկատվական ռեսուրսի, բազմակողմանի «մատրիցայի»:

Ժամանակակից աշխարհի իրողություններում մի հանրույթին պատկանելը գործնականում շատ հաջող կարելի է համատեղել այլ հանրույթներում մասնակցության հետ՝ համադրելով ամենաբազմազան տարբերակներ, և ամենևին պարտադիր չէ, որ դրա պատճառով մարդը որևէ կողմից ենթարկվի հալածանքների կամ մեղադրանքների: Համապատասխանաբար, պատկանելության կապերը դադարում են լինել այնքան սերտ, որքան անցյալում: Որպես կանոն, տարբեր կոլեկտիվներում զուգահեռ ներգրավվածությունը թուլացնում է այդ կապերը՝ ազատելով դրանք նախկին լարվածությունից և միևնույն ժամանակ այս կամ այն կոլեկտիվի կողմից սեփական արժեքների պարտադրման ցանկությունից: Անձն ամբողջությամբ չի պատկանում ինչ-որ հանրույթի, քանի որ նա ամեն րոպե զգում է բազմաթիվ պատկանելություններ: Այժմ մարդն ինքն է ընտրում որևէ հանրույթին իր ներգրավվածության աստիճանը (չափը), տվյալ հանրույթին տրամադրում է իր մի մասը միայն, ինչը չի համարվում կամ դառնում կեղծավորություն կամ դավաճանություն: Այդ իսկ պատճառով մշակութային «հիբրիդները» գնահատվում են ավե-

---

[127] Տե՛ս **Гидденс Э.,** Ускользающий мир: как глобализация меняет нашу жизнь., М., «Весь мир», 2004, էջ 19:

լի շուտ դրական և խրախուսվում ու մեծարվում են, քան ենթարկվում են դատապարտման ու մերժման: Դրանք մշակութային ու սոցիալական հաջողությունների ժամանակակից սանդղակում գրավում են ավելի ու ավելի բարձր դիրքեր: Բազմամշակութային հասարակությունը նման է բազմազգ կորպորացիայի, որտեղ «մշակութային անկրկնելիության չափազանց շեշտադրումը կասկածի տակ է առնում ընդհանրության գոյությունը, ինչպես նաև ազգերի փոխադարձ հարստացումն առաջավոր փորձով»[128]: Բազմակողմանիությունն այդ աստիճանով վեր բարձրանալու հնարավորություն է ընձեռում: Եվ ընդհակառակը՝ եթե դատապարտված ես ընդմիշտ մնալու արժեքների ու կեցության ձևերի փակ և ինքնաբավ միայն մեկ համակարգի շրջանակում, ապա դա կդիտվի որպես սոցիոմշակութային անպահանջկոտության ու թուլության նշան: Հնաոճ ինտեգրացնող հանրույթները, որոնք ամեն կերպ փորձում են վերահսկել իրենց անդամներին, ամբողջությամբ կորցրել են հեղինակությունը և այժմ հիմնականում կամ բացառապես գոյատևում են հասարակական հիերարխիայի ցածրագույն մակարդակներում:

Արդյո՞ք մեր հասարակական կյանքում անցողիկ, դինամիկ ու թեթև տարվածություններին կրկին փոխարինելու կգան երկարատև, կայուն ու լուրջ հարաբերությունները: Եթե հասարակական կյանք ասելով հասկանանք ազգային պետությունը ներկայացնող ինստիտուտներից սպասարկվող և դրանցով սահմանափակված ոլորտը (ինչպես հիմնականում եղել է ժամանակակից պատմության ընթացքում), ապա պատասխանը հավանաբար կլինի բացասական: Հասարակական միջավայրն այժմ

---

[128] **Միրզոյան Վ.,** Կառավարման փիլիսոփայություն, Եր., «Իրավունք», 2010, էջ 124:

կազմակերպվում է բոլորովին այլ կերպ, ուստի շատ մեխանիզմներ, որոնք երաշխավորում էին այդ միջավայրի բեմում ընթացող ներկայացումների հաջողությունը, վաղուց զիջել են իրենց դիրքերը:

Առաջադրված հարցին դրական պատասխան տալու համար կա նոր, գլոբալ հասարակական միջավայրի պահանջ: Համաշխարհային քաղաքականության ստեղծման համար անհրաժեշտ է համապատասխան համաշխարհային բեմ: Եվ պատասխանատվությունը ևս պետք է դառնա համամարդկային: Պետք է ընդունել, որ այս մոլորակի բոլոր բնակիչները թե՛ հիմա, թե՛ ապագայում միմյանցից կախված են: Այն, ինչ անում է կամ հրաժարվում է անել մեզանից մեկը, ազդեցություն է թողնում մնացած բոլորի վրա. ոչ ոք չի կարող հույս դնել «փոթորիկներից» պաշտպանվելու իր անձնական «թաքստոցի» վրա, երկրի որ ծայրում էլ ծնված լինի: Համաշխարհային պատասխանատվությունը նվազագույնը ենթադրում է համընդհանուր խնդիրներին նայել ուղիղ՝ առանց դրանց բնույթը խեղաթյուրելու: Այն հիմնված է այն համոզման վրա, որ ողջ աշխարհի համար իսկապես արդյունավետ լուծումներ կարելի է գտնել միայն գլոբալ փոխհարաբերությունների և փոխգործակցության ողջ համակարգը վերանայելու և վերակառուցելու միջոցով: «Գլոբալ տնտեսական գործարքներն ազգային կողմնորոշվածություն ունեցող գործունեության համեմատ տեղի են ունենում այնպիսի մակարդակում, որին չի հասել և ոչ մի դարաշրջան, և դրանք միջնորդավորված կամ չմիջնորդավորված ազդում են ժողովրդական տնտեսությունների վրա մինչ այժմ չլսված չափե-

րով»[129]: Համաշխարհային տնտեսության դժվար կանխատեսելի կամայականություններից ինչ-որ բան քաղելու կամ սեփական կորուստները կրճատելու ցանկությունը պետք է փոխարինվի այնպիսի կարգերի ձգտմամբ, որոնց դեպքում աշխարհի ցանկացած անկյունում կիրառվող տնտեսական նախաձեռնություններն այլևս չեն բխի տվյալ պահին օգուտ ունենալու նկատառումներից, կորստի և շահույթի հարաբերակցության գնահատման ժամանակ հաշվի կառնվեն սոցիալական հետևանքները: Ուստի, եթե օգտվենք Յու. Հաբերմասի բանաձևից, ապա հարկավոր է մշակել այնպիսի քաղաքականություն, որը «կպատասխանի» գլոբալ շուկաներին[130]:

Գլոբալացման հետևանքով առաջացած խնդիրներով մտահոգված են բազմաթիվ մասնագետներ, որոնք զգում են, գլխի են ընկնում, կասկածում են՝ ինչ պետք է անել: Սակայն դժվար է կանխորոշել, թե մեծ տերությունների կողմից աշխարհաքաղաքական ինչպիսի բեմադրություններ տեղի կունենան, որոնց հետևանքով համաշխարհային սոցիոմշակութային դիսկուրսիվ կարգի հաստատման գործընթացը կարող է մտնել փակուղի: Ներգաղթյալների հոսքերը եվրոպական տարբեր երկրներում առաջացրել են մի շարք խնդիրներ, ինչի պատճառով էլ առաջ է եկել մի տեսակետ, որը կասկածի տակ է դնում բազմամշակութայնության նախագծի իրագործման հնարավորությունը: Սակայն այդ տեսակետի հակառակորդներն առաջ են քաշում մի շարք կոնկրետ փաստարկներ, որոնց մասին իր հարցազրույ-

---

[129] **Хабермас Ю.**, Постнациональная констелляция и будущее демократии// Политические работы, М., «Праксис», 2005, с. 280.

[130] Տե՛ս **Хабермас Ю.**, Учиться на опыте катастроф? Диагностический взгляд на «краткий» XX век// Политические работы, М., «Праксис», 2005, էջ 228-230:

ցում խոսում է Եվրոպական առաջադիմական հետազոտությունների հիմնադրամի նախագահ Միսիմո դը Ալեման: «Եվրանյուզ»-ի թղթակցի այն հարցին, թե արդյո՞ք նա համամիտ է, որ գնալով ավելանում են ներգաղթյալների մասին Եվրոպայի հնչեցրած մարդասիրական հայտարարությունների և նրանց գործնական քայլերի միջև հակասությունները, նա պատասխանում է. «Այո՛, ես ձեզ հետ համաձայն եմ: Միգրանտները մեզ պետք են: Որովհետև եթե մենք ցանկանում ենք պահպանել երիտասարդության և թոշակի անցած մարդկանց միջև հավասարակշռությունը, ապա ներգաղթյալներն անհրաժեշտ են: Հենց եվրոպական հանձնաժողովն է հայտարարել, որ հաջորդ տասնհինգ տարվա ընթացքում Եվրոպային հարկավոր կլինի մոտ 30 մլն ներգաղթյալ: Այսօր գոյություն ունի 333 մլն աշխատունակ եվրոպացի, սակայն հաշվի առնելով այսօրվա ծնելիության ցուցանիշը (որը շարունակում է նվազել)՝ մոտակա 40 տարիների ընթացքում նրանց թիվը կհասնի 242 մլն-ի: Այդ բացը լրացնելու համար հարկավոր է, որպեսզի Եվրոպա տեղափոխվի 30 մլն նոր բնակիչ, հակառակ դեպքում նրա տնտեսությունը, դրա հետ միասին նաև մեզ այդքան հաճելի կյանքի բարձր որակը կոչնչանան: Այնպես որ միգրանտները մեր գոյության միջոցն են, այլ ոչ թե վտանգը: Մեզ անհրաժեշտ է համաեվրոպական իմիգրացիոն նոր քաղաքականություն, որը մինչ օրս բացակայում է...»[131]:

Այս խնդիրը վերաբերում է մշակութային հիբրիդների, բազմամշակութային համակարգի ստեղծման գործընթացին, որին անխուսափելիորեն տանում է «նոր» մարդկանց հոսքը: Մշակու-

---

[131] **Массимо Д'Алема,** Меркель представляет «эгоистичную Европу» http://ru.euronews.com/2012/04/12/d-alema-merkel-represents-a-selfish-europe.

թային փոխներթափանցումները կարող են հարստացնել ու վերաիմաստավորել ինչպես եվրոպական, այնպես էլ այլ քաղաքակրթությունները և դրանցում բացահայտել նոր ստեղծագործական ներուժ: Սակայն սեփական մշակույթի եզակիությունից կամ, այլ կերպ ասած, «յուրայինների» ինքնատիպ արժեքներից հրաժարվելու և այլ մշակույթին փոխհատուցման սահմանները բավականին խոցելի են: Որպեսզի բնիկների և նորեկների կամ յուրայինների ու օտարների համատեղ կեցությունը չդառնա մշակութային ժառանգության կորստի պատճառ, այն պետք է հիմնվի քաղաքակրթական «հասարակական պայմանագրի» սկզբունքների փոխադարձ հարգանքի վրա: Բազմամշակութայնությունը ոչ միայն հասարակությունում (պետությունում) մշակութային տարբերությունների ամրագրումն ու ճանաչումն է, այլև քաղաքական փիլիսոփայությունում ու էթիկայում կոնցեպտուալ դիրքորոշման ձևավորումը, որը կարտահայտվի իրավական նորմերում, հասարակական ինստիտուտներում, մարդկանց առօրյա կյանքում[132]:

---

[132] Տե՛ս **Тишков В. А.,** Теория и практика мультикультурализма. / Мультикультурализм и трансформация постсоветских обществ. Под ред. В. С. Малахова, В. А. Тишкова., Ин-т этнологии и антропологии РАН, М., 2002, էջ 335:

2.3. «ՅՈՒՐԱՅԻՆԻ» ԵՎ «ՕՏԱՐԻ» ՀԱՄԱԳՈՅԱԿՑՄԱՆ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Վերջին տասնամյակներում ընթացող քաղաքակրթական լուրջ փոխակերպումները որակապես փոխել են մարդկային կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները, ստեղծել նոր իրողություններ, որոնք էապես ազդում են սոցիոմշակութային կյանքի կազմակերպման ու կանոնակարգման ընթացքի վրա[133]: Ընդ որում՝ սոցիոմշակութային փոխակերպումներն առկա են ոչ միայն զարգացող, հետխորհրդային հասարակություններում, այլև զարգացած երկրներում, այսինքն՝ դրանք ձեռք են բերել համաշխարհային չափումներ: Համապարփակ աշխարհում շրջանառվում են հասարակական կեցության բոլոր ոլորտների համար միասնական, կարելի է ասել, համամոլորակային կապեր և հարաբերություններ, շփման ու հաղորդակցման եղանակներ[134]: Այս տեսանկյունից «յուրայինի» և «օտարի» փոխհարաբերության, փոխազդեցության կարևոր բաղադրիչ է միջմշակութային հաղորդակցությունը: Այդ հաղորդակցության արդյունավետ կամ ոչ արդյունավետ, կոնֆլիկտային կամ համագործակցային բնույթը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնք առաջ են եկել աշխարհում տեղի ունեցող գլոբալ փոփոխությունների արդյունքում ձևավորված սոցիոմշակութային նոր իրողություններով: «Հաղորդակցություն» (կոմունիկացիա) տեր-

---

[133] Տե՛ս **Հարությունյան Է. Ա.,** Սոցիոմշակութային փոխակերպումներ և նույնականության ճգնաժամ// Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ (հոդվածների ժողովածու), Պրակ III, Երևան, «Ասողիկ», 2007, էջ 3:

[134] Տե՛ս **Սողոմոնյան Գ. Ա.,** Ժամանակակից մարդաբանական ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունները, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2016, թիվ 1 (19), էջ 24:

մինը գիտական գրականություն ներմուծվեց 20-րդ դարի սկզբին և շուտով ձեռք բերեց սոցիոմշակութային իմաստ՝ կապված սոցիումում տեղեկատվության փոխանակման հետ: Իսկ տեղեկատվությունն այսօր այնպիսի ֆենոմեն է, որ մեր դարաշրջանը երբեմն բնութագրվում է որպես տեղեկատվական դարաշրջան, որտեղ մարդն ապրում է ֆիզիկական աշխարհում, սակայն գործում է «տեղեկատվական աշխարհի» նախադրյալների ու պատկերացումների հիման վրա, որոնք անընդհատ ավելի ու ավելի են հեռանում ֆիզիկական աշխարհից[135]:

Համաշխարհայնացման պայմաններում ձևավորված սոցիոմշակութային նոր երևույթ է տեղեկատվական բաց տարածությունը՝ տեղեկատվության ազատ հոսքը, ինչը միջմշակութային հաղորդակցության կամ «յուրայիններ-օտարներ» փոխհարաբերության իրագործման նոր հնարավորություններ է տալիս: Այն բաց է թե՛ տեղեկատվություն հաղորդողի, թե՛ ստացողի և դրանից օգտվողի համար: Ոչ մի հասարակություն չի կարող զարգանալ, վերարտադրվել ու գործառնել առանց տեղեկատվության: Այն, մասնավորապես, մարդկանց երկխոսության, փոխըմբռնման, գործողությունների համաձայնեցման կարևոր պայմաններից մեկն է: Սակայն տեղեկատվական հաղորդակցության ընթացքում առաջ են գալիս մի շարք հիմնախնդիրներ: Սոցիոմշակութային հաղորդակցության անհրաժեշտ և կառուցվածքային բաղադրիչ է հաղորդակցության լեզվի և հաղորդակցության իրագործման կանոնների կամ հաղորդակցության էթիկայի առկայությունը: Առաջ են քաշվում մի քանի հիմնահարցեր՝ կապված հենց հաղորդակցության էթիկայի հետ: Արդյո՞ք տեղեկատ-

---

[135] Տե՛ս **Делягин М. Г.,** Мировой кризис: Общая теория глобализации. М., «Инфра-М», 2003, էջ 83:

վական փոխանակումներն արդարացի և իրավահավասար հիմունքներով են իրականացվում, ինչպիսի՞ն են փոխանակող կողմերի հնարավորությունները, և ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ հաղորդակցային էթիկայի կանոնների անտեսումը յուրայինի և օտարի՝ որպես տարբեր մշակույթների կրողների՝ միմյանց նկատմամբ վերաբերմունքի տեսանկյունից:

Մշակութային հաղորդակցության նշանակությունն ու դերը համաշխարհայնացման ժամանակաշրջանում ուսումնասիրվում են *միջազգային հաղորդակցության տեսության* մեջ, որն առաջ է քաշում *նոր տեղեկատվական կարգում* արդարության սկզբունքի լինելիության մասին հարցադրում: Այս տեսության հեղինակների հիմնական միտքն այն է, որ հրապարակախոսական դիսկուրսների միջոցով հավասարապես հեռարձակվում են և՛ համընդհանուր մշակութային ստանդարտներ, և՛ արտահայտվում են ինքնատիպ շահեր ու հետաքրքրություններ: Այդ պատճառով միջազգային հաղորդակցության զարգացումը պետք է բարերար ազդեցություն ունենա և՛ գլոբալ, և՛ լոկալ ինքնությունների (նույնականության) վրա:

Միջազգային հաղորդակցության տեսությունը նոր տեղեկատվական կարգի բնույթի մասին բանավեճերում ստացել է երկու տարբեր մեկնաբանություններ: Դրանցից առավել տարածվածն այն տեսակետն է, որը նոր ինֆորմացիոն կարգը կապում է «free flow of information» (տեղեկատվության ազատ հոսք) հասկացության հետ, որը ենթադրում է ԶԼՄ-ների ապակենտրոնացում և պլյուրալիզմ, պետական հսկողությունից դրանց ազատում, մասնավոր ԶԼՄ-ներին աջակցություն, արտասահմանյան ԶԼՄ-ների առկայության համար ազատության տրամադրում: Զարգանալով քաղաքացիական հասարակության մեխանիզմնե-

րի հիման վրա՝ տեղեկատվության փոխանակումը համաշխարհայնացման ժամանակ պետք է ծառայի հրապարակային ինստիտուտների, սոցիալական ինտեգրացիայի զարգացմանը: Համաշխարհայնացման հետ առաջին հերթին կապվում են գլոբալ ինտեգրացիայի նոր հնարավորությունները, տեղեկատվական առումով ազատ երկրների ինտեգրացիան համաշխարհային տեղեկատվական փոխանակման մեջ: Սակայն փորձը ցույց տվեց, որ դա միշտ չէ, որ այդպես է: Տեղեկատվության օգտագործման տնտեսական սահմանափակումները կամ նրա մուտքի քաղաքական հսկողությունը (օրինակ՝ Իրանում կամ Չինաստանում) հաջողությամբ խանգարում են գլոբալ ինտեգրման գործընթացին:

Երկրորդ տեսակետն ամբողջությամբ հակադիր է առաջինին: Բանն այն է, որ «տեղեկատվության ազատ հոսքը» բերում է միջազգային հրապարակախոսության ոչ թե տարասեռության, այլ միատարրության, քանի որ դրա միջոցով գլոբալ մեդիաշուկայում անարգել տարածվում են գլխավորապես վերազգային (տրանսնացիոնալ) մեդիակոնցեռնների արտադրանքները: Միատարրականացման գործընթացը վնասում է քաղաքական ինտեգրմանը, իսկ հրապարակախոսական «ամերիկանացումը» սպառնում է լոկալ մշակույթների ինքնությանը: Այդ սպառնալիքը մարմնավորվում է աշխարհի «մաքդոնալդացում» հասկացության մեջ, որի հետ շատերը սկսել են նույնացնել համաշխարհայնացումը:

Միջազգային հաղորդակցության էթիկայի արդարության սկզբունքի շրջանակում տեղեկատվության ազատ հոսքն ու դրանից օգտվելու իրավունքը պետք է ապահովվեն յուրաքանչյուր մարդու և ազգի համար: Հաղորդակցության յուրաքանչյուր մաս-

նակցի այդ իրավունքը սահմանափակվում է հնարավոր վնաս պատճառելու սահմաններով, այսինքն՝ մյուս մասնակիցների անձնական տեղեկատվություն ունենալու իրավունքով: Տեղեկատվական կարգի արդարությունը կարելի է ձևակերպել այսպես. *տեղեկատվությունը, որը տրամադրվում է հաղորդակցության մասնակիցների կողմից հասարակական օգտագործման համար, պետք է հասանելի լինի բոլորին:*

Միջազգային հաղորդակցության տեսաբանները տեղեկատվության հոմոգենիզացման (միասնականացման) մեջ տեսնում են նրա հասանելիության պայմանները, իսկ հետերոգենիզացիայում (տարասեռայնացման)՝ տեղեկատվության տրամադրման իրավունքի իրականացման պայմանները: Սակայն նրանց տեսական նախադրյալներից չի կարելի որոշել, թե ինչպես է օգտագործվում տեղեկատվությունը: Սա բերում է տեսական անօգնականության այն բանի գնահատման հարցում, թե ինչպես կազդեն տեղեկատվության ազատ հոսքերն անձի և առանձին ազգերի հաղորդակցային իրավունքների իրական իրագործման վրա: Ոչ թե «free flow of information»-ն (տեղեկատվության ազատ հոսք) է ինքնին մեքենայաբար որոշում դրա հետևանքները, այլ այն, թե ինչ նպատակներով են օգտագործվում տեղեկատվության ազատ հոսքի հնարավորությունները: Համաշխարհայնացման գործընթացների հաղորդակցային հնարավորություններն արդարացի միջազգային տեղեկատվական կարգի հետ ունեն երկարժեք բնույթ: Դրանց արդյունավետությունը կախված է նրանից, թե մարդկությունը տեղեկատվության օգտագործման ժամանակ որքանով կկարողանա ղեկավարվել բարոյական բանականությամբ: Այդ հնարավորությունների պաշարը և հիմնական միտումները, որոնք որոշում են մշակութային

համաշխարհայնացման գործընթացները, բավականին մեծ են: Թվարկենք դրանցից հիմնականները:

- *Աշխարհում միջազգային շփման ընդհանուր լեզվի զարգացում (անգլերեն) և օտար լեզուների ինտենսիվ ուսումնասիրում:* Լեզուների իմացությունն ապահովում է արժեքների տարածումը և միջազգային հաղորդակցման հնարավորությունները: Սակայն լեզուն կարևորագույն ռեսուրս է, որի ուսումնասիրման համար պահանջվում են ներդրումներ ու գնելիություն: Կրթական որակյալ այնպիսի համակարգի բացակայությունը, որտեղ օտար լեզուների ուսումնասիրությունը մեծ ուշադրության է արժանանում, իր հետ բերում է տնտեսական և մշակութային հետամնացություն՝ դրանով խորացնելով «տեղեկատվական անհավասարությունը»: Բացի դրանից՝ գլոբալ աշխարհում մրցակցություն կա նաև լեզուների միջև: Այս առումով ազգային լեզուների իրավունքների սահմանափակումը խորը պրոբլեմ է, որն իր հետ բերում է համաշխարհայնացումը:
- *Միջազգային տուրիզմի զարգացում:* Տուրիզմը գլոբալ մշակութային փոխանակման առևտրապահանջարկային ուղիներից է: Այս պարագայում մշակույթն ու ավանդույթը ձևակերպվում են որպես ապրանք և դրվում են «մշակույթների տոնավաճառում»: Այսօր լինելով հզոր բնագավառ՝ տուրիզմը դարձել է համաշխարհայնացման խորհրդանիշներից մեկը: Սակայն ոչ բոլոր երկրներն են ի վիճակի ստեղծելու և զարգացնելու տուրիզմի ոլորտը, ինչը նույնպես բերում է հաղորդակցային անհավասարության: Այնտեղ, որտեղ տուրիզմն այնքան էլ զարգացած չէ, և հետևաբար, տվյալ մշակույթը չի կարող հանդես գալ որպես «ապրանք», այն մատնվում է մոռացության:

- *Միջազգային կրթական փոխանակումներ:* Արդի հասարակության ինքնակազմակերպման գործընթացում գնալով ավելի ու ավելի որոշիչ են դառնում գիտելիքները: Այս պատճառով էլ այսօր զարգացման ավելի մեծ հնարավորություն են ստանում այն հանրույթները, որտեղ ավելի բարձր է կրթվածության մակարդակը[136]: Այսինքն՝ կրթությունը դառնում է հեղինակավոր մշակութային ապրանք, որն ունենալու նախապայմաններից են դարձել կրթական փոխանակումները: Քիչ չեն շահում այն երկրները, որոնք իրենց սովորելու են ուղարկում այլ երկրներ երիտասարդությանը: Օրինակ՝ Եվրամիությունում կրթական փոխանակումներն այն աստիճան ինտենսիվ են դարձել, որ որևէ այլ երկրում ուսանելը (թեկուզ և կարճ ժամանակահատվածով) դիտարկվում է որպես նորմ, ոչ թե բացառություն: Կրթական փոխանակումները միջազգային մշակութային ինտեգրման ձևերից են, և դրանց կարիքն ունեն հատկապես զարգացող երկրները, որոնց երիտասարդությունը, սակայն, ճնշված է իր հնարավորություններն իրացնելու հարցում: Այդպիսով՝ միջազգային կրթությունը ձեռք է բերում վերնախավային բնույթ, ինչը նպաստում է հաղորդակցային անհավասարության աճին:
- *Գիտական և փորձագիտական կապերի աճ:* Այս կապերը, ձևավորելով միջազգային (դիսկուրսիվ) մշակույթի հիմքը, ինչպես կրթության դեպքում, փակվում են հարուստ երկրների գիտնականների շրջանակով: Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, գիտության գերակշռությունն ամբողջությամբ համընկնում է տնտեսության և քաղաքականության գերակշռու-

---

[136] Տե՛ս **Ղարագուլյան Ա. Լ.,** Փոխակերպվող հասարակություն և սոցիոմշակութային այլընտրանքներ, Երևան, «Լիմուշ», 2009, էջ 42:

թյան կառուցվածքին[137]: Սա չի կարող չանդրադառնալ մշակութային հաղորդակցության բնույթի վրա: Փորձագետների «խմբում» այդ ազգերի ներկայացուցիչների բացակայությունը համաշխարհային մշակութային փոխանակման մեջ մեծապես ցածրացնում է նրանց կարգավիճակը և նպաստում հաղորդակցային անհավասարության խորացմանը:

- *Միջազգային զանգվածային լրատվամիջոցների զարգացում:* Այն ԶԼՄ-ները, որոնք մուտք են գործել համաշխարհային շուկա (դրանց մեջ մտնում են ոչ միայն հեռուստաընկերությունները, այլ նաև ազդեցիկ թերթերն ու ամսագրերը, ինչպիսիք են Financical Times, Economist News Week, Frankfurter Allgemaine Zeiting, Spigeb, Le Monde և այլն), դարձել են քաղաքականության վրա ազդելու կարևորագույն գործիքներ ու միջոցներ: Որոշ միջազգային ԶԼՄ-ների կողմից իրենց սեփական գաղափարների ու արժեքների տարածումը ձևավորում է միջազգային հասարակայնության՝ որպես մեկ ամբողջ հանրույթի կարծիքների դաշտը: Կարելի է ասել, որ միջազգային ԶԼՄ-ները գլոբալ դիսկուրսների և գլոբալ հասարակական կարծիքի հիմնական և կարևորագույն գեներատորներ են:

- *Որոշակի մշակութային ստանդարտների տարածում այնպիսի ոլորտների միջոցով, ինչպիսիք են կինոն, երաժշտությունը, շոու-բիզնեսը, գեղարվեստական մշակույթը, դիզայնը*: Մշակութային փոխանակումները, ինչի միջոցով տարածվում են համընդհանուր արժեքները, տեղի են ունենում առաջին հերթին հենց այդ ուղիներով: Բայց հենց այստեղ ակնհայտ է դառնում մշակույթների հնարավորությունների անհավասարությունը: Մե-

---

[137] Տե՛ս **Маршакова-Шайкевич И. В.,** Анализ вклада Росии в развитие социальных и гуманитарных наук // Вопросы философии. М., Наука, 1998, № 1, էջ 68:

դիաբիզնեսում քիչ զարգացած կամ զարգացող երկրների հնարավորությունները շատ փոքր են: Ցանկացած մշակույթ համաշխարհային շուկայում գրավիչ ապրանք դառնալու համար համեմատաբար քիչ հնարավորություններ ունի, քան նրանք, որոնք հզոր տնտեսություն ունեցող երկրների մշակույթն են, ինչպիսիք են համաշխարհային առաջատար երկրները: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ի հոլիվուդյան արտադրանքն այսօր լցված է աշխարհում, որը կրում է ամերիկյան կամ ամերիկանացված մշակութային արժեքներ, որոնց միջոցով էլ հենց ողջ աշխարհում ձևավորվում են մարդկանց «ֆիլմային» պահանջմունքները: Նման վերազգային արդյունաբերական հսկաները ձևավորում են մարդկանց պահանջմունքները, սպասելիքներն ու արժեքները, այլ խոսքով՝ սպառողների համաշխարհային հանրույթը: Համաշխարհայնացման հետևանքով մշակույթի առևտրայնացումն առաջ է բերում մարդաբանական նշանակության մի կարևոր խնդիր, որը շատ հստակ ձևակերպել է Ու. Բեկը. «Մարդն այն է, ինչ նա կարող է գնել: Մշակութային համաշխարհայնացման այս օրենքը գործում է նույնիսկ այնտեղ, որտեղ գնողունակությունը հավասար է զրոյի: Գնողունակությունը փոխակերպում է, ավարտին է հասցնում մարդու սոցիալական կեցությունը: ... Կեցությունն ու դիզայնը նույնանում են համաշխարհայնացման պայմաններում»[138]:

- Համացանցի և էլեկտրոնային փոստի զարգացումը տարբեր երկրների քաղաքացիների միջև ստեղծում է անմիջական շփման տարածքներ և ձևավորում է հաղորդակցային հանրույթի նոր միասնական տարածություն: Վիրտուալ, էլեկտրոնային շփումները, կոնֆերանսները, մշակութային նախագծերը,

---

[138] **Бек У.,** Что такое глобализация, М., «Прогресс-Традиция», 2001, с. 82.

որոնք արտացոլում են տարբեր երկրների մշակույթները, հասանելի են համացանցի յուրաքանչյուր օգտատիրոջ: Այս հասանելիությունը հավասարության ընդհանուր մթնոլորտ է ստեղծում: Սակայն այդ հավասարությունն իրականում խաբուսիկ է, քանի որ համացանցով ստացվող տեղեկատվության հսկա մասն է կազմում վերը նշված արևմտյան հզոր կոմերցիոն հաստատությունների արտադրանքը (Հոլիվուդ, ամերիկյան շոու-բիզնես, եվրաստանդարտ և այլն): Այս հանգամանքը վկայում է հնարավորությունների անհավասարության ևս մեկ գործոնի գոյության մասին:

Չնայած նրան, որ համաշխարհայնացման արդյունքում մշակույթների երկխոսության մեկ ընդհանուր հաղորդակցային հանրույթի (որտեղ օտար մշակույթը դիտարկվում է որպես «ուրիշ» և ոչ թե «թշնամի») իրական լինելը դառնում է ավելի տեսանելի, այնուամենայնիվ համաշխարհայնացումը հարցականի տակ է դնում «մարդու սեփական մշակույթ ունենալու իրավունքը»: Նոր հաղորդակցային հնարավորությունները, որոնք օգտագործվում են սեփական էգոիստական նպատակների համար, համաշխարհայնացման առաջնորդներին տանում են ոչ միայն սեփական տնտեսական ու քաղաքական հզորության մեծացման, այլև ճնշում, իսկ որոշ դեպքերում նույնիսկ սպառնում են լոկալ մշակույթների գոյությանը: Գլոբալ մշակույթի շրջանակում մշակութային գերիշխանության հարցը բազմաթիվ մշակույթների ու հանրույթների գոյատևման խնդիրն է: Համաշխարհային մշակութային տարածության արևմտականացման, ինչպես նաև համաշխարհայնացման հիմնախնդիրների հարցում կան երկու հիմնական տեսակետներ:

Առաջին տեսակետն արձանագրում է ԱՄՆ-ի ճնշող գերիշխանությունը վերազգային մասշտաբներով: Այս գերիշխանության և նրա հետևանքների դրական կամ բացասական գնահատականներն այլ հարց են: Ամերիկյան տեսակետը հստակ ձևակերպել է Զ. Բժեզինսկին. «Ամերիկան գերիշխող դիրք է զբաղեցնում համաշխարհային իշխանության չորս որոշիչ նշանակություն ունեցող ոլորտներում. ռազմական ոլորտում նա տիրապետում է հավասարը չունեցող հնարավորությունների համաշխարհային մակարդակում, տնտեսական ոլորտում մնում է համաշխարհային զարգացման հիմնական շարժիչ ուժ, տեխնոլոգիական առումով նա պահպանում է բացարձակ լիդերություն գիտության և տեխնիկայի ոլորտներում, մշակույթի ոլորտում, չնայած որոշակի պարզունակությանը, ԱՄՆ-ն ունի իրեն հավասարը չունեցող ձգողականություն, հատկապես աշխարհի երիտասարդության շրջանակում: Այս ամենը Միացյալ Նահանգների համար ապահովում է այնպիսի քաղաքական ազդեցիկություն, որին գոնե որոշ չափով նման չունի աշխարհի և ոչ մի երկիր: Հենց այս չորս գործոնների առկայությունն է ԱՄՆ-ն դարձնում միակ համաշխարհային գերտերություն բառի ամբողջ իմաստով»[139]:

Այս ճանաչումը ԱՄՆ-ին դարձնում է ողջ աշխարհի համար քննադատության թիրախ, որում դրսևորվում են ինչպես «ուժերի հավասարակշռության», արդարացիության, այնպես էլ անցյալի գաղափարախոսական պատերազմների մասին պատկերացումները: «Արևմտյան տերությունները և հատկապես ԱՄՆ-ն՝ հափշտակված սեփական ամենակարողությամբ, որ դարձել է

---

[139] **Бжезинский З.,** Великая шахматная доска. М., «Международные отношения», 1998. с. 36.

միակ գերտերությունը, փորձում է պարտադրել իր կամքը, իր շահերը (բայց ոչ կյանքի բարձր մակարդակը) այլ երկրներին՝ իրագործելով իր միաբևեռ աշխարհի հայեցակարգը»[140]: Ամեն դեպքում չի կարելի ժխտել այն փաստը, որ ԱՄՆ-ն այսօր հաղթում է ոչ այնպես, ինչպես դա ժամանակին անում էին գաղութատիրական տերությունները. նրա առաջնորդությունն այլ ազգերի կողմից ընդունվում է կամավոր: ԱՄՆ-ի առաջնորդությունը համաշխարհայնացման գործընթացում պատահական չէ, քանի որ ամերիկյան մշակույթը տասնամյակներ առաջ արդեն «համաշխարհայնացված» էր: 20-րդ դարի սկզբին ամերիկյան բնակչության բավականին մեծ մաս էին կազմում օտարներն ու ներգաղթյալները՝ իտալացիներ, լեհեր, գերմանացիներ, չինացիներ և այլն, որոնց ավանդույթներն ու արժեքները տարբեր և որոշ դեպքերում նույնիսկ հակադիր էին: Նրանք (ամերիկացիները) այդ ժամանակաշրջանում հիմք դրեցին այսպես կոչված զվարճանքի արդյունաբերությանը՝ ստեղծելով ֆիլմեր մի երկրի համար, որի բնակչության մեծ մաս էին կազմում ներգաղթյալները: Այդ ֆիլմերը նրանց համար դարձան ինտեգրացիոն և ադապտացիոն գործընթացների յուրահատուկ մշակութային գործոններ:

Ամերիկյան մշակույթը գայթակղիչ է այն բանի շնորհիվ, որ ավելի շատ է կրում իր մեջ մոդեռնի սահմանադրական գծերը՝ *ազատասիրություն, ժողովրդավարություն, մարդու իրավունքներ* և այլն, որոնք ժամանակակից աշխարհի ցանկացած լոկալ մշակույթի համար նշանակալի տեղ ունեն:

---

[140] **Яковец Ю. В.,** Глобализация и взаимодействие цивилизаций. М., Экономика, 2003, с. 305.

Կարելի է առանձնացնել մի շարք ոլորտներ, որտեղ Արևմուտքի գերակայությունն անառարկելի է.

- միջազգային բանկային համակարգը,
- միջազգային առևտրի ոլորտը,
- միջազգային կապիտալի շուկաները,
- սպառազինությունը,
- ծովային ուղիների վերահսկողությունը,
- առաջնակարգ տեխնոլոգիական ուսումնասիրությունների և զարգացման վերահսկողությունը,
- միջազգային հաղորդակցության միջոցների ոլորտը,
- աշխարհի բազմաթիվ երկրների համար բարեկեցության նշանակության հեղինակությունը:

Ներկայացված ցուցակը խոսում է արևմուտքի և աշխարհի մնացյալ երկրների ռեալ հարաբերության մասին: Արևմտակենտրոն կամ արևմտյան կորիզ ունեցող համաշխարհային մշակույթը չի կարող բավարարել և գոհացնել աշխարհի բոլոր ժողովուրդներին: Այստեղ ի հայտ է գալիս առաջնորդության գործոնը, որը չի կարող նպաստել հավասարակշիռ գլոբալ մշակույթի ձևավորմանը: Հաղորդակցային էթիկայի սկզբունքները բացառում են միջմշակութային փոխհարաբերություններում որևէ լիդերություն: Այստեղ տարբեր քաղաքակրթությունների «յուրային-օտար» փոխհարաբերությունը պետք է տեղի ունենա մեկ հարթության վրա և ոչ թե բարձր-ցածր ոչ իրավահավասար պայմաններում: Հաղորդակցային էթիկայի սկզբունքային պահանջներից են հաղորդակցային և իրավական հավասարությունն ու ինֆորմացիոն անհավասարության խորացման բացառումը: Այս առումով ուսանելի է Ճապոնիայի փորձը, որն իր տնտեսական զարգացումը չի կապում «ճապոնիզացիայի» խնդրի հետ, չի

պարտադրում ուրիշներին ճապոնական (սամուրայական, կոնֆուցիական) արժեքները:

Երկրորդ՝ տրամագծորեն հակառակ տեսակետն է արտահայտում ամերիկացի գիտնական Ս. Հանթինգթոնն իր «Քաղաքակրթությունների բախումը» գրքում: Հանթինգթոնի մոտ հետաքրքրական է այն, որ նա, հավաքելով և համադրելով այն բոլոր նախանշանները, որոնք վկայում են արևմուտքի համաշխարհային գերիշխանության մայրամուտը, կանխատեսում է համաշխարհայնացման և մշակութային ու քաղաքակրթական փոխակերպումներ: Չնայած Արևմուտքի գերիշխանության տպավորիչ վիճակագրությանը՝ Հանթինգթոնը կարծում է, որ դա ունենալու է իր վերջը: Վերլուծելով մի քանի հարյուրամյակների քաղաքակրթական դինամիկան՝ նա արձանագրում է, որ Արևմուտքն անխուսափելիորեն կկորցնի իր ձեռքբերած դիրքերը: Նրա կարծիքով՝ ոչ արևմտյան երկրների կողմից քաղաքակրթության բարիքների յուրացումն աստիճանաբար կվերացնի Արևմուտքի առավելությունները և կվերադարձնի պատմական նախկին իրավիճակը, որտեղ հիմնական գերիշխող ուժ կլինեն այն տերությունները, որոնք մարդկային հարուստ ռեսուրս ունեն: Այդպիսի տերություններ են Հնդկաստանն ու Չինաստանը. «2020 թ.,- հաշվարկում է Հանթինգթոնը,- իր բարձրագույն կետից (պիկից) հարյուր տարի անց Արևմուտքն ավելի շուտ իր հսկողության տակ կունենա համաշխարհային տարածքի 24%-ը (պիկի ժամանակվա 49%-ի փոխարեն), աշխարհի բնակչության 10%-ը (48%-ի փոխարեն) և հավանաբար սոցիալապես մոբիլիզացված բնակչության 15-20%-ը, մոտ 30% համաշխարհային տնտեսական արտադրանք (պիկի ժամանակ մոտ 70%), հավանաբար արդյունաբերական արտադրանքի թողարկման 25%-ը (պիկի

ժամանակ 84%-ի փոխարեն) և աշխարհի բոլոր զինծառայողների քանակի 10%-ից էլ քիչ (առաջ 45% էր)»[141]: Այս նույն ժամանակահատվածում խոշորագույն համաշխարհային տնտեսական տերություն կդառնա Չինաստանը, իսկ ամբողջ աշխարհում և հատկապես Կենտրոնական Ասիայում կձևավորվեն մյուս հզոր տերությունները:

Հայտնի է, որ ժամանակակից հասարակություններում սոցիալական կյանքի կարևոր գործոններից մեկն ընդհանուր կրթությունն է: Այն թույլ է տալիս տարբեր մշակույթների ներկայացուցիչներին հեշտությամբ յուրացնել և օգտագործել ժամանակակից տեխնիկան ու տեխնոլոգիաները, անհրաժեշտության դեպքում առանց լուրջ ճգնաժամեր ապրելու արագորեն փոխել աշխատանքի բնույթը: Այս առումով դժվար է չհամաձայնել Է. Գելների հետ, որը կարծում էր, որ «Մեր օրերում իդեալական համարվող արժեքների համակարգի հայտնի մասը համընդհանուր գրագիտությունն ու այն ստանալու իրավունքն է»[142]: Հանթինգթոնը համաշխարհային համախառն արտադրանքում Արևմուտքի բաժնի կրճատումը կապում է զարգացող երկրներում կրթության և գիտության աճի հետ: Իսկ զարգացող երկրներում այսօր կրթության աճն իրոք ակնհայտ է: Նա նշում է, որ ազգերը, հաջողությամբ պատճենելով տեխնոլոգիական քաղաքակրթության հիմքերը, (հիմունքները) բավականին արագ վերադառնում են իրենց ավանդույթների հիմքերին և խիստ քննադատության են ենթարկում արևմտյան արժեհամակարգը: Ընդհանրապես ամբողջ աշխարհով արևմտյան արժեքների տարածումն առաջ է բերում լուրջ հակադրություններ: Միշտ չէ, որ դրանք

---

[141] **Хантингтон С.,** Столкновение Цивилизаций. М., «АСТ», 2006, с. 129.

[142] **Գելներ Է.,** Ազգերը և ազգայնականությունը, Երևան, «Հայաստան», 2003, էջ 41:

համահունչ են տարբեր մշակույթների արժեքներին: Մշակութային և քաղաքակրթական տարբերությունները կասկածի տակ են դնում Արևմուտքի և հատկապես ԱՄՆ-ի հավատը, որ իրենց մշակույթն ունի համընդհանուր նշանակություն: Այս հավատն առաջ է բերում մշակութային իմպերիալիզմ: «Այս աշխարհում,- նշում է Է. Գելները,- մշակույթները ծաղկում ու բարգավաճում են, բայց աշխարհն ինքը, առհասարակ, չի խրախուսում մշակութային իմպերիալիզմ կոչվածը, այսինքն՝ չի ստիպում, որ այս կամ այն մշակույթը գերակայի ու տարածվի»[143]: Անշուշտ, արևմտյան արժեքների ունիվերսալացումն առաջացնում է մի շարք խնդիրներ և պարունակում է թյուրըմբռնում արևմուտքի կողմից: Այս ըմբռնումը պարունակում է երեք թերություն. այն **սխալ է**, այն **անբարոյական է**, և այն **վտանգավոր է**[144]**:**

«Մենք դառնում ենք «պրոգրեսիվ դարաշրջանի ավարտի» ականատեսը, երբ դոմինանտ էր արևմտյան գաղափարախոսությունը, և մտնում ենք մի այնպիսի դարաշրջան, որտեղ բազմաթիվ ու բազմազան քաղաքակրթություններ կսկսեն փոխազդել, մրցակցել, համագոյակցել և փոխհարմարվել մեկը մյուսին»[145]: Համաշխարհայնացումն ու տեղեկատվական հեղափոխությունը չեն կարող խարխլել մշակույթների բազային տարրերը, որոնց վրա հիմնված են ազգերը: Ընդհակառակը, նոր հնարավորություններն առանձին լոկալ մշակույթներին կօգնեն, որպեսզի նրանք ամրանան ու փոխեն ուժերի հարաբերությունը: Մշակութային այս վերափոխումները բնորոշելու համար Հանթինգթոնն օգտագործում է «քաղաքակրթությունների բախում» փոխաբերությունը: Նրա կարծիքով՝ ժամանակակից գերտերությունները

---

[143] Նշվ. աշխ., էջ 22:
[144] Տե՛ս **Хантингтон С.,** նշված աշխ., էջ 506-507:
[145] **Хантингтон С.,** նշված աշխ., էջ 136:

(հատկապես ԱՄՆ-ն) իշխանությունը, առավել ևս համաշխարհային, առանց կռվի չեն տա: Իսկ բոլորի ինտեգրացիան բոլորի հետ տեղի չի ունենա: Հանթինգթոնը նախանշում է իրադարձությունների զարգացման մի քանի սցենար:

«Քաղաքակրթությունների բախում» աշխատանքի նպատակն է Արևմուտքին նախապատրաստել պարտությանը, մեղմացնել բախման հարվածը: Հանթինգթոնը գտնում է, որ աշխարհում ձևավորվում է նոր աշխարհակարգ՝ հիմնված քաղաքակրթությունների միջև հարաբերության վրա, որտեղ նման մշակույթ ունեցող հասարակությունները համագործակցում են: Լիդերություն պահպանելու Արևմուտքի բոլոր փորձերը նրան կտանեն այլ քաղաքակրթությունների՝ հատկապես իսլամական աշխարհի և Չինաստանի հետ բախման: «Թե՛ աշխարհի, թե՛ քաղաքակրթությունների ապագան կախված է համաշխարհային գլխավոր քաղաքակրթությունների լիդերների համագործակցությունից ու հասկացումից: Քաղաքակրթությունների բախման ժամանակ Եվրոպան ու Ամերիկան պետք է միասին լինեն կամ կմեռնեն առանձին-առանձին: Ավելի մեծ բախման դեպքում, ...մեծ քաղաքակրթությունները պետք է միասին լինեն, հակառակ դեպքում կմեռնեն առանձին-առանձին»[146]:

Հանթինգթոնի կոնցեպցիան մեկ անգամ ևս այն համոզմանն է բերում, որ մարդկության ապագան այլընտրանք չունի. կամ «քաղաքակրթությունների բախում», կամ միջմշակութային հաղորդակցության կանոնների (էթիկայի) ընդունում և իրագործում, որի ելակետը մարդկության ապագայի նկատմամբ պատասխանատվության գիտակցումն է: Հաղորդակցության էթիկայի իմպերատիվները ձևավորվում են հենց հաղորդակցության՝

[146] **Хантингтон С.,** նշված աշխ., էջ 527:

քննարկման, կոնսենսուսի, փոխհամաձայնության, փոխզիջման ընթացքում: «Համաձայն դիսկուրսի էթիկայի,- գրում է Յու. Հաբերմասը,- այս կամ այն նորմը կարող է նշանակալիության հավակնել միայն այն դեպքում, երբ բոլորը, ում հետ այն առնչություն ունի, համաձայնության են գալիս այն բանում, որ այդ նորմն **ուժ** ունի»[147]:

[147] **Хабермас Ю.**, Моральное сознание и коммуникативное действие, СПб, «Наука», с. 104.

2.4. «ՅՈՒՐԱՅԻՆՆԵՐԻ» ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՆՐՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Համաշխարհայնացման և սոցիոմշակութային արդի փոխակերպումների համատեքստում միջմշակութային փոխհարաբերությունների ու հաղորդակցման հիմնախնդիրները ձեռք են բերել տեսական ու գործնական մեծ կարևորություն: Ակնհայտ իրողություն է, որ մեր դարաշրջանը դարձել է մշակույթների կամ լոկալ քաղաքակրթությունների մերձեցման և դիմաբախման դարաշրջան: Թեև այս երևույթը միշտ էլ բնորոշ է եղել մարդկության պատմությանը, բայց մեր օրերում այն առավել ցայտուն է դրսևորվում, քանի որ մարդկությունը հայտնվել է պատմական զարգացման միասնականացման գործընթացի սկզբունքորեն նոր փուլում: Համաշխարհայնացման գործընթացները, տեխնիկայի, տեղեկատվության ու հաղորդակցության նոր ձևերի զարգացումները ստեղծել են այնպիսի իրավիճակ, երբ աշխարհում տեղի ունեցող ամեն մի քիչ թե շատ նշանակալից իրադարձություն հասանելի է բոլորին և դառնում է նրանց ուշադրության առարկան: Կարելի է ասել, որ եկել է մեկ ընդհանրական համաշխարհային մշակութային տարածություն ստեղծելու ժամանակը: Ընդհանրապես, մարդկությունը մշտապես ձգտել է համաշխարհային կարգի հաստատմանը: Մեծ աշխարհակալները, փորձելով նվաճել ողջ աշխարհը, կամա թե ակամա նպաստել են մարդկության միասնականացման, համաշխարհային կարգի ու մշակույթի ստեղծման գործընթացներին: Պետք է նկատել, սակայն, որ միասնական համաշխարհային կարգի, մշակույթի, «յուրայինների» համաշխարհային հանրույթի ստեղծման փորձերը հիմնականում ձախողվել են:

Ժամանակակից աշխարհը ձևավորել է միջմշակութային փոխհարաբերությունների ու փոխներթափանցումների մի համընդհանուր ցանց, ինչը գլխավորապես պայմանավորված է համաշխարհային տնտեսական շուկայի ստեղծման, տեղեկատվական տեխնոլոգիաների տարածման և քաղաքակրթական այլ զարգացումներով: Փաստորեն մշակույթների մերձեցման միտումները դարձել են «տեղեկատվական» հասարակության բնորոշ գծերից մեկը, մի հասարակություն, որն ամբողջովին կարելի է տեղավորել մեկ առանձին հեռուստաէկրանի վրա կամ համացանցում: Ի հավելումն ասվածի՝ գիտելիքն ու տեղեկատվությունը ձեռք են բերել առանձնահատուկ դեր և նշանակություն: Ինչպես նշում է տեղեկատվական հասարակության հայտնի տեսաբան Է. Թոֆլերը, գիտելիքը դարձել է հասարակության կառավարման հիմնական և ամենաբազմակողմանի աղբյուրը: «Այն կարող է կիրառվել պատժելու, պարգևատրելու, համոզելու, անգամ մտափոխելու և թշնամուն դաշնակից դարձնելու նպատակով: …Գիտելիքը նաև ծառայում է հարստության և ուժի բազմապատկմանը»[148]: Գնահատման այս համատեքստում գիտելիքը դարձել է նաև մշակույթների մերձեցման և «յուրայինների» համաշխարհային հանրույթի ձևավորման կարևորագույն գործիք:

Նկատենք, սակայն, որ համաշխարհային մշակույթի և, հետևաբար, «յուրայինների» մեկ ընդհանուր հանրույթի ձևավորումը հանդիպում է մի շարք դժվարությունների, որոնց պատճառները շատ ավելի ակնառու են դառնում մշակույթի և քաղաքակրթության տարբերությունների համեմատական վերլուծության համատեքստում:

---

[148] **Թոֆլեր Է.,** Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ, Եր., «Զանգակ-97», 2006, էջ 80:

Յուրաքանչյուր մարդ ապրում է մեկ միասնական աշխարհում, որն ունի շատ բարդ կառուցվածք: Այդ կառուցվածքի առանձնահատկություններից մեկն այն է, որ մարդը միաժամանակ ապրում է և՛ քաղաքակրթական, և՛ մշակութային տարածություններում: Ավելին՝ նա իր գործողություններով և նպատակահարմար գործունեությամբ թեև մասնակցում է և՛ առաջին, և՛ երկրորդ տարածությունների ձևավորմանը, սակայն մեկ անգամ արդեն ձևավորված այդ տարածությունները, իրենց հերթին, սկսում են ազդել մարդու կենսագործունեության վրա: Խնդրի դժվարությունն այն է, որ միևնույն մարդը միաժամանակ ապրում է մի շարք սոցիոմշակութային տարածություններում՝ երբեմն չնկատելով ու չտարբերակելով դրանց առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Քաղաքակրթությունն ու մշակույթն այնպես են փոխկապակցված, ասես մեկ միասնական ամբողջ լինեն: Այդ իսկ պատճառով մարդու յուրաքանչյուր ջանք կարող է դառնալ մշակույթի ու քաղաքակրթության և՛ զարգացման, և՛ կործանման ազդակ: Մարդու վրա մշակութային տարածության յուրաքանչյուր ազդեցություն, հենց այդ մարդու միջոցով, ազդում է նաև քաղաքակրթության վրա և հակառակը: Իսկ դա նշանակում է, որ մարդու կյանքն այս աշխարհում երկակի է, այն որոշարկվում է այնպիսի հանգամանքներով, որոնք իրենց բնույթով թեև տարբեր են, բայց գործում են միևնույն ժամանակ և միևնույն տեղում: «Աշխարհում մարդու երկակիությունը դրսևորվում է նրանով, որ մշակույթի մեջ և մշակույթի օգնությամբ նա հնարավորություն է ստանում հասնելու Աստծուն, իսկ քաղաքակրթության մեջ նրա առջև բացվում են սատանայի հետ հանդիպելու բազմաթիվ հնարավորություններ՝ անկախ նրանից՝ այդ մարդը հավատացյալ է, թե աթեիստ: Փաստն այն է, որ նրա

գործունեության տրամաբանությունը միշտ ունենում է երկակի արդյունք»[149]: Մարդու կյանքի երկակիությունը դրսևորվում է, օրինակ, մարդու վարքի երկակի չափորոշիչներում մեկը «յուրայինների» համար, մյուսը՝ «օտարների»:

Մարդկային գործունեության մեջ մշակութային և քաղաքակրթական տարածությունների հարուցած երկակիությունը խոչընդոտում է «յուրայինների» համաշխարհային հանրույթի ձևավորմանը: Եթե քաղաքակրթական տարածությունում տեղի են ունենում տնտեսական, ֆինանսական, գիտատեխնիկական և տեղեկատվական ոլորտների միավորման և ինտեգրման համաշխարհային գործընթացներ, ապա մշակութային տարածությունում տարբեր մշակույթների ինտեգրման գործընթացը դուրս է համաշխարհայնացման տրամաբանությունից, ինչը բացատրվում է մշակույթի և քաղաքակրթության տարբերակիչ առանձնահատկություններով:

Քաղաքակրթությունը մարդկանց գոյության և գործառության այն միջոցն է, որն ապահովում է կենսագործունեության նյութատեխնիկական բազիսը՝ գոյության համար անհրաժեշտ միջոցների արտադրությունը: Քաղաքակրթության բովանդակության մեջ ներառված է ամենատարբեր միջոցների, հնարավոր մեխանիզմների, կառույցների, կազմակերպությունների, նորմերի ու կանոնների այն ամբողջությունը, որը ստեղծվում և օգտագործվում է մարդկանց նյութական կարիքների ու պահանջների բավարարման նպատակով[150]:

---

[149] **Исаев В. Д.,** Человек в пространстве цивилизации и культуры. Луганск, «Світлиця», 2003, с. 119.

[150] Տե՛ս **Акопян К. З.,** Пределы глобализации (культура в контексте глобализационных процессов) // Материалы постоянно действующего междисциплинар-

Քաղաքակրթությունն ու մշակույթը, թեև մարդու հոգևոր փորձի, հոգևոր ներունակության իրագործման արդյունք են, բայց քաղաքակրթության դեպքում այդ փորձն ունի խիստ «երկրային» աղբյուրներ, և նրանում համապատասխան ձևերի իրագործման գլխավոր մեխանիզմներն են վերարտադրությունն ու բազմաթողարկումը: Մինչդեռ մշակույթն ընկած է մարդու ֆենոմենը ճանաչելու ու հասկանալու հիմքում: Այլ կերպ ասած՝ մշակույթը մարդու հոգևոր և էկզիստենցիալ ֆենոմենի դրսևորման ձև է: Ոչ ոք չի կարող գոյություն ունենալ որևէ մշակույթից դուրս: Մարդը ծնվում է արդեն որոշակի մշակութային կոնտեքստում, որոշակի մշակութային պայմաններում: Նա իր կյանքն ու գոյությունն իմաստավորում է որոշակի մշակույթի շրջանակում և իր կենսական հիմքերը փնտրում մշակութի մեջ, որը, ի դեպ, ունի ունիվերսալ ու նորմատիվ արժեքային բովանդակություն: Այս իմաստով «աշխարհաքաղաքացիությունը» մարդկության միասնականացման առանցքային գաղափարն է և չի «տեղավորվում» մշակութային տարածության մեջ: Որպես վերացական իդեալ այն անիրագործելի է: Աշխարհաքաղաքացիությունը նույնչափ վտանգավոր է, որքան ծայրահեղ ազգայնականությունը, քանի որ այս կամ այն մեծ ազգի քաղաքականության մեջ կիրառվում է որպես գործիք: Մարդ անհատը չի կարող դուրս լինել որևէ հանրույթից, չի կարող գտնվել ազգությունից և, ուրեմն, մշակույթից դուրս: «Հրաժարվելով մեկից՝ նա անխուսափելիորեն (ակամա, կամ հանգամանքների բերումով, կամ էլ գիտակցված ընտրությամբ) հայտնվում է մեկ ուրիշի մեջ»[151]:

ного семинара Клуба учёных “Глобальный мир”. М., «Институт микроэкономики», 2002, Т. 3, էջ 175:

[151] **Գևորգյան Հ. Ա.,** Եկեղեցին որպես հասարակական հաստատություն և ազգային կյանքը // «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 2002, թիվ 2, էջ 12:

Հաճախ մշակույթ և քաղաքակրթություն հասկացությունները նույնացվում են կամ տարանջատվում են ձևական չափորոշիչներով: Երբեմն որպես նմանօրինակ չափորոշիչ են դիտարկում նյութական և հոգևոր մշակույթները: Այս դեպքում նյութական մշակույթը ներկայացվում է հասարակության արտադրողական ուժերի, արտադրության, նրա կազմակերպման ու ղեկավարման միջոցների զարգացվածությունը բնութագրող առարկաների ու համակարգերի տեսքով: Այսինքն՝ քաղաքակրթությունը դիտարկվում է որպես մարդկանց կենցաղի ու սպասարկման պահանջմունքների բավարարման միջոցների արտադրության ոլորտ: Գործառական առումով մշակույթն ու քաղաքակրթությունն ունեն մի շարք տարբերակիչ առանձնահատկություններ:

- Հասարակական կյանքում մշակույթի առանձնահատուկ գործառույթներից մեկը սոցիալականացումն է, ըստ որի՝ մշակույթի օգնությամբ սոցիալական վարքի առանձնահատկությունները փոխանցվում են սերնդեսերունդ՝ կազմակերպելով մարդկանց և՛ կյանքը, և՛ կենսափորձը, և՛ ազգային ինքնությունը և՛ այլն: Հասարակությունում գործող մշակութային նորմերին հարմարումն ու սոցիալականացումը մարդուն օժտում են ինքնազգացողության, ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններով, որոնց շնորհիվ նա դառնում է հասարակության լիարժեք անդամ, գիտակցում իր տեղն ու դերը հասարակական կապերի ու հարաբերությունների համակարգում: Մշակույթի սոցիալականացնող գործառույթը մարդուն հաղորդակից է դարձնում իր ժողովրդի ավանդական արժեքներին ու կյանքի կազմակերպմանը, նպաստում է ազգային պատկանելիության գիտակցության ձևավորմանը: Մինչդեռ քաղաքակրթությունը

չունի սոցիալականացման էթնոմշակութային գործառույթ: Քաղաքակրթությունը չեզոք է մարդու ազգային և էթնոմշակութային կողմնորոշումների նկատմամբ:

- Մշակույթը կատարում է հասարակության հոգեբանական կայունության ապահովման գործառույթ: Այն հասարակություններում, որտեղ մշակույթը զուրկ է այս գործառույթից, տիրում են անկայունություն և էկզիստենցիալ վակուում: Մինչդեռ այս հարաբերություններում քաղաքակրթությունը չեզոք է և չի ղեկավարվում բարոյական նորմերով ու արժեքներով:
- Մշակույթն ունի ազգային բովանդակություն և, հետևաբար, կատարում է ազգապահպան գործառույթ: Քաղաքակրթությունը չունի ազգային բնույթ և այս առումով ևս չեզոք է[152]:

Ազգային, էթնոմշակութային և բարոյական արժեքների հանդեպ չեզոքության իր հատկանիշներով քաղաքակրթությունը հնարավորություններ է ընձեռում, որպեսզի համաշխարհայնացման արդի գործընթացներում տարբեր մշակույթների ներկայացուցիչներ կարողանան համագործակցել և նույնիսկ մասնակից դառնալ յուրայինների համաշխարհային հանրույթի (ֆինանսատնտեսական, միջազգային հասարակական կազմակերպություններ, համացանցային վիրտուալ խմբեր և այլն) ձևավորմանը: Պետք է նկատել, սակայն, որ մշակութային առումով համաշխարհայնացումը միշտ էլ հետ է մնում քաղաքակրթական գործընթացներից, քանի որ հոգևոր մշակույթը շատ ավելի դժվարությամբ է ենթարկվում ձևայնացման և ինստիտուտացման[153]:

---

[152] Տե՛ս **Самохвалова В. И.,** Культура, цивилизация, глобализация// Материалы постоянно действующего междисциплнарного семинара Клуба учёных “Глобальный мир”. М., «Институт микроэкономики» 2003, Вып. 7(30), էջ 63-67:
[153] Տե՛ս **Акопян К. З.,** նշվ. աշխ., էջ 193:

Սովորույթներն ու հազարամյակներով հղկված և ձևավորված մշակույթները նոր պայմաններին հարմարվելու համար որոշակի շրջան պետք է անցնեն, որը սակայն հարյուրամյակների խնդիր է: «Այնինչ գլոբալ վերափոխումների գործընթացները ժամանակային հապաղումներ չեն կարող հանդուրժել, ավելին՝ դրանց արհեստական դանդաղեցումը կհանգեցնի սոցիալական լայնամասշտաբ աղետների»[154]:

Մշակույթների մերձեցման գործընթացը կարող է ընթանալ երկու ճանապարհով:

Առաջին՝ մշակութային միասնականացումն ընթանում է մեկ կամ կոնկրետ մշակույթի առաջատարության ու գերակայության պայմաններում, երբ մյուս մշակույթներին պարտադրվում են առաջատար մշակույթի զարգացման, վարքի, նորմերի, արժեքային համակարգերի, սոցիալական կարգի կազմակերպման մոդելները: Նման դեպքում անտեսվում և արհամարհվում են ազգային մշակույթների յուրահատկությունները, դրանք մեկնաբանվում են որպես «անցյալի մնացուկներ», նախապաշարումներ, «լուսանցքային-գավառական» ու ազգայնական երևույթներ, որոնք ենթակա են հաղթահարման: Այս ճանապարհը փակուղային է և կարող է կործանարար լինել այն ազգային մշակույթների համար, որոնք անպատրաստ են «ճակատագրի» անողոք հարվածներին: Մշակութային միասնականացման այս մոդելը, որը կարելի է անվանել մշակութային իմպերիալիզմ, կարող է դառնալ ինչպես մշակութային և քաղաքակրթական բախումների ու պատերազմների, այնպես էլ քաղաքական և մշակութային անջատողականության ծավալման և օտարման պատճառ: «Այս

---

[154] **Շահինյան Ս. Մ.,** Գլոբալիզացիայի հակասությունները, Եր., «Զանգակ-97», 2003, էջ 13-14:

աշխարհում մշակույթները ծաղկում ու բարգավաճում են, բայց աշխարհն ինքը, առհասարակ չի խրախուսում մշակութային իմպերիալիզմ կոչվածը, այսինքն՝ չի ստիպում, որ այս կամ այն մշակույթը գերակայի ու տարածվի, լցնի քաղաքական տվյալ միավորը»[155]: Մշակութային մենիշխանության հաստատման միտումներն էլ ավելի խորացան հատկապես արդի համաշխարհայնացման պայմաններում: Համաշխարհայնացումն ինքնին նշանակում է սահմանների հաղթահարում[156]: Այսօր այդ հաղթահարումն ընթանում է արևմտականացման և ամերիկանացման մոդելի շրջանակում: Առաջին հայացքից արևմուտքի կողմից առաջարկված արժեքները, վարքի ձևերն ու նորմերը, կառավարման մեխանիզմներն ու մոդելները կրում են համամարդկային բնույթ, և թվում է, թե դրանք պետք է նպաստեն համամարդկային յուրայինների հանրույթի և մշակույթի ստեղծմանը կամ մշակույթների ինտեգրմանը: Սակայն դրանցում հաշվի առնված չեն առանձին ազգային մշակույթների առանձնահատկություններն ու նրբությունները: Օրինակ՝ հետգաղութային երկրներում կառավարման ազատական-ժողովրդավարական ձևի ներդրումը ոչ միայն հաջողություն չունեցավ, այլև առաջացրեց սոցիոմշակութային խառնաշփոթ ու կոնֆլիկտային իրավիճակներ: Բանն այն է, որ այդ երկրներում կառավարման ավանդական ձևը եղել է միապետությունը, որին բնորոշ էր սոցիալական շերտավորման բրգաձև համակարգը:

---

[155] **Գելներ Է.,** Ազգերը և ազգայնականությունը, Երևան, «Հայաստան», 2003, էջ 22:

[156] Տե՛ս **Келле В. Ж.,** Глобализация с позиции цивилизационного подхода //Материалы постоянно действующего междисциплнарного семинара Клуба учёных “Глобальный мир”. М., «Институт микроэкономики», 2003, вып. 7(30), էջ 36:

Արևելքի և արևմուտքի, հյուսիսի ու հարավի ժողովուրդների ու նրանց մշակույթների, արժեքների, վարքի ձևերի ու ավանդույթների փոխներթափանցումներն այսօր իրականացվում են մի քանի ճանապարհներով, որոնցից առավել տարածվածներն են միգրացիոն տեղաշարժերը, տեղեկատվական տեխնոլոգիաները, համացանցը և այլն: Ի դեպ, զարգացած երկրներից դեպի զարգացող երկրներ ազգաբնակչության տեղաշարժեր չեն նկատվում: Բայց նկատվում են մշակութային զանգվածային ներխուժումներ, ինչը մեծապես վտանգում է տվյալ մշակույթի ինքնությունը: Բանն այն է, որ մշակույթը մի ուժ է, որը հասարակության տարբեր համակարգային ոլորտները կապում է միմյանց, համակարգային օրինաչափությունների լեզուն «թարգմանում» է մարդկանց կենսաշխարհին հասկանալի հասկացություններով:

Այսօր գրեթե ամենուրեք նկատվում են մշակույթների համադրման պասիվ գործընթացներ: Պասիվ, սակայն ստեղծագործական հակազդեցություն կարողացան դրսևորել միայն բուդդայական և կոնֆուցիական մշակույթները: Նրանք, մասնավորապես, կարողացան հմտորեն յուրացնել արևմտյան մշակույթի նորարարական տարրերը՝ կլանելով ու թուլացնելով նրանց քայքայիչ ազդեցությունները: Մշակութային ներթափանցումներին առավել ակտիվորեն հակազդող մեխանիզմներ ունի հատկապես իսլամական մշակույթը: Այն այնքան ուժեղ և ամուր է, որ արևմուտքի տեխնոլոգիական արդիականացման գաղափարն ընդունում է ոչ թե որպես միասնականացման հրավեր, այլ որպես ռազմական մարտահրավեր: Իսլամական մոնոթեիզմը մոնոլիտ է. այստեղ աստվածության գաղափարը միջնորդավորված չէ անտիկ եվրոպական փիլիսոփայության գաղափարնե-

րով: Պատահական չէ, որ այդ մշակույթը չենթարկվեց աշխարհիկ և հոգևոր աշխարհների տարբաժանման: Իսլամական այս պասսիոնարությունը ոչ միայն ագրեսիվության, այլև այլ մշակույթների հետ հարմարվելու անընդունակության պատճառ է, ինչը կարելի է գնահատել ավելի շուտ որպես ողբերգություն, քան մշակույթի արժանիք: Իսլամական մշակույթը ոչ միայն դժվարությամբ է համագոյակցում այլ մշակույթների հետ, այլև չունի այլ համակարգերի մեջ ինտեգրվելու ճկունություն: Դա է պատճառը, որ այդ մշակույթի համար օտարները շատ հստակ սահմանազատված են և դիտարկվում են որպես թշնամի մշակույթներ, ինչի արդյունքում միջմշակութային երկխոսության, համագործակցության ու հաղորդակցության համար մշտապես ծագում են որոշակի դժվարություններ ու արգելքներ: Այս առնչությամբ Ս. Հանթինգթոնը նկատում է, որ 20-րդ դարի վերջերին բռնությունների և պատերազմների երկու երրորդից ավելին տեղի է ունեցել իսլամական և ոչ իսլամական խմբավորումների միջև: «Իսլամի սահմաններն իրոք արյունոտ են, և ներքին տարածությունը՝ նույնպես»[157]:

Մշակութային ներխուժումների նկատմամբ վերաբերմունքի յուրահատուկ պատասխան կարելի է համարել ահաբեկչությունը, ինչը լուրջ խնդիր է համաշխարհային հանրույթի ձևավորման, զարգացման ու կայացման համատեքստում: Ահաբեկչության լայն տարածումը վկայում է, որ տվյալ հասարակությունը հիվանդ է, ինչի պատճառը մշակույթների ու երկրների միջև խաղաղ ու փոխզիջումային համագոյակցության հասնելու ցանկության բացակայությունն է: Պետք է նկատել, սակայն, որ հաղորդակցության ու շփման նման խեղաբեկումների դեմ պայքարը

[157] **Хантингтон С.,** Столкновение Цивилизаций. М., «АСТ», 2006, с. 420.

չպետք է տարվի ռազմական միջոցներով: Մշակույթները խաղաղվում և հանգստանում են ոչ թե այն ժամանակ, երբ «պարտված» են, այլ ընդհակառակը, երբ նրանք ուժեղանում են, երբ սոցիումի կենսաշխարհը հասցնում են ներդաշնակության և ունակ են իրագործելու արդյունավետ սոցիալական ինտեգրացիա: Որպեսզի ձևավորվի ներդաշնակ համաշխարհային հանրույթ, մշակութային նույնականությունը չպետք է պրոբլեմատիկ լինի, նրա վրա չպետք է լինեն միակողմանի ճնշումներ, առավել ևս, որ պարտադրվող արժեքները, որքան էլ ունիվերսալ լինեն, տվյալ մշակույթի համար օտար են: Այսինքն՝ մշակութային արժեքները, խցկվելով օտար միջավայր, միևնույն է, չեն պահպանում իրենց կենսունակությունը, դրանք իմաստազրկվում և կորցնում են իրենց իմաստը, քանի որ կտրվում են հարազատ մշակութային միջավայրից[158]:

Համաշխարհային փորձը վկայում է, որ այս ճանապարհով յուրայինների համաշխարհային հանրույթի ձևավորումը, ի վերջո, ձախողվում է, քանի որ որևէ մշակույթի գերակայության ու մյուսների ճնշման գործընթացների պարագայում անխուսափելի են դառնում միջմշակութային զանազան բախումները, կոնֆլիկտներն ու ահաբեկչությունը:

Երկրորդ՝ մշակույթների մերձեցումն ու միասնականացումն ի սկզբանե ընթանում են բոլոր մշակույթների համահավասարության ու հավասարարժեքության սկզբունքի շրջանակում: Այս դեպքում կարևորվում է այնպիսի միասնության ստեղծումը, որտեղ յուրաքանչյուր մշակույթ կպահպանի իր ինքնատիպությունն ու անկրկնելիությունը, իսկ նրանց միջև փոխհարաբերություններ-

---

[158] Տե՛ս **Тойнби А. Дж.,** Цивилизация перед судом истории, М., «Айрис пресс», 2003, էջ 66:

ը կիրագործվեն երկխոսության միջոցով: Այս սկզբունքը բազմաբևեռ, բազմակենտրոն մշակութային աշխարհի ստեղծման նախապայմաններից մեկն է, որը, սակայն, պահանջում է նոր մտածողություն ու հանդուրժողականություն, ինչն այնքան էլ ընդունելի չէ մշակույթ արտահանող այն երկրների համար, որոնք իրենց մշակույթը համարում են առաջադիմական ու համաշխարհային, իսկ այլոց մշակույթը՝ ցածրորակ ու ժամանակավրեպ: Այս մոտեցումը, որը կարելի է համարել դիսկուրսիվ, պահանջում է մարդկության միասնական աշխատանք ու ջանքեր[159]: Մոտեցման սկզբունքները մշակվում են փիլիսոփայական կոմպարատիվիստիկայի կամ համեմատագիտության շրջանակում: Այն, մասնավորապես, հնարավորություն է տալիս համաշխարհային մշակույթը դիտարկելու մեկ ամբողջության մեջ՝ հաշվի առնելով բազմակերպությունը, ազգային առանձնահատկությունները, տարբերությունները և այլն: Այստեղ առանցքային սկզբունքներից մեկն «ուրիշներին հասկանալու» միջոցով երկխոսության հաստատումն է: Նման երկխոսության հաստատմանը նպաստում են այն վերազգային հանրույթներն ու կազմակերպությունները, որոնց գործունեության արդյունքում ձևավորվել են ինքնության սոցիոմշակութային վերազգային ձևեր ու մետամշակույթներ: «Մոդեռնի ժամանակաշրջանում նույնականացման պրոբլեմը փոխել է իր տեսքն ու բովանդակությունը, և նրա էությունը ոչ այնքան այն է, թե ինչպես ձեռք բերել ընտրյալ ինքնություն և այն ընդունելի դարձնել, որքան այն, թե ինչպիսի ինքնություն ընտրել և ինչպես կարողանալ ժամանակին մեկ այլ

[159] Տե՛ս **Петякщева Н. И.,** Диалог цивилизаций: Восток-Запад// Вопросы философии, М., «Наука», 1993, № 6, էջ 173:

ընտրություն անել, եթե ավելի վաղ ընտրված ինքնությունը կորցրել է իր արժեքը կամ զրկվել իր գայթակղիչ գծերից»[160]:

Մշակութային մերձեցման ժամանակակից գործընթացներում կարևորվում են համակեցության սոցիոմշակութային ինքնության այնպիսի դրսևորումներ, որոնցից են կատարողական, նախաձեռնողական, քննադատական, ներառվելու, պատասխանատու ինքնությունները[161], որոնք նպաստում են համատեղ գործունեության ընթացքում մարդկանց միավորմանը և դառնում «յուրայինների» համաշխարհային հանրույթի ձևավորման նախադրյալներ:

---

[160] **Бауман З.,** Индивидуализированное обшество. М., «Логос», 2002, с. 111.

[161] Տե՛ս **Հարությունյան Է. Ա.,** Համակեցության սոցիոմշակութային ինքնության տարատեսակները// Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ (հոդվածների ժողովածու), Պրակ IV, Երևան, «Լիմուշ», 2008, էջ 14-17:

ՎԵՐՋԱԲԱՆ

Իրականության յուրացման և իմաստավորման հարցում «յուրային» և «օտար» հասկացություններն առանձնահատուկ տեղ են գրավում և ինչ-որ իմաստով համարվում են ժամանակակից սոցիոմշակութային քաղաքականության աշխարհայացքային միջուկը: Համաշխարհայնացման, տեղեկատվական ազատ հոսքերի պայմաններում առաջին հայացքից տեղի են ունենում միասնականացման տարբեր գործընթացներ ժողովուրդների, նրանց մշակույթների միջև. աշխարհը գնում է դեպի միասնականացում: Այդ գործընթացները, թափանցելով հասարակական կյանքի տնտեսական, քաղաքական ու սոցիոմշակութային ոլորտներ, վերափոխում են նաև մարդկանց կենսակերպը, ձևավորում են համագործակցության նոր ձևեր ու նոր հարաբերություններ: Սակայն այդ գործընթացների հետ մեկտեղ նկատելի են նաև բազմաթիվ ապամիասնականացման, սահմանազատման երևույթներ, որոնք դրսևորվում են միջմշակութային, միջկրոնական, ազգամիջյան կոնֆլիկտների, բախումների ու պայքարի ձևերով: Այսինքն՝ «յուրային-օտար» ընդդիմությունը պահպանել է իր «կենսունակությունը» և այժմ էլ կազմում է բազմաթիվ կոնֆլիկտների կառուցվածքային կմախքը:

Այս հանգամանքներից ելնելով, «յուրայինի» և «օտարի» փոխհարաբերությունը սոցիոմշակութային իրականության տարբեր ոլորտներում մի շարք տեսանկյուններից դիտարկելով, կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները:

- «Յուրային-օտար» հակադրությունը գալիս է անհիշելի ժամանակներից: Որոշակի հանրույթի շրջանակում մշակութային նոր խմբի առաջացումը մի գործընթաց է, որտեղ բացահայտ-

վում է, թե ինչն է յուրային շրջապատող աշխարհում, ինչին է պետք հետևել, ինչն է գոյության հիմքը: Միևնույն ժամանակ, մշակութային ինքնորոշումը տեղի է ունենում օտար աշխարհին հակադրվելու միջոցով, աշխարհ, որից պետք է զգուշանալ, և որի հետ շփումը կարող է հանգեցնել չգոյության: Մշակույթներն օրինականացնում են սեփական քաղաքակրթական դիրքորոշումները ոչ միայն ճակատային փաստարկների միջոցով, այլև հակառակ փաստարկներով, որոնք ելնում են Օտարից, Ոչ-նմանից, Ոչ-մարդուց:

«Օտարը» հաճախ նույնացվում է «թշնամու» հետ: Օտարների նկատմամբ թշնամական և ապակառուցողական վերաբերմունքն ունի մի շարք պատճառներ, այդ թվում նաև՝ բնական: Լինելով կենդանական աշխարհի ներկայացուցիչ և միևնույն ժամանակ մշակութային արարած՝ մարդը ենթարկվում է բնական օրինաչափություններին: Ցանկացած համակարգի կենսագործունեության համար անհրաժեշտ էներգիան կլանվում է արտաքին աշխարհի այլ համակարգերի ոչնչացման միջոցով, և այս առումով արտաքին աշխարհի տարբեր համակարգեր կարող են լինել սեփական գոյության սպառնալիք: Այդ սպառնալիքը կարող են լինել ոչ միայն օտար մարդիկ կամ հանրությունը, այլև բնության այս կամ այն երևույթը: Սրա հետ մեկտեղ, ի տարբերություն կենդանիների, մարդիկ ձևավորվել են ոչ միայն կենսաբանական, այլև սոցիոմշակութային էվոլյուցիայի արդյունքում: Վերջինս հանգեցրել է նրան, որ տարբեր հանրույթների ներկայացուցիչները, միմյանցից չտարբերվելով կենսաբանորեն, բավականաչափ տարբերվում են իրենց կուտակած մշակութային «իրականությամբ»: Հենց այդ տարբերություններն են դառնում «յուրայինների» և «օտարների» տարբաժանման հիմքը,

ինչի արդյունքում էլ «օտարները» հաճախ դիտարկվում են որպես ոչնչացման ենթակա թշնամիներ:

- Ազգային ինքնության ձևավորման ու գործառնության համատեքստում «յուրայինի» և «օտարի» փոխհարաբերության յուրահատկություններից են նրա կայունությունը, արժեքայնությունը և բնականությունը, որոնք ենթակա չեն ռեֆլեքսիայի: Համեմատական և համակարգային մոտեցումները թույլ են տալիս ազգային ինքնությունը դիտարկել որպես հարաբերությունների համակարգ, նշել «յուրայինի» և «օտարի» փոխհարաբերություններում այդ կողմերի միջև սահմանի կամ նրանց սահմանազատման կարևորությունը: Ազգային ինքնության փոխկապակցված կառուցվածքային տարրերին բնորոշ են ազգային շահերի և արժեքների խիստ կարևորումը, «օտարի» երկարժեք ընկալումը՝ որպես տարբերվելու և նմանվելու ցանկությունների համադրություն, «յուրայինի և օտարի» խիստ կախվածությունը որոշակի տարածքից և անցյալի մասին պատկերացումների կարևորությունը՝ դրանց վերարտադրության համար, «յուրայինի»՝ որպես սոցիալական աշխարհի կենտրոնի «ավանդական» պատկերումը, լեզվի՝ որպես «յուրայինի» և «օտարի» փոխհարաբերության սահմանի պահպանման համար էական նշանակություն ունեցող բաղադրիչի կարևորումը:

«Յուրայինի» և «օտարի» տարանջատումը ոչ միայն ազգային, այլև տարածաշրջանային ինքնության կառուցարկման մեխանիզմն է:

Լինելով ենթաինքնություն՝ տարածաշրջանային ինքնությունը ենթադրում է «յուրայինների» ընդգրկում «մեգահանրույթի» մեջ: «Ենթաինքնության» բնույթով որոշվում են նրա հիմնական հատկությունները, որոնցից են տարբեր ռեֆերենտ խմբերի առ-

կայությունը, բարձր տարասեռությունը, ներքին և արտաքին գործոններով պայմանավորված դինամիկությունը և համերաշխությունը: Այն հիմնվում է «յուրայիններ-օտարներ» ընդդիմության վրա: Շահերը, հետաքրքրությունները, ժամանակատարածային բաղադրիչները, սոցիալական աշխարհում յուրայինների տեղի և դերի մասին պատկերացումները նպաստում են յուրայինների առավել ինտեգրմանը և «օտարներից» տարբաժանմանը: Տարածաշրջանային ինքնությունը նպաստում է «մեգահանրույթում» և «ենթահանրույթում» կայունության պահպանմանը, բավարարում է պատկանելիության, ինքնուրույնության և պաշտպանվածության պահանջմունքները, ազդում է այն կրողների վարքագծի վրա:

- Միջմշակութային երկխոսություններն ու ինտեգրացիոն գործընթացները դրսևորվել են տարբեր եղանակներով ու ճանապարհներով, այս կամ այն գործոններից կրել են տարաբնույթ փոփոխություններ ու ազդեցություններ: Կարելի է առանձնացնել միասնականացման և երկխոսության երկու մոդել:

Առաջինը կայսերական մոդելն է, որը «երկխոսության» ու ինտեգրացման գործընթացներում ենթադրում է բռնություն, մեկ կենտրոնական մշակույթի գերակայություն և նրա տիրապետության տակ գտնվող մյուս՝ թույլ և փոքր մշակույթների վրա ճնշում:

Երկրորդը միությունների ստեղծման մոդելն է, որի դեպքում ստեղծվում է մի այնպիսի դիսկուրսիվ տարածություն, որտեղ մշակույթներն ազատորեն և իրավահավասար պայմաններում կարող են մերձենալ և մտնել երկխոսությունների ու փոխազդեցությունների մեջ: Այս մոդելի գաղափարական հիմքը հետմոդեռնիստական փիլիսոփայությունն է, որը ժխտում է ամեն տե-

սակ կենտրոնություն ու հեղինակություն և առաջ է քաշում երկխոսությունների նոր արժեքներ:

- Մարդկային կենսագործունեության հիմքում ընկած են մի շարք արժեքաբանական տարբերակիչ գնահատականներ (վտանգավոր և անվտանգ, օգտակար և վնասակար, յուրային և օտար և այլն), որոնք միջմշակութային հաղորդակցության պարագայում դրսևորվում են վերաբերմունք արտահայտող կարծրատիպերի ու կանխադիրքորոշումների տեսքով՝ էական ազդեցություն թողնելով հաղորդակցության սկզբի, իրականացման և արդյունքի վրա: Երբ խոսքը վերաբերում է միջմշակութային հաղորդակցման համատեքստում լեզվամշակույթների համեմատությանը, ապա պետք է նշել, որ լեզվական համակարգի ոչ միայն առանձին միավորները, այլև ողջ համակարգն ունի ազգայինմշակութային մարկերավորում: Այստեղ նշանաբանական սահմանի առկայության ճանաչումն ու ընդունումը հաստատուն են: Միջմշակութային հաղորդակցման մեջ նշանաբանական սահմանը մարկերավորվում է, ընդ որում՝ այդ հաղորդակցման մեջ միջմշակութային հարաբերությունների մասին յուրայինի և օտարի մարկերները բաժանվում են երկու մակարդակների՝

- համահաղորդակցային դիրքորոշումների մակարդակ, որտեղ մարկերները վերաբերում են լեզվին (սեփական և օտար լեզու, մշակույթ),
- կոնցեպտների մակարդակ՝ լեզվի միավորների մարկերներ («յուրայինի» և «օտարի» բառ, անուն, բառի հասկացում, միֆոլոգեմ, էթնոնիմ, վարքի մոդել և այլն):

- Համաշխարհայնացման պայմաններում իրենց առանձնահատուկ նշանակությունն ունեն միգրացիոն տեղաշարժերը: Ընդունող հասարակության և ներգաղթյալների համայնքի հաղոր-

դակցման ու շփումների գործընթացների բնույթը պայմանավորված է մի շարք գործոններով: Դրանցից են մի կողմից՝ տվյալ երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային առանձնահատկություններն ու զարգացումները, մյուս կողմից՝ այն հանգամանքը, որ եկվորի համար նոր մշակույթն ամբողջությամբ օտար է, և նա այդ մշակութային օրինակի ուսումնասիրության ու յուրացման կարիքն ունի: Եթե այդ գործընթացը հաջող է իրականացվում, ապա նա կարողանում է ինտեգրվել այդ հասարակությանը, իսկ դժվարությունների չհաղթահարման դեպքում առաջ են գալիս մեկուսացած, ներփակված, լուսանցքային համայնքները, որոնք փորձում են համագոյակցել «յուրայինների» հետ:

Ներգաղթյալների համայնքների ինտեգրացիոն և դեզինտեգրացիոն գործընթացները երկակի են: Դա առաջին հերթին ընդունող պետության իմիգրացիոն քաղաքականությունն է, ինչպես նաև էթնոռասայական խտրականությունն ու նախատրամադրվածությունները, որոնք դրսևորվում են հիմնական բնակչության կողմից ներգաղթյալների հանդեպ: Դրանց ազդեցությունը հաղթահարվում է մեծագույն դժվարություններով, քանի որ և՛ այն, և՛ այս ամրագրված են թե՛ ներգաղթյալների համայնքի, թե՛ ընդունող հասարակության մշակութային գենոտիպում:

Միգրանտների հետ կապված խնդիրը վերաբերում է մշակութային հիբրիդների, բազմամշակութային համակարգի ստեղծման գործընթացին, որն անխուսափելի է «նոր» մարդկանց հոսքի արդյունքում: Մշակութային փոխներթափանցումները կարող են հարստացնել ու վերաիմաստավորել ինչպես եվրոպական, այնպես էլ այլ քաղաքակրթությունները և դրանցում բացահայտել նոր ստեղծագործական ներուժ: Սակայն սեփա-

կան մշակույթի եզակիությունից կամ, այլ կերպ ասած, «յուրայինների» ինքնատիպ արժեքներից հրաժարվելու և այլ մշակույթին փոխհատուցելու սահմանները բավականին խոցելի են: Որպեսզի բնիկների և նորեկների կամ «յուրայինների» ու «օտարների» համատեղ կեցությունը չդառնա մշակութային ժառանգության կորստի պատճառ, այն պետք է հիմնվի քաղաքակրթական «հասարակական պայմանագրի» սկզբունքների փոխադարձ հարգանքի վրա:

- «Յուրայիններ-օտարներ» փոխհարաբերությունը դրսևորվում է միջմշակութային հաղորդակցման համակարգում, ինչը ժամանակակից տեղեկատվական աշխարհում անհրաժեշտաբար դարձել է համատարած և համընդգրկուն երևույթ: Այս գործընթացի համատեքստում «յուրայիններ-օտարներ» փոխհարաբերությունը, ի տարբերություն նախորդ դարաշրջանների, առաջ է բերել նոր խնդիրներ ու նոր մարտահրավերներ, որոնք վերաբերում են հաղորդակցային էթիկային: Այստեղ փոխհարաբերությունների երկխոսային, համագործակցային, փոխըմբռնողական, թշնամական, անհանդուրժողական կամ հանդուրժողական բնույթը պայմանավորվում է կողմերի միջև արդարության ու հավասարության սկզբունքների կիրառման բնույթով:

Համաշխարհայնացման պայմաններում կարևորվում է մարդկության միասնականացման կամ «յուրայինների» համաշխարհային հանրույթի ձևավորման գաղափարի հնարավորությունը: Մարդկային գործունեության մեջ մշակութային և քաղաքակրթական տարածությունների հարուցած երկակիությունը խոչընդոտում է յուրայինների համաշխարհային հանրույթի ձևավորմանը: Եթե քաղաքակրթական տարածությունում տեղի են ունենում տնտեսական, ֆինանսական, գիտատեխնիկական և

տեղեկատվական ոլորտների միավորման և ինտեգրման համաշխարհային գործընթացներ, ապա մշակութային տարածությունում տարբեր մշակույթների ինտեգրման գործընթացը դուրս է համաշխարհայնացման տրամաբանությունից, ինչը բացատրվում է մշակույթի և քաղաքակրթության տարբերակիչ առանձնահատկություններով:

Քաղաքակրթությունն ու մշակույթը թեև մարդու հոգևոր փորձի, հոգևոր ներունակության իրագործման արդյունք են, բայց քաղաքակրթության դեպքում այդ փորձն ունի խիստ «երկրային» աղբյուրներ, և նրանում համապատասխան ձևերի իրագործման գլխավոր մեխանիզմներն են վերարտադրությունն ու բազմաթողարկումը, մինչդեռ մշակույթն ընկած է մարդու ֆենոմենը ճանաչելու ու հասկանալու հիմքում: Այլ կերպ ասած՝ մշակույթը մարդու հոգևոր և էկզիստենցիալ ֆենոմենի դրսևորման ձև է:

Մշակույթների մերձեցման գործընթացները կարող են ընթանալ երկու ուղղությամբ:

Առաջին՝ մշակութային միասնականացումն ընթանում է մեկ կոնկրետ մշակույթի առաջատարության ու գերակայության պայմաններում, իսկ մյուս մշակույթներին պարտադրվում են առաջատար մշակույթի զարգացման, վարքի, նորմերի, արժեքային համակարգերի, սոցիալական կարգի կազմակերպման մոդելները:

Երկրորդ՝ մշակույթների մերձեցումն ու միասնականացումն ընթանում են բոլոր մշակույթների համահավասարության ու հավասարարժեքության սկզբունքի շրջանակում: Այս դեպքում կարևորվում է այնպիսի միասնության ստեղծումը, որտեղ յուրաքանչյուր մշակույթ կպահպանի իր ինքնատիպությունն ու ան-

կրկնելիությունը, իսկ նրանց միջև փոխհարաբերությունները կիրագործվեն երկխոսության միջոցով: Այս սկզբունքը բազմաբևեռ, բազմակենտրոն մշակութային աշխարհի ստեղծման նախապայմաններից մեկն է, որը, սակայն, պահանջում է նոր մտածողություն ու հանդուրժողականության սկզբունքի կարևորում:

Аветисян Казар Альбертович

СВОЙ-ЧУЖОЙ: СОЦИОКУЛЬТУРНЫЙ КОНТЕКСТ

РЕЗЮМЕ

Глобальные процессы, имеющие место в современном мире, довели до нового качественного уровня межкультурные взаимодействия и взаимопроникновения, возбудив тем самым ряд социокультурных, политических и цивилизационных вызовов. В данном контексте новое теоретическое и практическое звучание получила проблема взаимоотношения «своего» и «чужого».

Взаимоотношение «своего» и «чужого» является одной из древнейших исторических форм разъединения социальной системы, которая служит основой деления на знакомое и незнакомое, обычное и необычное, дружеское и враждебное, дальнее и ближнее. В данном делении «чужой» воспринимался как другой, непонятный, иногда даже враждебный, и именно подобными восприятиями и оценками обусловлены конфликты, столкновения, сближения и сотрудничество «своего» и «чужого». Несмотря на то, что деление на «своего» и «чужого» возникло еще на заре человеческой истории, новые формы и смыслы, возникшие в нем, позволяют утверждать, что в рамках философии культуры проблема приобрела новый смысл, значимость и актуальность.

Границы «своего» определяются посредством осмысления границ «чужого», и наоборот. В этом смысле в процессе идентификации двойственность «свой-чужой» продолжает быть востребованной и в современном мире, так как она является и осно-

вой, и критерием, и механизмом любой идентичности. Глобализация, расширяя социокультурное пространство идентификации «своих» и сближения с «чужими», создает опасность отчуждения от своего и освоения, заимствования от «чужого», возможно чего-то отрицательного, что становится причиной не только новой социальной напряженности, но и новых, неоднозначных, разнообразных горизонтов самоопределения.

Актуальность проблемы объясняется еще и тем, что в современном мире растут тенденции глобализации, интеграции поликультурного мира, плюрализма мнений и, соответственно, возникает необходимость изучения проявления отношений «свой-чужой». Процессы интеграции и глобализации уже давно проникли в различные сферы жизнедеятельности людей, вследствие чего постепенно исчезают также традиционные границы между «своими» и «чужими», тем самым создавая проблему сохранения и трансформации национальной культуры и традиций и лишний раз доказывая, что проблема взаимоотношения «свой-чужой» имеет как теоретическое, так и практическое звучание.

Протекающие в современном мире цивилизационные, культурные и политические противостояния и противоборства стали причиной массовых миграционных перемещений, в результате чего между местными и новоприбывшими возникают разнообразные и сложные взаимоотношения, межкультурные взаимопроникновения, которые способствуют формированию мозаичных обществ или культурных гибридов. В данном контексте несовместимость свободы и безопасности, невозможность их идеальной гармонии, делает проблему конструирования

идентичности современного человека невозможным процессом, в результате чего «потеря корней», «отказ от истоков» и другие подобные выражения постепенно сменяются аллегорией «поднять и опустить якорь».

В каком-то смысле границы между «своим» и «чужим» стираются, так как в различных социальных группах и сообществах распространяются одинаковые символы и критерии. Надо заметить, что процесс сближения и объединения сталкивается с препятствиями, одной из причин которых является двойственность, возникшая в системе цивилизационных и культурных пространств. Если в цивилизационном пространстве происходят процессы сближения и объединения, то в культурном пространстве на первый план выходят столкновения и конфликты.

Avetisyan Ghazar Albert

INSIDER-OUTSIDER: SOCIAL-CULTURAL CONTEXT

RESUME

Global processes in progress in contemporary world have raised intercultural relations and mutual cultural penetrations to a new level and thus have created a number of social-cultural, political and civilizational challenges. The issue of relations of "the insider" and "the outsider" has acquired a new theoretical and practical emphasis in this context.

The relation of "the insider" and "the outsider" is historically the oldest form of social delimitation, which serves as bases for distinguishing the ordinary and the strange, the usual and the unusual, the friend and the enemy, as well as the remote and the local. In this delimitation the "stranger" was taken to be the different, the other, the incomprehensible and even the enemy and this comprehension of the stranger has conditioned conflicts, collisions, rapprochements and cooperations. Although "the insider" and "the outsider" have been demarcated at the dawn of human history, emergence of new forms and meanings of this delimitation allows one to claim that the issue has acquired a new meaning and modernity in the context of philosophy of culture.

The limits of "the insider" is defined through comprehension of limits of "the outsider". The vice versa is also true. In this sense the "insider-outsider" duality, being the basis, the criterion and the mechanism of any identity, continues to be demanded in the context of identification in contemporary world. The globalization increases

the social-cultural space for identification of the “insider” and takes it closer to the once “outsider” and thus creates a risk for alienation from “the insider” and adoption of the negative from “the outsider”. This in its turn creates not only new social tension, but also new ambiguous, diverse horizons for self-determination.

The modernity of the issue is explained also by the circumstance that trends of globalization, integration, establishment of multicultural and pluralism gradually grow more intensive and thus need for investigation of “insider-outsider” relations emerges. Processes of integration and globalization have penetrated into various spheres of human activities and as a result traditional limits between “the insider” and “the outsider” gradually disappear raising issues of preservation and transformation of national culture and traditions. This comes to serve as another evidence that the issue of “insider-outsider” relations has both theoretical and practical importance.

Contemporary civilizational, cultural and political contrasts and conflicts have triggered massive migrations that create diverse and complex relations between locals and new-comers, between “insiders” and “outsiders”. They also have triggered mutual penetrations of cultures. These in their turn contribute to formation of collage societies and cultural hybrids. In this context incompatibility of freedom and security together with impossibility of ideal harmony convert the task of identity building of the contemporary person into an unceasing process. As a result expressions like “loss of roots”, “denial of origins” etc. are gradually replaced by the metaphor of “dropping and lifting the anchor”.

In one sense the limits of “the insider” and “the outsider” are erased, as uniform symbols and norms are used in various social groups and communities. One must first note that the process of rapprochement and unification of “insiders” and “outsiders” faces obstacles caused in part by duality of human activities produced by civilizational and cultural spaces. While in civilizational space processes of rapprochement and unification take place, in cultural space there are collisions and conflicts.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գելներ Է.,** Ազգերը և ազգայնականությունը, Երևան, «Հայաստան», 2003, 172 էջ:

2. **Գևորգյան Հ. Ա.,** Եկեղեցին որպես հասարակական հաստատություն և ազգային կյանքը // Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 2002, թիվ 2 (107), էջ 3-18:

3. **Զաքարյան Ս.,** Հայկական էպոսի հերոսների վարքագիծը ազգային ինքնության համատեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2015, թիվ 2 (17), էջ 3-16:

4. **Զէքիեան Պ. Լ.,** Հայ ինքնութիւն. Ինքնության հարցեր: Տարեգիրք, Երևան, «Զանգակ-97», 2002, էջ 32-42:

5. **Թոֆլեր Է.,** Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ, Եր., «Զանգակ-97», 2006, 232 էջ:

6. **Հարությունյան Է. Ա.,** Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Երևան, «Մակմիլան-Արմենիա», 2004, 152 էջ:

7. **Հարությունյան Է. Ա.,** Համակեցության սոցիոմշակութային ինքնության տարատեսակները// Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ (հոդվածների ժողովածու), Պրակ IV, Երևան, «Լիմուշ», 2008, էջ 3-17:

8. **Հարությունյան Է. Ա.,** Համատեքստի հերթափոխը. մարդկային կեցության սոցիոմշակութային այլատեսակությունների ապականումը, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Երևան, 2016, թիվ 1 (19), էջ 3-17:

9. **Հարությունյան Է. Ա.,** Սոցիոմշակութային փոխակերպումներ և նույնականության ճգնաժամ// Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ (հոդվածների ժողովածու), Պրակ III, Երևան, «Ասողիկ», 2007, էջ 3-13:

10. **Հարությունյան Է. Ա.,** Վարքի սոցիոմշակութային շարժառիթների մարդաբանական բնութագիրը // Անցումային հասարակու-

թյուն. սոցիոմշակութային փոխակերպումներ (հոդվածների ժողովածու), Պրակ V, Երևան, «Լիմուշ», 2008, էջ 3-13:

11. **Հարությունյան Է. Ա.,** Քաղաքակրթության սոցիալական ու մարդկային որակների համատեղման հիմնահարցը // Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ (հոդվածների ժողովածու), Պրակ I, Երևան, «Նոյյան տապան», 2002, էջ 52-67:

12. **Հարությունյան Մ. Ա.,** Իշխանության լեգիտիմության ժամանակակից տեսություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., «Նաիրի», 2016, 224 էջ:

13. **Ղարագուլյան Ա. Լ.,** Փոխակերպվող հասարակություն և սոցիոմշակութային այլընտրանքներ, Երևան, «Լիմուշ», 2009, 112 էջ:

14. **Միրզոյան Վ.,** Կառավարման փիլիսոփայություն, Երևան, «Իրավունք», 2010, 384 էջ:

15. **Մկրտչյան Ն. Ժ.,** Ինքնության արդիականացման հիմնահարցը ինքնության կոնֆլիկտների համատեքստում// Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ (հոդվածների ժողովածու), Պրակ III, Երևան, «Ասողիկ», 2007, էջ 49-57:

16. **Շահինյան Ս. Մ.,** Գլոբալիզացիայի հակասությունները, Երևան, «Զանգակ-97», 2003, 51 էջ:

17. **Սարգսյան Ա. Հ.,** Մշակույթի տեսություն// Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տնտեսագետ», 2003, 176 էջ:

18. **Սողոմոնյան Գ. Ա.,** Ազգային ինքնություն և սոցիոմշակութային անվտանգություն, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Երևան, 2013, թիվ 141 (4), էջ 14-26:

19. **Սողոմոնյան Գ. Ա.,** Ժամանակակից մարդաբանական ճգնաժամի դրսևորման առանձնահատկությունները, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Երևան, 2016, թիվ 1 (19), էջ 18-33:

20. **Սողոմոնյան Գ. Ա.,** Սոցիոմշակութային իմպերատիվների բնույթը արդի քաղաքական շուկայում // Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ (հոդվածների ժողովածու), Պրակ I, Երևան, «Նոյյան տապան», 2002, էջ 68-87:

21. **Акопян К. З.,** Пределы глобализации(культура в контексте глобализационных процесов) // Материалы постоянно действующего междисциплнарного семинара Клуба учёных “Глобальный мир”. М., «Институт микроэкономики» 2002. Т.3,

22. **Андерсон Б.**, Воображаемые сообщества. Размышления об истоках и распространении национализма, М., «Канон-пресс-Ц», 2001. - 288 с.

23. **Ачкасов В. А.,**Политическое мифотворчество как способ выражения региональных интересов// Журнал социологии и социальной антропологии, СПб, «Интерсоцис», 2002, Т.5, № 3, с. 96-107.

24. **Барт Р.,** Система моды: статьи по семиотике культуры, М., изд.-во им. «Собашниковых», 2003, -512 с.

25. **Бартминьский Е.**, Базовые стереотипы и их профилирование//Стереотипы в языке, коммуникации и культуре: сб. статей/ сост. и отв. Ред. Л. Л. Федорова. М.: «РГГУ», 2009, с. 11-21.

26. **Бауман З.** Индивидуализированное обшество. М., «Логос», 2002, - 390 с.

27. **Бауман З**. Прощание с миром своих и чужих, М., «Вокруг Света», 2011, № 12, с.-205-214.

28. **Бауэр О.**, Национальный вопрос и социал-демократия Нации и национализм. М., «Праксис» 2002, с. 52-120.

29. **Бек У.,** Что такое глобализация, М., «Прогресс-Традиция», 2001,-304 с.

30. **Бжезинский З.,** Великая шахматная доска. М., «Международные отношения», 1998,-256 с.

31. **Бор Н.**, Избранные научные труды. М., 1971. Т. 2.

32. **Бройн Дж.**, Подходы к исследованию национализма// Нации и национализм, М., «Праксис», 2002, с.201-235.

33. **Бромлей Ю., Подольный Р.,** Человечество-это народы. М., «Мысль», 1990.-392 с.

34. **Вальденфельс Б.,** Повседневность как плавильный тигль рациональности//Социологос: Социология, антропология, метафизика, М., «Прогресс», 1991, вып. 1, с. 39-50.

35. **Вердери К.,** Куда идут «нация» и «национализм»?//Нации и национализм. М., «Праксис» 2002, с. 297-307.

36. **Вичев В.,** Мораль и социальная психика. М., «Прогресс», 1978,-357 с.

37. **Гаджиев К.С.,** Политическая идеология: концептуальный аспект. // Вопросы философии. М., «Наука», 1998. № 12, с. 3-20.

38. **Гидденс Э.,** Ускользающий мир: как глобализация меняет нашу жизнь., М., «Весь мир», 2004. -120 с.

39. **Гвардини Р.**, Конец нового времени//Вопросы философии, М., «Наука», 1990, № 4, с. 127-163.

40. **Губман Б.,** Современная философия культуры. М., «Росспен», 2005.- 536 с.

41. **Делягин М. Г.,** Мировой кризис: Общая теория глобализации. М., «Инфра-М», 2003, -768 с.

42. **Демирчян М. А.,** Диалог культур в современных условиях. Ер., «Издательство ЕГУ», 2015, -108 с.

43. **Донцов А.И., Стефаненко Т.Г., Уталиева Ж.Т.,** Язык как фактор этнической идентичности // Вопросы нсихологии. 1997. №4, с. 75-86.

44. **Дробижева Л.,** Возможность либерального этнонационализма//Реальность этнических мифов. М., «Гендальф», 2000, с. 77-94.

45. **Енина Л. В.,** Оппозиция «провинция-столица» в журналистском тексте// философские и лингвокультурологические проблемы толерантности: коллективная моногр. М., «ОЛМА-Пресс», 2005, с. 221-232.

46. **Желицки Б. Й.,** Центральноевропейская идентичность и Венгрия// Международный исторический журнал. М., 2000. № 11, 59-79.

47. **Задорожнюк Э. Г.,** Политические процессы в Центральной Европе и становление новой региональной идентичности//Международный исторический журнал. 2000, № 11, с. 139-161.

48. **Зиммел Г.,** Избранное, М., «Юристь», 1996, Т. 1, -671 с.

49. **Ильин И. П.,** Постмодернизм от истоков до конца столетия; эволюция научного мифа. М., «Интрада», 1998.-256 с.

50. **Ильин И.,** Постмодернизм, Словарь терминов, М., «Интрада», 2001,-384 с.

51. **Исаев В. Д.,** Человек в пространстве цивилизации и культуры. Луганск, «Світлиця», 2003, с.119.

52. **Карасик В. И., Дмитриева О., А.,** Лингвокультурный типаж: к определению понятия//Аксиологическая лингвистика: лингвокультурные типажи: Сб. науч. тр./Под ред. В.И.Карасика. Волгоград, «Парадигма», 2005, -310 с.

53. **Карасик В. И.,** Языковой круг; личность, концепты, дискурс, Волгоград, «Перемена», 2002, -477 с.

54. **Кашкин В. Б.,** Введение в теорию коммуникации, Воронеж, «ВГУ», 2003, - 175 с.

55. **Кашкин В. Б.**, Маркеры своего и чужого в межкультурном диалоге//Взаимопонимание в диалоге культур: условия успешности: коллективная монография. Воронеж: «ВГУ», 2004, ч. 2, с.49-62.

56. **Каневский Л.**, Каннибализм. М., «крон-пресс», 1998.-544 с.

57. **Кеглер Г. Г.,** Этика после постмодернизма//Вопросы философии, М., «Наука», 2006, № 3, с. 111-117.

58. **Келле В. Ж.,** Глобализация с позиции цивилизационного подхода //Материалы постоянно действующего междисциплнарного семинара Клуба учёных “Глобальный мир”. М., «Институт микроэкономики» 2003. Вып. 7(30), с. 32-44.

59. **Климова С. Г.**, Критерии определения групп «мы» и «они»//Социологические Исследования. М., «Наука», 2002. № 11, с. 83-95.

60. **Колесников А. С.**, Философская компаративистика в диалоге культур// Философские науки, М., 2004, № 11, с. 84-102.

61. **Конрад Н. И.,** Запад и Восток. М., «Юсполитиздат» 1972.-1952, с.35-58.

62. **Коровицына Н. В.,** Регион догоняющей модернизации: коммунистический и либерально-демократический опыт// Международный исторический журнал, 2000, № 11, с. 35-59.

63. **Косач Г.,** Региональное «гражданское полиэтническое сообщество» //Реальность этнических мифов. М., «Гендельф», 2000, с. 53-76.

64. **Кууси П.**, Этот человеческий мир. М., «Прогресс», 1988, -368 с.

65. **Левин З. И.,** Менталитет Диаспоры, М., «Крафт+», 2001, -172 с.

66. **Леви-Строс К.,** Первобытное мышление, «Республика», 1994, -384 с.

67. **Лотман Ю.М.,** Внутри мыслящих миров. Человек-текст-семиосфера-история, М., «Языки русской культуры», 1996, - 464 с.

68. **Лурье С.В.** Национализм, этничность, культура // Общественные науки и современность. М., «Наука»,1999. № 4, с. 101-111.

69. **Лысак И.В.,** Человек – разрушитель: деструктивная деятельность человека как социокультурный феномен. Таганрог, «ТРТУ», 1999 -55 с.

70. **Льоренте Х. А.,** Критическая история испанской инквизиции. в 2-х т. М., «Соцэкгиз», 1936 Т.1.-730 с.

71. **Маршакова-Шайкевич И. В.,** Анализ вклада Росии в развитие социальных и гуманитарных наук // Вопросы философии. М., Наука, 1998, № 1, с 66-78.

72. **Мацумото Д.,** Психология и культура, СПб, «Прайм-Еврознак», 2002, - 416 с.

73. **Межуев Б.В.**, Понятие “национальный интерес” в российской общественно-политической мысли// Политическая наука в россии: интелектуальный поиск и реальность. Хрестоматия М., «Полис», 2000, с. 441-488.

74. **Межуев В.М.** Ценностьи современности в контексте модернизации и глобализации // Материалы постоянно действующего междисциплнарного семинара Клуба учёных “Глобальный мир”. М., «Институт микроэкономики» 2001. Вып. 11, с. 3-16.

75. **Массимо Д‘Алема.,** Меркель представляет «эгоистичную Европу» http://ru.euronews.com/2012/04/12/d-alema-merkel-represents-a-selfish-europe/

76. **Миклухо-Маклай Н.Н.**, Собр. соч. в 5 т. М., «Л »., 1950. Т.2. -637 с.

77. **Назаретян А.П.,** Историческая эволюция морали: прогресс или регресс? // Вопросы философии, М., «Наука», 1992, № 3, с. 82-94.

78. **Никифорова Е.,** Граница как фактор формирования этнической общности // Кочующие границы / Под ред. О.Бредниковой, В.Воронкова, СПб., «ЦНСИ», 1999, вып. 7, с. 44-49.

79. **Петякщева Н. И.,** Диалог цивилизаций: Восток-Запад// Вопросы философии, М., «Наука», 1993, № 6, с. 173-176.

80. **Пивоев В. М.,** «Свое» и «чужое» в этнической и национальной культре//«Свое» и «чужое» в культуре, Петрозаводск, «ПетрГУ», 1998, с. 6-18.

81. **Полосин В.С.,** Миф. Религия. Государство. М., «Ладомир», 1999,-440 с.

82. **Поршнев Б. Ф.**, Социальная психология и история. М., «Наука», 1966,- 213 с.

83. **Рябов О.В.,** Национальная идентичность: гендерный аспект, М., «Макет», 2000,-245 с.

84. **Прайс М.,** Телевидение, телекоммуникации и переходный период: право, общество и национальная идентичность. **М**., Изд-во Моск. ун-та, 2000, -336с.

85. **Садохин А. П.,** Межкультурная коммуникация, М., «Альфа М», «ИНФРА-М», 2008, -288 с.

86. **Самохвалова В. И.,** Культура, цижилизация, глобализация// Материалы постоянно действующего междисциплнарного семинара Клуба учёных "Глобальный мир". М., «Институт микроэкономики» 2003. Вып. 7(30), с. 57-71.

87. **Семенов Ю. И.,** На заре человеческой истории, М., «Мысль», 1989, -318 с. с.

88. **Скрипник А.П.,** Моральное зло в истории этики и культуры. М., «политиздат», 1992, -351 с.

89. **Смирнягин Л. В.,** О региональной идентичности//Вопросы экономической и политической географии зарубежных стран, Москва-Смоленск, «Ойкумена» Вып. 17, 2007, с. 21-49.

90. **Смит Э.Д.,** Национализм и модернизм: критический обзор современных теорий нации и национализма. М., «Праксис», 2004, -464 с.

91. **Степанов Ю. С.,** Константы: словарь русской культуры. М., «Академический проект», 2001, -991 с.

92. **Тишков В.А.**, Очерки теории и политики этничности в России. М., «Русский мир», 1997, -532 с.

93. **Тишков В.А.,** Теория и практика мультикультурализма. / Мультикультурализм и трансформация постсоветских обществ. Под ред. В.С. Малахова, В.А. Тишкова., Ин-т этнологии и антропологии РАН, М., 2002. -350 с.

94. **Тихонова Н.А.,** Стереотипы в отношении гастрономии как маркеры культурной идентичности//Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение .Вопросы теории и практики,Тамбов, «Грамота», 2011, № 6(12), в 3-х ч., ч.3 с. 183-185.

95. **Тойнби А. Дж.,** Постижение истории. М., «Прогресс», 1991, - 736 с.

96. **Тойнби А. Дж.,** Цивилизация перед судом истории, М., «Айрис пресс», 2003, - 592 с.

97. **Туровский Р.,** Региональная идентичность в современной России//Российское общество: становление демократических ценностьей? М., «Гендельф», 1999, с. 87-136.

98. **Федотов Г. П.**, Судьба Империй // Федотов Г.П. Судьба и грехи России. Избр. статьи по философии русской истории и культуры: В 2 т. СПб., «София», 1992. Т. 2, - 352 с.

99. **Филинский А.А.,** Критический анализ политического дискурса предвиборных компаний, (диссертация на соискание ученой степени кандидата филологических наук), Тверь, Тверской гос. ун-т, 2002, -144 с.

100. **Фукуяма Ф.**, Доверие, М., «Ермак», 2004, -730 с.

101. **Хабермас Ю.**, Моральное сознание и коммуникативное действие, СПб, «Наука», - 384 с.

102. **Хабермас Ю.**, Модерн-незавершенный проект//Политические работы, М., «Праксис» 2005. с. 7-31.

103. **Хабермас Ю.,** Постнациональная констелляция и будущее демократии// Политические работы, М., Праксис, 2005, с. 269-340.

104. **Хабермас Ю**., Учиться на опыте катастроф? Диагностический взгляд на “краткий” XX век// Политические работы, М., Праксис, 2005 с. 209-234:

105. **Хантингтон С.**, Кто мы? М., «Транзиткнига», 2004, -635 с.

106. **Хантингтон С.,** Столкновение Цивилизаций. М., «АСТ», 2006, -571 с.

107. **Хобсбаум Э. Дж.,** Принцип этнической принадлежности и национализм в современной Европе // Нации и национализм. М., «Праксис» 2002, с. 332-346.

108. **Хоружий С. С.,**Человек и его три дольных удела. Новая антропология на базе древнего опыта// Вопросы философии, М., «Наука», 2003, № 1, с. 38-62.

109. **Хотинец В. Ю.** О содержании и соотношении понятий этническая самоидентификация и этническое самосознание//Социологические Исследования. М., «Импакт-фактор», 1999. № 9.

110. **Цивьян Т. В.,** Взгляд на себя через посредника: «Себя, как в зеркале я вижу»// Семиотические путешествия, СПб, «Иван Лимбах», 2001, с. 9-13.

111. **Шипилов А. В.,** «Свои», «чужие» и «другие». От античности до современности \\ Социологические исследования. М., Наука, 2006, № 5, с. 103-112.

112. **Шнирельман В.,** Ценность прошлого: этноцентристские исторические мифы, идентичность и этнополитика// Реальность этнических мифов. М., «Гендальф», 2000. с. 12-33.

113. **Штомпка П.**, Социология социальных изменений, М., «Аспект-Пресс», 1996 -415 с.

114. **Шютц А.**, Смысловая структура повседневного мира (очерки по феноменологической социологии), М., «Обшественное мнение», 2003, -336 с.

115. **Эко У.,** Пять эссе на тему этики. С-П., «Симпозиум», 2005, -158 с.

116. **Якимец К. И.,** Свое и Чужое//Вапросы Философии. М., «Наука», 2003, № 11, с. 20-42.

117. **Яковец Ю.В.,** Глобализация и взаимодействие цивилизаций. М., Экономика, 2003, -441 с.

118. **Якимович А. К.**, «Свой-чужой» в системах культуры// Вопросы Философии. М., «Наука», 2003, № 4. с. 48-60.

119. **Lippmann W.,** Public Opinion, New York, Harcourt, Brace, 1992, 355 pp.

120. **Hobsbawm E.,** Language, Culture, and National Identity.//Social Research. 1996, Vol. 63, № 4, 1065-1080pp.

121. **Inglehart R.,**Culture shift in advanced industrial society. princeton (N.J.), 1990, 484pp.

122. **Zinn H.**, A Peoples History of the United States. 1492 Present. NewYork, 1995.-622 pp.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1. «Յուրայինը» և «օտարը» սոցիոմշակութային իրականության կառուցարկման համատեքստում
1.1. «Յուրայինի» և «օտարի» տարբերակման սոցիոմշակութային հիմունքները 6
1.2. «Յուրային-օտար» տարանջատումը որպես սոցիոմշակութային ինքնության կառուցարկման մեխանիզմ 34
1.3. «Յուրայինը» և «օտարը» միջմշակութային երկխոսության համատեքստում 64
1.4. «Յուրայինի» և «օտարի» տարբերակման սեմիոտիկական առանձնահատկությունները 84

Գլուխ 2. «Յուրայինը» և «օտարը» համաշխարհայնացման գործընթացների համատեքստում
2.1. «Յուրայինը» և «օտարը» միգրացիոն գործընթացներում 102
2.2. «Յուրայինը» և «օտարը» բազմամշակութային հասարակության ձևաչափում 120
2.3. «Յուրայինի» և «օտարի» համագոյակցման սոցիոմշակութային գործոնները 135
2.4. «Յուրայինների» համաշխարհային հանրույթի ձևավորման հիմնախնդիրը 153

Վերջաբան 167
Резюме 176
Resume 179
Գրականություն 182

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱԶԱՐ ԱԼԲԵՐՏԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՅՈՒՐԱՅԻՆ-ՕՏԱՐ. ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Հ. Ասլանյանի

Տպագրված է «Time to Print» օպերատիվ տպագրությունների սրահում:
ք. Երևան, Խանջյան 15/55

Ստորագրված է տպագրության՝ 31.05.2019:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 12.125:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2019
publishing.ysu.am